

ՄԱՐԶԻԿ

ՀԱՅՈՒ

السنة الثالثة والاربعون - Vol. XXXXIII N° 431 - العدد ٤٣١ - 43-ՀԴ ՏԱՐԻ ԹԻՒ 431

مارزيك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومتنمن بيروت

marzig
SPORTS MAGAZINE

Հ.Ս.Ը.Ս.
ՊԱՀԱԿՆ ՈՒ ՊԱՀԱՊԱՆԸ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՆԻԾԵՐՈՒՄ

Հ.Ս.Ը.Ս.Ի ՊԱՏԳԱՎԱԿԱՐԱԿԱՆ
13-ԲԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ



ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐՁ-

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Արցախը մնայուն ներկայութիւն
Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքներուն մէջ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կեանքով եւ գործով

2



ՊԱՏԳԱՄԱՀՈՐԱԿԱՆ

13-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Քացումը	4
Անդամական պատկերներ	6
Արդի ժամանակներու	
Պատգամաւրական Ժողովները	10
Անդամական թիւները վերջին	
քառորդ դարուն	13
Մատնանշումներ	16
Խոսքեր	26
Պարզեւատրում	30
Հաղորդագրութիւն	33
Պատգամաւրներ	34

Ընթացքը	54
Յարգանքի տուրք	76
Լիզանի 40-ամեակ	82
Փակումը	84
Փակման խոսքեր	90
Մատնանշումներ	98

«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳ

«Արարատեան» կարգի մասնակիցներուն միօրեայ հանդիպումը	102
«Արարատեան» կարգի չորրորդ սերունդը	103
Շնորհակալութիւն	103
ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.Ա.Կ.Ը ի սպաս Արցախի հայութեան	104



ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.Ա.ԿԱՆ

12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ

Քայլերգը	38
Մամլոյ ասուլիսը	41
Մասնակիցները	42
Համա-Հ.Մ.Լ.Մ.Ա.Կան	
12 բանակումները	42
Քացումը	44
Քացման խոսքեր	50





ՀԱՅՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՅԱՆ ՄՆԱՅԻՆ ՆԵՐԿՎՅՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԷԶ

2-7 Հոկտեմբեր 2023-ին Հայաստանի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամատրական 13-րդ Ընդհանուր Ժողովը, իր ընկալեալ օրակարգին կողքին, կարեւորութեամբ քննեց Արցախը Հ.Մ.Ը.Մ.Ի աշխատանքներուն մէջ մնայուն ներկայութիւն դարձնելու հրամայականը եւ որոշեց.-

Ա. ՊԱՀՊԱՆԵԼ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԽԵՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ. ազգային արժեքներու եւ խորհրդանիշներու աւանդապահ միութիւն է: Եռազոյն դրօշը՝ 1918-ի Հանրապետութեան զինանշանը, քայլերգը եւ անկախութեան խորհրդը ան պահպանած է 70 տարի, երբ Հայաստան կորսրնցուցած է իր անկախութիւնը: Այսօր, երբ դէմ յանդիման կը գտնուինք Արցախի Հանրապետութեան կորուստի իրականութեան դիմաց, Հ.Մ.Ը.Մ. իր պարտքն ու պարտաւորութիւնը կը նկատէ տէր կանգնիլ ու պահպանել Արցախի Հանրապետութեան խորհրդանիշները, այդ խորհրդանիշներու ընդմէջն վառ պահելու համար Արցախի վերատիրացման խորհրդը: Առ այդ, Պատգամատրական Ժողովը առաջարկեց՝

1) Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր ակումբներուն մէջ այսուհետեւ Եռազոյնի կողքին պատուել Արցախի Հանրապետութեան դրօշը:

2) Հ.Մ.Ը.Մ.Ի հրապարակային թէ ներքին բոլոր հանդիպութիւններուն, սկաուտական հաւաքներուն եւ մարզական հանդիպումներուն ծածանել նաև Արցախի դրօշը:

3) Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւր մարզական խումբերը եւ սկաուտական միաւորները իրենց տարագներուն վրայ կրես Արցախը խորհրդանշող պէճեր:

4) Հ.Մ.Ը.Մ.Ի դաստիարակչական-քարոզչական ծրագիրնե-

րուն մէջ հիմնական եւ մնայուն տեղ տրամադրել Արցախին:

Բ. ՀԱՍՏԱՏԵԼ «Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»Ը

«Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախ հիմնադրամ»ը պիտի հոգայ Արցախն բոնի տեղահանուած ընտանիքներու կենցաղային անմիջական կարիքները: Հիմնադրամին եկամուտները պիտի գոյանան.-

- Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղերու եւ շրջաններու տարեկան հասուրաբեր ձեռնարկներու եկամուտներու որոշ տոկոսն փոխանցուած գումարներէն:

- Հ.Մ.Ը.Մ.Ի անդամական համար կատարուած յաւելումներէն:

- Հ.Մ.Ը.Մ.Ի համակիր շրջանակին մօտ կատարուելիք ժողովրդային հանգանականութիւններէն:

Գ. ՄՇԱԿԵԼ ԱՐՅԱՆԵՆ ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ՓՈՔԲԻԿՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ. յասուկ ուշադրութեան պիտի արժանացնէ Արցախն բոնի տեղահանուած ընտանիքներու փոքրիկները, անոնց համար մշակելով դաստիարակչական-սկաուտական յասուկ ծրագիրներ, ինչպէս միութիւնը իր հիմնադրութեան օրերուն կատարած էր Արեւմտահայաստանէն Պոլիս ապաստանած գաղթականներու զաւակներուն եւ որբերուն:

21 Հոկտեմբեր 2023

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿԵՎՆՔՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ

(ՀԱՒՏԱՐԻՄ Հ.Ս.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՍՏԱԽՈՐԱԿԱՆ
13-ՐԴ ՀՆԴՀԱՆՈՒԹ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ)

Մարմնակրթական միութիւն մը ի՞նչ գործ ունի պատմութեան, մշակոյքի եւ հոգեւոր արժեքներու հետ, կրնան հարց տալ ունանք:

Մարմնակրթական միութեան մը գերազոյն ժողովը ինչո՞ւ զբաղի հայրենիք ունենալ-չունենալու հարցով, կրնան ըսել շատեր:

Մարմնակրթական միութիւններ կը ըգրադին, պէտք է զբաղին միմիայն իրենց պարտականութեամբ՝ սկառուտութեան եւ մարզախաղերու ճամբով սերունդներու դաստիարակութեամբ, կրնան աւելցնել ուրիշներ:

Այս բոլորը կրնան տեղին ու արդար արտայայտութիւններ ըլլալ բնական պայմաններու մէջ ապրող ժողովուրդներու համար, սակայն մեզի նման ժողովուրդներու համար ի՞նչ դաստիարակութիւն, ի՞նչ զբաղում, երբ գնդակն ու բաժակը կան, բայց հայրենիքը չկայ: Երբ սկառուտական կեանքը կայ, բայց այդ կեանքը հոդին վրայ ապրող ժողովուրդը չկայ: Միշոցները անհմաստ կը դառնան, երբ նապատակը կը դադրի գոյութիւն ունենալ:

Զարմանալի բան չկայ ուրեմն, եթէ Հ.Ս.Ը.Մ.Ի գերազոյն ժողովը բոլոր օրակարգերն աւելի եւ բոլոր մտահոգութիւններէն առաջ, զբաղի Արցախով, Արցախի հանդէպ Հ.Ս.Ը.Մ.Ի ունեցած պարտքով: Արցախի հայութեան օժանդակութեան ծրագիրով, «Հ.Ս.Ը.Մ.Ի Արցախ հիմնադրամ»ի ստեղծումով:

Արցախը Հ.Ս.Ը.Մ.ականին սրտի սէրն է եւ հոգիին վերըն է: Արցախը միայն աշխարհագրութիւն եւ քարտէս չէ, լեռ ու ձոր չէ: Արցախը այն 424 եկեղեցիներն ու վանքերն են, որոնք յանձնը-և եցան ազերիներուն: Քանի-քանի ուխտաւորներ Աստուծոյ հետ խօսած են այդ եկեղեցիներուն եւ վանքերուն ճամբով: Որքան սուրբ ձեռքեր դէափ երկինք բարձրացած են անոնց մէջ:



Արցախը այն բազմահարիւր խաչքարերն են, որոնք սրբապղծուեցան ազերիներուն կողմէ: Քանի-քանի տաղանդներ երկնած են այդ խաչքարերը: Հաւատքի ի՞նչ մատներ դրոշմուած են այդ խաչքարերուն վրայ: Աշքերու ի՞նչ լոյսեր տկարացած են անոնց դիմաց:

Արցախը այն 213 դպրոցներն են, որոնց կրութեան լոյսը հանգեցաւ ազերիներուն կողմէ: Քանի-քանի պատանիներ ու պարմանուիներ գրած, երգած, սորված, քալած ու վազած են այնտեղ: Դպրոցներ, ուր հայ աշակերտն ու աշակերտուինն ազգին պատմութիւնը շնչած է, անցեալի փայլուն էջերով ներշնչուած է: Դպրոցներ, ուր ազգանուէր հոգիներ եւ նկարագիրներ կերտուած են:

Արցախը 4000-է աւելի պատմամշակութային այն յուշարձաններն են, որոնք անցան ձեռքը անոնց, որոնք ո՛չ պատմութիւն ունեցած են, ո՛չ ալ մշակոյք: Յուշարձաններ, որոնք մեր քաղաքակրթութեան կենդանի վկաներն են: Մեր սեփական պատմութիւնը, որ դարձաւ աւարք պատմութեան թշնամիներուն:

Շարունակե՞նք. Արցախը այն հողն է, որուն ծոցէն Նիկոլ Դուման եւ Խամասորի Վարդան ծնած է, Վանայ Իշխան եւ Դանիէլ Բէկ Փիրումեան հասակ առած է: Հող, որ սրբագրուած է Խամսայի մելիքներու քրրտինքով, Վիզեն Զարարեաններու եւ Արտակ Իշխանեաններու արեամբ:

Եւ դեռ, Արցախը 300 հանքավայր է, 36 ջրելեկտրակայան է, 580 հազար հեկտար գիւղատնտեսական տարածութիւն է, երածշտական եւ արուեստի 20 դրաբուուն է՝ 7000 սաներով, 10 գրադարան է՝ 400 հազար գիրքերով: Հրաժարիլ այս բոլորէն կը նշանակէ հաւաքական ինքնասպանութեան դիմել: Մոռնալ այս բոլորը կը նշանակէ դաւաճանել Արցախի համար զոհածներու կտակին:



Արցախը այսքան ցա՞ւ է: Արցախը 120 հազար բնակչութեան մասնաւոն՝ 10 հազար տակի նահատակ է, հարիւրատը գերիներ է, աճիւնը չվերադարձուած էերս է, անյայտացած եւ էետքը չբացայտուած զինուոր է:

Արցախը մեր պատմութիւնն է: Մեր ինքնութիւնն է: Մեր բռնաբարուած իրաւունքներու վերատիրացման պայքարն է: Մօտիկ անցեալին, Արցախը իր դրօշով, զինանշանով եւ քայլերգով մեր ազգային հպարտութիւնն էր: Այսօր արդէն մեր խոցուած արժանապատութիւնն է: Մեր ժամանակաւոր պարտութիւնն է: Ու նաև, կորուսեալ մեր հպարտութիւնը վերականգնելու յանձնառութիւնն է, յիշեալ պետական խորհրդանիշները պահպանելու եւ պատուելու որոշումով:

Խօսիլ այս բոլորին մասին, կարեւոր է, այլև դաս-

տիարակի՛չ է: Ընդունիլ, որ Արցախը կայծը վառեց հայութեան նոր ժամանակներու ազատութեան բոցին: Արցախի շնորհի մեր ժողովուրդը 30 տարի աւելի հայցաւ, աւելի պահանջատէր եւ մարտունակ դարձաւ: Արցախի «Երկարէ շերեփ»ով հայութիւնը իր արժանի տեղը գրաւեց ժամանակակից ազգերու ընտանիքին մէջ,- այս արդէն Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութիւնն է, որմով կը մեծնան, պիտի մեծնան մեր ապագայ յաղթանակներուն հաւատացող այսօրուան եւ վաղուան սերունդները:

Այն սերունդները, որոնք հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական 13-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներուն, կեանքով ու գործով պիտի պահեն այն, ինչ որ մեր նահատակները իրենց նահատակութեամբ ու արեամբ պահեցին:

Հ.Մ.Ը.Մ. 25 ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵԶ, 117 ՍԱՍՆԱՁԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱԽՈՐՆԵՐ

Հայաստան: «Գ. Յակոբեան» (Երեւան-Կենդրոն), «Ծ. Քրիսեան» (Երեւան-Սալարիա), «Տ. Խոյեան» (Երեւան-Ջլյուն), «Վ. Չերազ» (Կիմրի), Արովեան, «Ա. Մարտիրոսեան» (Հրազդան), «Վարդան Տ.» (Երեւան-Էրեբունի), «Վ. Բախչեան» (Արմաիր), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), «Յ. Առուստամեան» (Չարենցաւան), Մարտունի (Զօրաքար), «Վ. Չերազ» (Երեւան-Կոմիտաս), «Ա. Զոհրապեան» (Վետի), Մարտունի (Ծովինար), «Յ. Հինդիեան» (Երեւան-Մասին). **Արցախ:** Ստեփանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Սոնկուա. **Լիքանան:** Պեյրուր, Զահլէ, Թրիվոլի, Պ. Համուտ, Այնձար, Ծինի, Անթիլիս, Ժրտէյտ, Պատշրիէ, Ռատտա. **Սովորիա:** Հալէպ, Դամասկոս, Լարաքիա, Գամիշլի, Քեսաա, Տէրիք (միաւոր). **Ցորդանան:** Ամնան. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղտատ, Սուսուլ, Հաւրէզը (միաւոր). **Հռույր:** Քույէյր. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Արէնք, Գորինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսել. **Հռուսանտա:** Ալմելօ, Ալբար, Առնիեմ. **Գերմանիա:** Մինիսի. **Չուչե:** Վեսքերու, Սուտերելիսա, Սրոքիում, Օրէպուո. **Պոլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փլուտիլ, Վաննա, Չումէն, Պուրկաս, Տուպիչ. **Գանատա:** Սոնքրէալ, Համիլյուն, Թորոնիր, Քէմպրիճ, Աէնք Գարրինգ. Լաւալ, Վանքուլը (միաւոր). **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անձելրս, Սան Ֆրանսիսո, «Սասուն» (Ֆրեզնօ), Սոնթեպելլօ, «Ազատամարտ» (Փասատինա), «Արարատ» (Կլենտէյլ), Օրէնճ Քատնիքի, «Սասիս» (Սան Ֆեռնանտո), «Սեւան» (Սան Տիէլո), «Արագ» (Ինընտ Էմփայր), «Անի» (Սանթա Գլարա), «Ծանր» (Քրեսնա Հովիլ), «Զաւախը» (Նորք Հոլիվուտ), «Լոոխ» (Սաքրամենք-միաւոր), «Կիլիկիա» (Սանթա Գլարիիրա-միաւոր), «Հրաշը» (միաւոր). **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինգտոն, Պուրլը, Նիւ Եորք, Նիւ Ֆլորիդ, Շիքալօ, Ֆիլատելիֆիա, Տիրոլյա, Փրովինտըն, Ֆլորիտա, Ալարնի, Շարլոթ (միաւոր), Սերիմար Հովիլ (միաւոր). **Հարաւային Ամերիկա:** Պուէնու Այրէս, Գորսոնա, Սոնթէվիտէօ. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիտնի), «Արար» (Սելպուն), «Նաւասարդ» (Սիտնի), «Կամք» (Սիտնի), «Արարատ» (Սիտնի).

ԾԱՆՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐՈՎ ԴԺՈՒԱՐԻՆ
ՔԱՌԱՄԵԱԿՀ ՄԸ ԵՏՔ՝

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ՀՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՃՇԴԵՑ ՀԱՅ ԿԵԿՆՔԻ ՏԱԳՆԱՊՆԵՐԼ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲԵԼՈՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՈՒՂԻՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը փակեց միութենական գործունելութեան քառամեակի մը էջը եւ բացաւ նոր էջ: Ժողովը պատմութեան յանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Կեդրոնական Վարչութեան աշխատանքները եւ ուղի հարթեց 13-րդ Կեդրոնական Վարչութեան քայլերուն:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը հաստատեց, որ դիրքին չեղաւ 2019-2023 երկարած քառամեակը: Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութիւնը գործեց անբնական պայմաններու մէջ: քրոնայի համաճարակը, համաճարակին պատճառով հանրային գործունելութեան պարտադրուած սահմանափակումները եւ տնտեսական համաշխարհային տագնիազը լուրջ խոչընդոտներու դէմ յանդիման դրին միութենական աշխատանքները:

Քառամեակը դժուար եղաւ յատկապէս լիբանանահա-

յութեան եւ սուրբահայութեան համար, որոնք համաշխարհային տագնիազին առընթեր ապրեցան իրենց երկիրներու ներքին իրավիճակներուն ծանր հետևանքները: 2020-ի Արցախեան պատերազմը եւ հայաստանեան ներքին կեանքի զարգացումները, իրենց կարգին, անժըստելի անդրադարձ ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն վրայ:

Միութեան դէմ ցցուած տեսակաւոր խոչընդոտները յաղթահարելով, Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ իր նպատակադրած ծրագիրները իրականացնել հասկնալի ուշացումնով: Քառամեակի վերջին տարին միայն միութիւնը վերադարձաւ ֆիզիքական ներկայութեամբ աշխատանքի, առցանց նախաձեռնութիւններու կողքին կազմակերպելով համաՀ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր, երիտասարդական համագումար եւ բանակում:

ՄԻՆՉԵՒ ԲԱՑՈՒՄ

1995-ին հաստատուած կարգը խախտեցաւ 2023-ին:

Պատգամաւորական 6-րդ Հնդհանուր Ժողովին սկսեալ սովորութիւն դարձած էր Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն ժողովները սկսիլ բացման պաշտօնական հանդիսավութեամբ, հիւրերով, պարգեւատրման արարողութիւններով եւ հիւրասիրութեամբ: Արցախի կորուստը եւ 100 հազար արցախցիներու ըրու-

նագալիթը, սակայն, անցնող ամիսներուն ճնշչչ տրամադրութիւններ ստեղծած էին բոլորին մօտ՝ հարցականի ենթարկելով մինչեւ իսկ Հնդհանուր Ժողովի գումարումին կարելիութիւնը:

Հնդհանուր Ժողովը գումարումին կումարացուեցա՛ւ, սակայն պաշտօնական բացման հանդիսավութիւնը, ինչպէս փակման ճաշկերոյթը, չնջուեցաւ՝ ի յարգանս Արցախի նահատակներու լիշտակին,



առ ի վշտակցութիւն՝ բռնագաղթուած ժողովորդի կորուստին, ցաւին ու վիշտին:

Փոխան բացման հանդիսութեան, Պատգամաւորական Հնդհանուր Ժողովի կազմը ժողովէն օր մը առաջ, Կիրակի, 1 Հոկտեմբեր 2023-ին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուեցաւ «Արցախի համար ազօթքի համագային օր»ուան Ս. Պատարագին: Այսուհետեւ, պատգամաւորներ այցելեցին Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոն, ուր հոգեսուրճով մը նշեցին Հ.Մ.Լ.Մ.ի եւ հայ ժողովուրդի բոլոր նահատակներուն յիշատակը:

Ժողովէն ժամեր առաջ, Երկուշաբթի, 2 Հոկտեմբերին, Պատգամաւորական Հնդհանուր Ժողովի կազմը այցելեց Մեծ Եղեռնի նահատակաց Միծեռնակաբերդի յուշահամալիլը, ուր ծաղկեմատոյցով խոնարհեցաւ թուրքին եղեռնագործու-

թեան, հայ հողի ու հայ մարդու բնաջնջման քաղաքականութեան գոհ դարձած 1.5 միլիոն նահատակներու յիշատակին դիմաց: Ապա, լրատուամիջոցներէ եւ ընկերային ցանցերէ հեռու, անաղմուկ, Հնդհանուր Ժողովը իր աշխատանքներուն սկսաւ երեկոյեան ժամը 8.30-ին, Ծաղկաձորի «Մարիոթ» հիւրանոցի ժողովասրահին մէջ:



13-ՐԴ ՊԱՏԳԱՎԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ Հ.Ս.Ը.Ը.Ի
117 ՄԱՍՆԱՅԻՆ ԴԵՐՈՒ ԵՒ ՄԻԱՀՈՐՆԵՐՈՒ

Հ.Ս.Ը.Ը. - Հ.Ա.Ս.Կ.	Քաղաք	Դիմություն	Ակատուտ	Անդամ	Ընդհ.
Գ. Յակոբեան	Կեդրոն	1989	129	37	166
Շ. Քրիսեան	Մալաթիա	1990	101	16	117
Տ. Խոյեան	Ջեյռուն	1990	107	27	134
Վ. Չերազ	Կիւմրի	1990	174	53	227
Արևշեան	Արովեան	1991	51	6	57
Ա. Մարտիրոսեան	Ղրազդան	1992	39	13	52
Վարդան Տ.	Էրեբունի	1992	68	9	77
Վ. Բախչեան	Արմավիր	1992	299	61	360
Վ. Ռոստոմեան	Էջմիածին	1993	5	4	9
Զ. Առուտամեան	Չարենցաւան	1993	Կազմալոյծ Կազմալոյծ		
Մարտունի	Զօրաքար	2012			
Վ. Չերազ	Կոմիտաս	2014	75	7	82
Ա. Զոհրապեան	Վետի	2014	43	11	54
Մարտունի	Ծովինար	2015	Կազմալոյծ		
Զ. Հինդեան	Մասիլ	2017	92	12	104

ԱՐՑԱԽ	Դիմություն	Ակատուտ	Մարգիկ	Անդամ	Ընդհ.
Արցախ	2019	120	-	17	137

ՎՐԱՍՏԱՆ	Դիմություն	Ակատուտ	Մարգիկ	Անդամ	Ընդհ.
		80		40	120
Ախալքալաք	2001	Կազմալոյծ			
Ախալցխա	2001	Կազմալոյծ			
Թիֆլիս	2015	80		40	120

ՌՈՒՍԻԱ	Դիմություն	Ակատուտ	Մարգիկ	Անդամ	Ընդհ.
Մոսկովա	2008	Կազմալոյծ			

ԼԻԲԱՆԱՆ	Դիմություն	Ակատուտ	Մարգիկ	Անդամ	Ընդհ.
		1158*	251	3865	5274
Պէյրութ	1924	228	97	583	908
Զահիէ	1927	-	-	111	111
Թթիփոլի	1929	-	7	57	64
Պ. Խամուտ	1935	208	55	700	963
Այնձար	1940	243	20	391	654
Շիրնի	1950	-	6	120	126
Անթիլիաս	1970	316	51	1186	1553
Ժըտէյտ	1974	71	8	482	561
Պատշրիէ	1998	-	5	119	124
Ռատուտա	2011	-	2	116	118

* Ներառեալ՝ Ակ. Շրջ. Խմբապետութիւն 7, Շրջանային շեփորախումը 60, Այնձարի շեփորախումը 25:

ՍՈՒՐԻԱ	Դիմություն	Ակատուտ	Մարգիկ	Անդամ	Ընդհ.
		760	545	312	1617
Դամասկոս	1925	95	18	43	156
Հալէպ	1925	260	335	130	725
Լաթարիա	1926	130	94	47	271
Գամիշլի	1931	110	78	40	228
Քեսապ	1948	125	20	52	197
Տէրիք միաւոր	2022	40	-	-	40



ԲԱՑՈՒՄԸՆ

Ժողովին բացումը կատարեց Հ.Մ.Լ.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան մէկ վայրկեան յունկայս լրութեան հրաւիրեց ներկաները՝ յարգելու համար անցնող քառամեակին մեզմէ յաւշ բաժնուած Հ.Մ.Լ.Մ.ականներուն յիշատակը: Ապա, եղբ. Նաճարեան նշեց, որ Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը կը գումարուի մեր ժողովուրդին եւ հայրենիքին համար չափազանց ծանր պայմաններու մէջ: Օրուան պահանջն ընդդառած, ան առաջարկեց Արցախը իրը եւ առանձին կէտաւելցնել Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի օրակարգին վրայ եւ լրջօրէն քննել Հ.Մ.Լ.Մ.ի դերն ու պարտականութիւննը Արցախին բռնագաղթած հայերու նկատմամբ:

Շարունակելով, եղբ. Նաճարեան յայտնեց, որ Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի մասնաճիւղի անդամները եւ վարչականները եւ ննդարկուած են բռնագաղթի: Այսօր անոնք կը գտնուին Հայաստան: Ժողովին ներկայ է Արցախի մասնաճիւղի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան, որ հարազատ վկան է Արցախի ապրած ողիսականին: Հետեւեաբար, ան հրաւիրեց եղբ. Գրիգորեանը հանդէս գալու գեկուցական կարծ հօսքով:

Եղբ. Դաւիթ Գրիգորեան ներկայացուց Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի մասնաճիւղին կարճատեւ պատմութիւնը՝ հիմնադրութեան (2 Յուլիս 2019) մինչեւ սեփական հողի վրայ աշխատանքներու դադրեցումը (19 Սեպտեմբեր 2023): Ան յատկապէս անդրադարձաւ վերջին 10 ամիսներուն, շրջափակման դժուարին պայմաններուն մէջ մասնաճիւղին կատարած աշխատանքներուն (այս մասին տեսնել նաև էջ 26):

Այսուհետեւ, ժողովը իր օրակարգին անցնելով, ձեռնարկեց առժամեայ դիւանի կազմութեան: Դիւանը բաղկացաւ եղբ. Գրիգոր Մկրեանէ՝ ատենապետ (Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն, ժողովի երիցագոյն անդամ) եւ եղբ. Դաւիթ Գրիգորեանէ (Արցախէն, կրտսերագոյն անդամ): Լիազօրագիրներու ստուգումէն ի յայտ դարձաւ, որ ժողովին կը մասնակցէին միութեան Շրջանային եւ Մեկուսի 26 շրջաններէն 75 պատգամաւորներ: Գլխաւոր բացականերն էին Հ.Մ.Լ.Մ.ի Յունաստանի, Պուլկարիոյ եւ Մարսէյի ներկայացուցիչները: Խսկ առաջին անգամ ըլլալով նման ժողովի մը կը մասնակցէր Օրէպրուի (Շուէտ) շրջանը:



Հիւրաբար ժողովին կը մասնակցէին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ի ատենապետ Սոֆի Զաղարբէկեան։ Ընթացաւարտ Կեղրոնական Վարչութիւնը ներկայացուած էր լիազօր ներկայացուցիչով մը։ Ի պաշտօնէ կը մասնակցէին 14 քոյլեր-եղայրներ (ընթացաւարտ Կեղրոնական Վարչութեան անդամներ, Կեղրոնական Վարչութեան յանձնախումբերու ներկայացուցիչներ եւ անձնակազմի անդամներ)։ Իսկ Կեղրոնական Վարչութեան եւ շրջաններու կողմէ ներկայ էին 11 հրաւիրեալներ, որոնցմէ չորսը՝ Հ.Մ.Հ.Մ.ի երիտասարդական Բ. համագումարին կողմէ ընտրուած քոյլ-եղայրներ։

Այս հաստատումները կատարելէ, ապա՝ շրջաններու նիւթական պարտաւորութիւններուն մասին Կեղրոնական Վարչութեան բացարութիւնը լսելէ եւ համապատասխան տնօրինումները կատարելէ ետք, ժողովը նկատուեցաւ օրինաւոր եւ նախքան իր աշխատանքներուն սկսիլը ընթերցեց ժողովին բանաւոր բացակայող, Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թոփուղեանի (Գանատա), ինչպէս նաև ժողովին հրաւիրուած, սակայն կամքէ անկախ պատճառներով բանաւոր բացակայած եղբայրներ Մարտիկ Պողոսեանի եւ Գրիգորիս Պողարեանի (Լիբանան) նամակները։

Մնայուն դիւանի ընտրութեան օրակարգով, ժողովի ատենապետներ ընտրուեցան քոյլ Սանտրա Վարդանեան (Հայաստան) եւ եղբ. Վիգէն Աբէլեան (Արեւմտեան Մ. Նա-

ԱՆԱՍՏԱՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի
117 ՄԱՍՆԱՅԻՇԵՐՈՒ ԵՒ ՄԻԱՅՈՐՆԵՐՈՒ

Ա. ԱՐԵՒԵԼՔ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Աղեքսանդրիա*	1912	-	18	75	93
Գահիրէ*	1914	40	50	200	290
Երուսաղէմ	1935	64	50	92	206
Ղայֆա	1937	27	9	31	67
Եաֆա	1937	15	9	50	74
Ամման	1937	40	1	101	142
Քուէյք	1983	160	91	143	394
Պալտատ**	1949	93	14	82	189
Մուսուլ**	1960			Կազմալոյն	
Հաւրէզը միաւոր	2023	19	-	-	19

* Աղեքսանդրիայ «Կամք»ը եւ Գահիրէի «Արարատ»ը Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին միացած 1974-ին։

** 35 տարուամ ընդմիջումէ ետք Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին միացած 2003-ին։

ԿԻՊՐՈՍ*	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Նիկոսիա	1927	31	20	106	157

* 2003-ին վերամիացած Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին։

ՅՈՒՆԱՍՏԱՆ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		131	46	143	320
Արէնք	1924	51	20	73	144
Գոքինիա	1924	73	25	50	148
Սելանիկ	1928	7	1	20	28

ԵՒՐՈՊԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		141	73	152	366
Լոնտոն	1979	65	53	54	172
Վիեննա	1985	48	-	25	73
Մինիսին	2015	28	20	73	121

ՀՈԼԱՆԴԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		140	41	199	380
Ալմելո	1996	116	27	149	292
Ալբար	2014			Կազմալոյն	
Առնիեմ	2015	24	14	50	88

ՖՐԱՆՍ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		135	325	195	655
Փարիզ	1977	67	53	25	145
Վալանս	1983	40	30	150	220
Մարսէ-«Արժիւ»*	1924	28	242	20	290

* 2007-ին վերամիացած Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին։

ՇՈՒԵՏ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		236	60	399	695
Վեսթերոս	2014	36	-	54	90
Սուտերելիա	2015	113	47	127	287
Սթորհոլմ	2015	44	13	163	220
Օրէպորտ	2022	43	-	55	98



13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ Հ.Ս.Ը.Մ.Ի
117 ՄԱՍՍԱՅԻՒՂԵՐՈՒ ԵՒ ՄԻԱԲՈՐՆԵՐՈՒ

ՊՈԽԿԱՐԻԱ	Դիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		100	-	-	100
Սոֆիա	1991	12	-	-	12
Ռուսէ	1991	15	-	-	15
Փլովտիվ	1992	36	-	-	36
Վառնա	1992	30	-	-	30
Շումեն	1997	7	-	-	7
Պուրկաս	1999	Կազմալոյժ			
Տոպրիչ	1999	Կազմալոյժ			

ԳԱՆԱՏԱ	Դիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		778	700	336	1814
Մոնթեալ	1958	340	181	74	595
Չամիլթըն	1968	13	9	23	45
Թորոնթօ	1969	238	263	68	569
Քեմպրիծ	1977	60	117	43	220
Մենք Գարդինգ	1986	18	18	15	51
Լաւալ	2010	109	55	91	255
Վանքուվըր մ.	2018	-	57	22	79

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. Ն.	Դիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		382	454	160	996
Ուաշինգտոն	1971	77	32	15	124
Պոսթըն	1973	75	88	50	213
Նիւ Ենրը	1975	8	133	20	161
Նիւ Ջորդի	1975	35	51	10	96
Շիբակօ	1975	60	45	12	117
Ֆիլատելֆիա	1975	23	12	5	40
Տիթրոյթ	1976	39	13	9	61
Փրովիտընս	1981	48	35	15	98
Ֆլորիտա	1981	-	20	7	29
Ալպընի	1986	9	8	8	25
Շարոյթ միաւոր	2015	8	-	5	13
Մերիմաք միաւոր	2017	-	17	2	19

հանգներ), քարտուղարներ՝ եղբայրներ Հայկ Թապագեան (Լիբանան), Շանթ Ժամկոչեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Յովսէփ Եագուապեան (Երուսաղէմ) եւ քոյր Յոլեր Մկրտիչեան (Գանատա):

Այսուհետեւ, ժողովը իր աշխատանքները շարունակելով ընտրեց արխիտային, հաշուեքննիչ, բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերու անդամները եւ կազմեց Հնդհանուր ժողովի աշխատանքային ինը խմբակները.- Կազմակերպական, կանոնադրային, սկառուտական, մարզական, քարոզչական, երիտասարդական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, տեղեկատուական արհեստագիտութեան եւ տնտեսական:

Պատգամաւորական Հնդհանուր ժողովի առաջին նիստը աւարտեցաւ երեկոյեան ժամը 10.30-ին:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Պատգամաւորական ժողովին երկրորդ օրը, երեքշաբթի, 3 Հոկտեմբերը յատկացուեցաւ ընթացաւարտ Կեդրոնական



Վարչութեան քառամեայ գործունէութեան ներկայացման եւ քննարկման:

Առաջատարութեան, Հնդհանուր ժողովի մասնակիցներուն այցելեց Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան: Ան հանդէս եկաւ գոտեանդիչ խօսքով մը եւ նշեց, որ Արցախը պարպուեցաւ հայութենէ, սակայն մենք բոլորով պիտի աշխատինք, որպէսզի այդ միայն ժամանակաւորապէս ըլլայ:

Պատգամաւորական Հնդհանուր ժողովի գումարումի պայմաններուն անդրադառնալով, Յակոբ Տէր Խաչատուրեան յայտնեց. «Սա հաճոյքի, ինձոյքի արտայայտութիւն չէ, ընդհակառակն, այս մեծ կազմակերպութեան՝ Հ.Ս.Ը.Մ.Ի ներքին ժողովրդավարութեան լաւագոյն արտայայտութիւնն է եւ այդ իսկ պատճառով պէտք է որ գումարուի, եւ դուք ներկայ գտնուէք հայրենիք, որպէսզի ականատեսը ըլլաք այստեղի մթնոլորտին: Երկրորդ, կարեւոր է, որ դուք կեանք հաղորդէք ձեր բնական գործունէութեան, յառաջիկայ քառամեան կերպու աշխատանքներուն համար որոշումներ տաք եւ նոր կեդրոնական վարչութիւն ընտրէք»: Տէր Խաչատուրեան մաղթեց, որ Պատգամաւորական Հնդհանուր ժողովը իր բաժինը բերէ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն օժանդակութեան մեծ ծրագիրին:

Իր խօսքը եզրափակելով, Յակոբ Տէր Խաչատուրեան հաս-



տատեց. «Զափազանց գիտակից եմ Հ.Մ.Լ.Մ.ի կարեւորութեան, ո՞չ թէ որպէս առողջ միտք ու մարմին կերտող կազմակերպութիւն, այլ՝ որպէս հայեցի դաստիարակութիւն ջամբոր երիտասարդական մեր մեծագոյն կազմակերպութիւնը, որպէս գաղափարակից, որպէս հայ ժողովուրդի պայքարին լծուած եւ նոր սերունդներ պատրաստող, առողջ տղաք ու աղջկներ կազմաւորող կազմակերպութիւն»:

Հ.Յ.Դ. Բիերոյի ներկայացուցիչին խօսքէն ետք, ժողովը շարունակեց իր աշխատանքները եւ ընթացաւարտ կերպոնական Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրներու ներկայացման օրակարգով ցուցադրուեցաւ հաշուետու մարմինին քառամեայ աշխատանքները ամփոփող տեսանիւթ մը: Կերպոնական Վարչութեան 71 էջնոց տեղեկագիրը, 13 յաւելածները եւ անոնց ընթերցուած ձայնագրեալ տարբերակը նախապէս ուղարկուած էին պատգամաւորներուն, հետեւաբար ժամանակի խնայողութեան նպատակով, այդ բոլորը վերընթերցելու փոխարէն, ժողովականները տեսանիւթի միջոցով վերջիշեցին հոն տեղ գտած գլխաւոր բաժինները (տեսանիւթը դիտել հետեւեալ կապով՝ <https://www.facebook.com/MyHomenetmen/videos/1460553878113193>), մեծ պաստառի վրայ համակարգչային հեռասփոռումով ծանօթացան նիւթական տեղեկագիրին եւ անցան լուսաբանական հարցումներու բաժինին:

Կէսօրուան նիստին, Կերպոնական Վարչութիւնը իր ատենապետին ճամբով պատասխանեց զոյդ տեղեկագիրներու շուրջ կատարուած լուսաբանական հարցումներուն:

Տեղեկագիրներու ընթերցումէն պարզուեցաւ, որ 2019-2023 քառամեակը միութեան համար եղած է ծանր կորուստներով դժուարին քառամեակ մը: Կերպոնական Վարչութիւնը չորս տարուան ընթացքին ունեցած է բազմաճիւղ, բեղուն դործունէութիւն:

Կերպոնական Վարչութեան գլխաւոր աշխատանքները եղած են.-

Ա. Կազմակերպական

Թիֆլիսի, Հայֆայի, Եաֆայի, Ամմանի եւ Վեսթերոսի մասնաճիւղերու վերաշխուժացման առնթեր, նոր մասնա-

**ԱՇԽԱՍԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ Հ.Ս.Ը.Ը.Ի
117 ՄԱՍՆԱՅԻՆԴԵՐՈՒ ԵՒ ՄԻԱՅՈՐՆԵՐՈՒ**

ԱՐԵՒՏԵԱՆ Մ. Ն.	Նիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Լու Անձելը	1968	71	239	48	358
Սան Ֆրանսիսը	1970	33	156	48	237
Սասուն	1971	73	158	18	249
Մոնթեպելլօ	1974	9	179	9	197
Ազատամարտ	1977	104	466	81	651
Արարատ	1978	397	1383	86	1866
Օրենք Բաունթի	1979	11	95	8	114
Մասիս	1979	27	1174	94	1295
Սեւան	1983	26	62	21	109
Արագ	1990	32	31	24	87
Անի	1991	51	83	17	151
Շանք	1993	124	497	56	677
Սիփան	1995	123	254	68	445
Արցախ	1997	17	7	7	31
Ֆինիքս	1998	2	3	10	15
Կարս	1999	30	17	17	64
Ջաւախիս	2011	4	66	-	70
Լոռի միաւոր	2016	18	18	-	36
Կիլիկիա միաւոր	2017	1	16	4	21
Դրաշը միաւոր	2018	-	-	59	59

Հ. ԱՄԵՐԻԿԱ	Նիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Պուէնոս Այրէս	1927	154	478	716	1508
Գորտոպա	1929	97	413	509	1076
Մոնթէվիտօ	1987	58	25	104	226

ԱՒՏՐԱԼԻԱ	Նիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Սիտնի «Անդրամիկ»	1965	252	784	338	1374
Մելպուն «Արաքս»	1966	148	229	190	567
Սիտնի «Նաւասարդ»	1973	27	91	24	142
Սիտնի «Կամք»	1981	49	90	22	161
Սիտնի «Արարատ»	1989	28	374	102	504



13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Ճիւղի հիմնում Օրէպրուի մէջ (Շուէտ) եւ երկու նոր միաւորրի յառաջացում Տէրիքի (Սուրիա) եւ Հաւրէզքի մէջ (Իրաք): Յատուկ ճիգ ի գործ դրուած է 2020-ի 44-օրեայ պատերազմէն ետք վերականգնելու Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի մասնաճիւղը, որ մինչեւ բունի տեղահանութիւն (Մեպտեմբեր 2023) ունեցած է աշխոյժ գործունչութիւն (Այս մասին տեսնել մասնաճիւղի ատենապետին զեկոյցը, էջ 26):

Ժողովական իմաստով, Կեդրոնական Վարչութիւնը կատարած է չորս լիագումար.-

- Առաջին լիագումար, 6-7 Դեկտեմբեր 2019, Փարիզ
- Երկրորդ լիագումար, 26-29 Հոկտեմբեր 2021, Երեւան
- Երրորդ լիագումար, 9-10 Նոյեմբեր 2022, Պէյրութ
- Չորրորդ լիագումարը, 1 Հոկտեմբեր 2023, Երեւան:

Կազմակերպած է.-

ա) Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու ատենապետներու առցանց երեք ժողով (Ապրիլ-Մայիս 2020, Հոկտեմբեր 2022, Մայիս 2023):

բ) Միջ-դիւանական Ժ. Խորհրդաժողով, Պէյրութ, Նոյեմբեր 2022:

Մասնակցած է.-

ա) Հ.Յ.Դ.ի ուղեկից միութիւններու երկօրեայ առցանց Հանդիպումին (30-31 Հոկտեմբեր 2021):

բ) Հ.Յ.Դ.ի ուղեկից միութիւններու միօրեայ խորհրդաժողովին (14 Նոյեմբեր 2022):

Բ. Ակաուտական

- Ակաուտական վեց գիրքերու վերամշակում եւ PDF օրինակով միութեան կայքէջին մէջ տեղադրում:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական խմբապետական առցանց համագումար, 25 Յուլիս եւ 8 Օգոստոս 2020, մասնակցութեամբ միութեան Շրջանային եւ Մեկուսի 27 շրջաններու եւ Իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» միութիւններու 67 բարձրաստիճան խմբապետներու:

- «Արարատեան» կարգի տեսական եւ գործնական դասընթացքներ (Մայիս 2021-Յուլիս 2023): Կարգին արժանացան 34 բարձրաստիճան խմբապետ-խմբապետուհիներ:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական առցանց բանակում՝ Pan Homenetmen Online Jamboree, 26 եւ 27 Յունիս 2021, մասնակցութեամբ միութեան 25 շրջաններէն եւ Թէհրանի «Արարատ» կազմակերպութենէն աւելի քան 1000 սկաուտներու:

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1974-էն՝ Հ.Մ.Լ.Մ.ի համագաղութային կառոյցին ստեղծումէն մինչեւ օրս գումարուած են Պատգամաւորական 13 Ընդհանուր Ժողովներ, մասնաճիւղերու մասնակցութեան հետեւալ դատկերով.-

Ա. Պատգ. Ժողով- Պէյրութ, 13-15 Դեկտեմբեր 1974, 28 մասնաճիւղ:

Բ. Պատգ. Ժողով- Նիկոսիա, 6-8 Ապրիլ 1979, 46 մասնաճիւղ:

Գ. Պատգ. Ժողով- Արէնի, 14-17 Ապրիլ 1983, 55 մասնաճիւղ:

Դ. Պատգ. Ժողով- Արէնի, 17-20 Ապրիլ 1987, 57 մասնաճիւղ:

Ե. Պատգ. Ժողով- Արէնի, 29 Մարտ-3 Ապրիլ 1991, 62 մասնաճիւղ

Զ. Պատգ. Ժողով- Պէյրութ, 11-17

Ապրիլ 1995, 83 մասնաճիւղ:

Է. Պատգ. Ժողով- Պէյրութ, 31 Մարտ-5 Ապրիլ 1999, 87 մասնաճիւղ:

Ը. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր, 4-7 Յունիս 2003, 90 մասնաճիւղ:

Թ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր,

19-23 Յունիս 2007, 99 մասնաճիւղ:

Ժ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր, 5-

10 Սեպտեմբեր 2011, 102 մասնաճիւղ:

Ժ. Պատգ. Ժողով- Ալվերան, 7-

11 Սեպտեմբեր 2015, 104 մասնաճիւղ:

Ժ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր,

14-19 Հոկտեմբեր 2019, 114 մասնաճիւղեր եւ միաւորներ:

Ժ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր,

2-7 Հոկտեմբեր 2023, 117 մասնաճիւղեր եւ միաւորներ:





- «Վկայեալ» կարգի դասընթացքներ Եւրոպայի եւ Միջին Արեւելքի շրջաններու համար (տեսական բաժինները առցանց, իսկ գործնականները՝ երկօրեայ սեմինարներով, Փարիզ, 17-19 Մարտ 2022 եւ Ամման, 26-29 Մայիս 2022): Կարգին արժանացան 34 խմբապետ-խմբապետուհիներ:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակում, Բիւրականի «Գառնիկ Միլտիչեան բանակավայր», 21-30 Յուլիս 2023, մասնակցութեամբ միութեան 30 շրջաններէ 700 սկաուտներու: Բանակումին հիւրաբար մասնակցեցան Թեհրանի «Արարատ» եւ «Նայիրի» կազմակերպութիւններու պատուիրակութիւնները:

Գ. Երիտասարդական

- Երիտասարդական բաժանմունքի ստեղծման համար տեղեկահաւաքի հարցարաններու պատրաստութիւն եւ շրջաններու յղում:

- Անհրաժեշտ խորհրդակցութիւններու կազմակերպումէ ետք երիտասարդական բաժանմունքի ուղեգիծի մշակում:

- Երիտասարդական ուղեգիծի շրջաններու մէջ փորձարկում մինչեւ Պատգամաւորական 18-րդ Հնդհանուր ժողով:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական երիտասարդական երկրորդ համագումար, Նիկոսիա, 28-29 Ապրիլ 2023, մասնակցութեամբ միութեան 12 Շրջանային եւ Մեկուսի շրջաններէ 26 քոյր-եղբայրներու:

Դ. Endowment Fund

- Endowment Fund-ի կանոնագրութեան եւ աշխատանքային ուղեցոյցի պատրաստութիւն:

Ե. Մարզական

- Մարզական առցանց համագումար, 8 եւ 15 Մայիս 2021, մասնակցութեամբ միութեան 22 շրջաններէն, Իրանի «Արարատ» եւ «Նայիրի» կազմակերպութիւններէն ներկայացուցիչներու, կազմակերպիչ յանձնախումբի եւ Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամներու, Հիւրերու, ընդամէնը՝ 94 մասնակիցներու: Համագումարին առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան որոշումով 22 Յուլիսը՝ Շաւարչ Քրիսեանի ծննդեան օրը հոչակուեցաւ «Հայ մարզիկի օր»:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական առցանց առաջին մարզախաղեր, 4 Հոկտեմբեր-24 Դեկտեմբեր 2021, չորս մարզաձեւով՝ Փութպոլ, պասբեթպոլ, աթլէթ եւ լող: Մրցումներուն մասնակցեցան 10 շրջաններէ 95 մարզիկ-մարզիկուհիներ:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական առցանց երկրորդ մարզախաղեր, 17 Սեպտեմբեր 2023, մէկ մարզախաղով՝ ճամբար: Մրցումներուն մասնակցեցան 6 շրջաններէ 37 մարզիկ-մարզիկուհիներ:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 11-րդ մարզախաղեր, Հայաստան, 21-29 Յուլիս 2022, Հայաստան: Մարզախաղերուն մասնակցեցան միութեան 19 շրջաններէն եւ Թեհրանի «Արարատ» կազմակերպութենէն 645 մարզիկ-մարզիկուհիներ: Կիրարկուեցան 12 մարզախաղեր: Իբրեւ նորութիւն, կատարուեցան յատուկ ինամքի կարօտ պատանիներու երկօրեայ մրցումներ, որոնց արուեցաւ «Հրաշք» մարզախաղեր անունը:

Զ. Քարոզչական

Անցնող չորս տարիները նոր գործադաշտ մը բացին Կեդրոնական Վարչութեան աշխատանքային մարզերուն դիմաց՝ քարոզչականը: Յառաջացաւ յատուկ յանձնախումբ, որ ունեցաւ բազմաթիւ նախաձեռնութիւններ, ինչպէս՝

- Խմբապետական առցանց համագումարի լոկոյի եւ նախորդ եօթը համագումարներու մասնակիցներու տեսանիւթերու պատրաստութիւն:



13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



- Հ.Մ.Լ.Մ.ի 103-ամեակին տեսանիւթի պատրաստութիւն:

- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աշխատանքներու ծանօթացնող հայերէն եւ անգլերէն տեսանիւթերու պատրաստութիւն:

- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութան նախկին ատենապետ Եղբ. Գառնիկ Մկրտչեանի յիշատակին տեսանիւթի պատրաստութիւն եւ եղբօր յուղարկաւորութեան եւ թաղման ուղիղ սփոռումի կազմակերպում:

- Մարզական առցանց համագումարի լոկոյի եւ վեց տեսանիւթերու պատրաստութիւն:

- Շաւարչ Քրիսեանի ծննդեան 135-ամեակին առիթով տեսանիւթի պատրաստութիւն՝ յատուկ Հարցազրոյցով մը Քրիսեանի եղբօրը թոռան՝ տոքթ. Շաւարչ Քրիսեանի հետ:

- Ուղիղ սփոռում Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Եղբ. Արմանտօ Թորգոմեանի յուղարկաւորութեան:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական քարոզչական առցանց Ա. Համագումարի կազմակերպում, Նոյեմբեր 2021-ին եւ այս առիթով «Հ.Մ.Լ.Մ.ի քարոզչական աշխարհը» նիւթով տեսանիւթի պատրաստութիւն:

- Հ.Մ.Լ.Մ.ի քարոզչական քարտէսի եւ տօնացոյցի պատրաստութիւն:

- Հ.Մ.Լ.Մ.ի 103-ամեակին առիթով, լուսանկարչական մրցանքի կազմակերպում եւ «Ով հայ արի» քայլերգի տեսանիւթի պատրաստութիւն՝ կատարողութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի շրջաններու սկաուտական խումբերում:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու լոկոյի եւ երեք տեսանիւթերու պատրաստութիւն: Մարզախաղերու նախօրեակին քարոզչական արշաւ, իսկ խաղերու ընթացքին՝ ամէնօրեայ լրատըլութիւն եւ «Երկիր Մետիա»յի հետ գործակցաբար գլխաւոր յայտագիրներու ուղիղ սփոռում:

- Հ.Մ.Լ.Մ.ի միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովի քարոզչական աշխատանքներու կազմակերպում:

- Միութեան նշանակին՝ Վահանին եւ Շուշանածաղիկի պրենտինկի պատրաստութիւն:

- 2023-ի «Հայ սկաուտի օր»ուան առիթով Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի Մեկուսի շրջանի սկաուտներուն կողմէ յատուկ տեսանիւթի պատրաստութիւն:

- Ցունիս-Յուլիս 2023-ին, քարոզչական քատրերու պատրաստութեան առցանց դասընթացք, մասնակցութեամբ միութեան Շրջանային եւ Մեկուսի շրջաններէն աւելի քան 50 քոյրերու եւ եղբայրներու:

- Ուղիղ սփոռում Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Եղբ. Գարլոս Սէֆէրեանի յուղարկաւորութեան:

- Պատգամաւորական 13-րդ Հնդհանուր ժողովի տեսանիւթի պատրաստութիւն:

Ե. «ՄԱՐԶԻԿ»

- «Մարզիկ» պաշտօնաթերթի 14 թիւերու հրատարակութիւն, երկուքը միացեալ՝ քորոնայի սահմանափակումներու օրերուն, օդակայաններու փակման եւ առաքման անկարելիութեան պատճառով:



- «Մարզիկ»ի 430 թիւերու թուայնացում (օժտուած՝ որոնողական յատուկ ծրագիրով):

- «Մարզիկ»ի խմբագրութեան կողմէ միութեան կայքէջի՝ Homenetmen.org-ի նիւթերու պատրաստութիւն: Կայքէջը դարձաւ երկեզու: Կայքէջին մէջ տեղ գտան միութենական լուրեր, այլազանքաններ, «Մարզիկ»ի բոլոր թիւերուն խմբագրականները, թիւ 300-էն սկսեալ, բոլոր թիւերուն PDF օրինակները, ինչպէս նաեւ՝ միութենական հարուստ գրականութիւն:

Հ. Թանգարան

- Հ.Մ.Լ.Մ.ի «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարանի յանձնախումբը վերականգնում է նոր գույքագրուող իրերը: Թանգարանը օժտուեցաւ նոր դարաններով եւ օդափոխիչ սարքերով: Պէյլութի նաւահանգիստի պայթումին թանգարանը կրեց լուրջ վնասներ, սակայն նույիրատութիւններու գումարներով վերանորոգուեցաւ եւ շարունակեց այցելուներ ընդունիլ:



Թ. Տեղեկատուական արհեստագիտութիւն

- Սկառուտական առցանց բանակումի կայքէջի եւ ելեկտրոնային գիմուլմագլուխներու պատրաստութիւն: - Հանդիպումներ շրջաններու Data manager-ներու հետ՝ Data base-ի աշխատանքներու հետապնդման համար:



Հ.Մ.Լ.Մ.Ի ԱՆԴԱՄԱԿԱՆ ԹԻՒԵՐԸ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐՈՒՆ (ՂԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԻՒԵՐՈՒ)

ԺՈՂՈՎՆԵՐ	ՍԿԱՌՈՒՏՆԵՐ	ՄԱՐԶԻԿՆԵՐ	ԱՆԴԱՄՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ
Է. ժողով- 1999	7758	7592	5818	21168
Ը. ժողով- 2003	7006	8672	7013	22691
Թ. ժողով-2007	7379	10186	8456	26021
Ժ. ժողով- 2011	7101	9753	7914	24768
ԺԱ. ժողով- 2015	6750	8915	6940	22605
ԺԲ. ժողով- 2019	7815	8337	9325	25477
ԺԳ. ժողով- 2023	7547	8923	8683	25153

13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի ելեկտրոնային դիմումնադիրներու պատրաստութիւն:

- Homenetmen.org ե-նամակներու հետապնդում:

Ժ. «ՀՐԱՇՔ»

Յունիս 2023-ին ստեղծուած այս յանձնախումբին գլխաւոր պարտականութիւնը եղաւ սերտել եւ պատրաստել «Հրաշք»ի պավագայ աշխատանքներուն եւ շրջաններու մէջ տարածման ճեւին մասին պատկերացում մը՝ համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերու եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումի փորձառութիւններու լոյսին տակ:

Ծանօթ է, որ «Հրաշք»ի գաղափարը ծնունդ առաւ 2018-ին, Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակին առիթով, Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին մէջ, իբրև յատուկ ինսամքի կարօտ պատասիներու մարզախաղերը: 2022-ին, համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերուն, «Հրաշք»ի երկօրեայ խաղերը արձանագրեցին յաջողութիւն, իսկ 2023-ին, «Հրաշք»ի պատասիները այցելեցին համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակում եւ հաճելի օր մը անցուցին բանակողներուն հետ:

ԺԱ. Արցախի օժանդակութիւն

- Արցախը հիմնական տեղ ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքներուն մէջ: Արցախնան 44-օրեայ պատերազմին, հայկական բանակի թէ կամաւորական վաշտերու անդամ Հ.Մ.Լ.Մ.ականներ իրենց մասնակցութիւնը բերին հայրենիքի պաշտպանութեան գործին: Պատերազմին նահատակուեցան 10 Հ.Մ.Լ.Մ.ականներ՝ եղբայրներ Գէրորդ Հաճեան, Գրիգոր Ղազարեան, էրիկ Գալստեան, Արտակ Իշխաննեան, Արմէն Առուստամեան, Արտակ Մարտիրոսեան, Զայկ Դերիկլեան, Յարութ Բանոյեան, Յակոբ Աստարճեան եւ Մոսիկ Սեբէմեան:

- Պատերազմի բռնկումէն անմիջապէս ետք, Կեդրոնական Վարչութիւնը առցանց ժողովներ կազմակերպեց իր կազմի անդամներուն եւ շրջաններու ատենապետներուն հետ՝ ճշդելու համար միութեան գօրակցութեան միջոցները Արցախին եւ Արցախի հայութեան: Ձեռնարկուեցաւ հայ զինուորներու գօրակցութեան նամակարչաւի: Ծաւալեցաւ քարոզչական լայն աշխատանք: Բարերարներ փութացին Հ.Մ.Լ.Մ.-



Հ.Ա.Ա.Կ.ի ճամբով օժանդակութիւններ հասցնել Հայաստան ապաստանած արցախցի գաղթականներուն:

- Արցախնան 44-օրեայ պատերազմին Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ. կատարեց նկատառելի աշխատանք: Պատերազմի ընթացքին եւ անկէ ետք Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ. դաստիարակչական-ընկերային ծրագիրներ իրագործեց Հայաստան ապաստանած արցախցի 175 պատասիներու համար: Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ի վարչութիւնը կազմակերպեց գրամահաւաք, որուն հասովլով 740 փաթէթներ տրամադրեց պատերազմին տուժած ընտանիքներու, այս նպատակին յատկացնելով աւելի քան 15 հազար տույար: Վարչութիւնը արցախցի երեխաներու բաժնեց գրենականի 150 փաթէթներ, 200 խաղալիքներ եւ Ամանորի առիթով 350 տոպրակ նուէրներ:

- Պատերազմի աւարտին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ. Եռաբլուրի նահատակաց պանթէռնին եւ Երեւանի իր կեդրոնին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը նշեց հայրենիքի պաշտպանութեան ճամբուն զոհուած Հ.Մ.Լ.Մ.ականներու յիշատակը: Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ի վարչութիւնը «Խիզախութեան» շքանըշան նորհեց 35 Հ.Մ.Լ.Մ.ականներու, որոնք Հայաստանի Հանրապետութեան զինեալ ուժերուն ծառայելու եւ կամ Հայաստանի հողային ամբողջականութեան դէմ ոտնձգութիւններու ընթացքին, հայրենիքի եւ ժողովուրդի պաշտպանութեան համար ցուցաբերեցին խիզախութիւն եւ անմասցորդ նըւիրում:





- 2021-ի Ամանորին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. արցախցի 350 ընտանիքի տրամադրեց գնման կտրօններ: Զինուորներու համար ապահովեց տաք հագուստ եւ առաջն բուժօգնութեան պարագաներ:

- 1 Մայիս 2021-ին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. Բիւրականի բանակավայրին մէջ Հիմնեց «Խիզախներու պուրակ»ը, իսկ այնուհետեւ կանգնեցուց «Անմահ խիզախ»ներու յուշարձանը (գործ՝ Հայկ Մարկոսեանի, բարերարութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն խումբ մը Հ.Մ.-Լ.Մ.-ականներու): Յուշարձանին բացումը կատարուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամներու ներկայութեամբ, 30 Հոկտեմբեր 2021-ին:

Նոյն օրերուն, Հայաստանի մէջ իրենց լիազումար նիստերը կատարող Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամները այցելեցին Եռաբլուր, Պուշեանի «Զօրաց» պանթէոն եւ Հրագդանի նահատակաց պանթէոն՝ յարգանքի իրենց տուրքը ընծայելով Արցախեան պատերազմի Հ.Մ.Լ.Մ.-ական նահատակներու շիրիմներուն:

ԺԲ. Լիբանանահայութեան եւ սուրիահայութեան օժանդակութիւն

- 2020-ի Զատկին, Հ.Մ.Լ.Մ.-ական ազնիւ բարերարի մը նույիրատուութեամբ եւ Լիբանանի Քորոնայի Ճգնաժամային Շտապին հետ գործակցաբար, սննդեղէնի 1000 տուփերու

բաշխում լիբանանահայ ընկերային անապահով ընտանիքներու:

- Պէյրութի նաւահանգիստի պայմանագրումէն ետք յատուկ հիմնադրամի ստեղծում՝ օժանդակելու համար պայմանագրումէն վնասւած Հ.Մ.Լ.Մ.ի ակումբներուն, Հ.Մ.Լ.Մ.-ականներու բնակարաններուն եւ վիրատրներուն: Այս առիթով Կեղրոնական Վարչութեան կողմէ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան 55 հազար ամ. տոլարի օժանդակութիւն:

- 2021-ի նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներու սեմին, 7.5 թոն սննդեղէնի, հագուստաներու եւ դեղորայքի բաշխում լիբանանահայ ընկերային անապահով ընտանիքներու: Օժանդակութիւնը տրամադրեց Փարիզի արուարձաններէն իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութիւնը, Պէյրութի նաւահանգիստի պայմանագրումին առիթով իր կատարած մարդասիրական օժանդակութեամբ:

- Օգոստոս 2021-ին, Հ.Յ.Դ. Բիւրոյի, ՀՕՄ-ի, Համազգայինի եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութիւններու միացեալ կոչ՝ Լիբանանի եւ Սուրիոյ Հայութեան օժանդակութեան:

- Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի շրջանէն 56 մարզիկներու եւ 63 սկաուտներու համա-Հ.Մ.Լ.Մ.-ական մարզախաղերու եւ բանակումի մասնակցութեան ծախսերու օժանդակութիւն:

- Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ շրջանէն 46 մարզիկներու եւ 16 սկաուտներու համա-Հ.Մ.Լ.Մ.-ական մարզախաղերու եւ բանակումի մասնակցութեան ծախսերու օժանդակութիւն:

- Միջին Արեւելքի երկրաշարժին լրյախն տակ, Փետրուար 2023-ին, Հ.Մ.Լ.Մ.-ի Մեկուսի եւ Շրջանային Վարչութիւններուն կոչ՝ զօրակցելու Սուրիոյ շրջանին եւ այս առիթով ՀՕՄ-ի ճամբով մասնակցելու սուրիահայութեան ի նպաստ կազմակերպուած դրամահաւաքի արշաւաներուն:

ԺԳ. Համահայկական խաղեր

Համահայկական խաղերը Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէին կողմէ չորս տարի անդամ մը կազմակերպուող խաղեր են, որոնց Հ.Մ.Լ.Մ.-ի խումբերը առանձին կամ այլ խումբերու հետ միացեալ կազմերով կը մասնակցին զանազան երկրներու քաղաքներու անունով:

5-19 Օգոստոս 2023-ին, տեղի ունեցան Համահայկական 8-րդ մարզախաղերը, որոնց Հ.Մ.Լ.Մ.-ի կարգ մը շրջաններ





ՄԱՏՆԱՇՈՒՄՆԵՐ

Առաջինները - Պատգամաւորական Ընդհանուր ժողովներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, 13-րդ Ընդհանուր ժողովը ունեցաւ քոյր նախազահ: **Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի** ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան, Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն եղը. Վիզէն Արէկեանի հետ, վարեց Ընդհանուր ժողովի նախագահութեան պատասխանատու զործը:

Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովին այլ քոյր մը՝ Մարօ Քէշիշեան, Արեւմրտեան Մ. Նահանգներու շրջանէն, առաջին անգամ ըլլալով արժանացաւ միութեան բարձրագոյն՝ «Արժանաց» շքանշանին:



Վերջապէս, միութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, չորս քոյրեր մաս կազմեցին **Հ.Մ.Բ.Մ.ի** նորընտիր Կեդրոնական Վարչութեան: Չորս տարի առաջ, աննախընթաց քայլով մը, քոյր մը, առաջին անգամ ըլլալով, մաս կազմած էր Կեդրոնական Վարչութեան: Այժմ, նորընտիր կազմի անդամներուն 30 առ հարիւր քոյրեր են (13 անդամներէն չորսը)

Ամենէն արագը - Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովը նախորդներէն աւելի արագ ընթացք ունեցաւ շնորհիւ առցանց ծրագիրի մը, որուն ժողովականները միացան բջիջային հեռաձայններով: Ծրագիրը առիթը ընծայեց, որ ներկայութեան ստուգումը եւ քուէարկութիւնը (առաջարկներ որոշումներ, բանաձեւեր) կատարուին եւելտրոնային ձեւով, առանց հաշուեհամարի, ինչ որ ժողովին խնայեց բարական ժամանակ:



մասնակցեցան փոքրաթիւ կազմերով: Կեդրոնական Վարչութիւնը ներկայ չգտնուեցաւ Հայաստանի վարչապետին ներկայութեամբ կազմակերպուած բացման պաշտօնական հանդիսութեան: Շրջաններու խումբեր, ինչպէս միշտ, հանդէս եկան իրենց երկիրներու քաղաքներու անունով:

ԺԴ. Կորուսաներ

Անցնող քառամեակին միութիւնը ունեցաւ վաստակաշատ բազմաթիւ եղբայրներու կորուսաներ, որոնցմէ կ'արժէ յիշել յատկապէս **Հ.Մ.Բ.Մ.ի** Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ եղբայրներ Արմանոս Թորգոմեանը, Գարլոս Սէֆէրեանը եւ նախկին անդամներ՝ եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեանը, Գառնիկ Մկրտիչեանը, Մանուէլ Հալլանեանը եւ Ժիրայր Սարգսիսեանը:

Առ ի երախտագիտութիւն իր բազմամեայ նախկին ասենապետին վաստակին, Կեդրոնական Վարչութիւնը 30 Հոկտեմբեր 2021-ին Բիւրականի սկաուտական բանակավայրը կոչեց «Գառնիկ Մկրտիչեան բանակավայր»: Կատարուեցաւ անուանակոչութեան արարողութիւն:

Կեդրոնական Վարչութիւնը եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանի եւ Ժիրայր Սարգսիսեանի յիշատակին հիմնեց երկու ֆոնտեր՝ առաջինը Բիւրականի բանակավայրի նորոգութեան, իսկ երկրորդը՝ Համա-Հ.Մ.Բ.Մ.ական բանակումներու մասնակցութեան դժուարութիւն ունեցող սկաուտներու օժանդակութեան համար:

Թիւերու լեզուով խօսելով, **Հ.Մ.Բ.Մ.** այսօր կը հաշուէ 117 մասնաճիւղեր եւ միաւորներ: Չորս տարի առաջ ան կը հաշւէր 114 մասնաճիւղեր եւ միաւորներ: Այս քառամեակի նորոգութիւնները եղած են Օրէպրուի մասնաճիւղը (Շուէտ), Տէրիքի (Սուրբիա) եւ Հաւրէգգի (Իրաք) միաւորները:

Հինգէն աւելի անդամ ունեցող սկաուտական խումբ կամ մարզական կորիզ ունեցող շրջանները կը կոչուին միաւոր: **Հ.Մ.Բ.Մ.ի** ուազմավարական ծրագիրի գաղափարներէն մէկն է միաւորը, որ լաւապէս կը յարմարի փոքրաթիւ գաղութներու կարիքներուն: Մասնաճիւղեր թիւի նօսրացման եւ գործունէութեան սահմանափակման պատճառով կրնան վերածիլ միաւորի: Այսօր, **Հ.Մ.Բ.Մ.** ունի 8 միաւորներ:

Արեւմտեան Մ. Նահանգներ-Սաքամենթօ (2016), Մանթագլարիթա (2017) եւ «Հրաշք» (2018):





Արեւելեան Մ. Նահանգներ-Շարլոթ (2015) և Մերիմաք Հովհաննես (2017):

Գանատա-Վանդուկյան (2018):

Սուլիս-Տէրիք (2022):

Իրաք-Հաւրէզզ (2023):

Հ.Մ.Լ.Մ.ի կազմակերպական ցանցին մաս կազմող 109 մասնաճիւղերէն 12-ը այսօր ունին յատուկ կարգավիճակ: Արցախի մասնաճիւղը իր անդամներով կը գործէ Հայաստանի մէջ: Բռնի տեղահանութենէն ետք Երեւան ապաստանած արցախիներ, իրենց վարչութեամբ, կը հաւաքուին Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կելքոնատեղիին մէջ, առանձին գրասենեակով, եւ այդպէս կը շարունակեն իրենց աշխատանքը: Իսկ 11 այլ մասնաճիւղեր կը պարզեն կազմալոյն վիճակ: Կազմալոյն են Սիտնիի «Կամք» մասնաճիւղը (Աւստրալիա), Ալբանի (Հունաստա), Պուրկասի, Տոպրիչի (Պուլկարիա), Մուսուլի (Իրաք), Ախալքալաքի, Ախալցխայի (Վրաստան), Զարենցաւանի, Զօրաքարի, Ծովինարի (Հայաստան) եւ Մոսկուայի (Ռուսիա) մասնաճիւղերը: Օգոստոս 2023-ին յատուկ գործիչ մը նշանակուած է Մոսկուայի մասնաճիւղի վերականգնումի աշխատանքին համար:

Արագ ակնարկ մը Շրջանային եւ Մեկուսի շրջաններու անդամական պատկերներուն վրայ (տեսնել առանձին տախտակներով), երեւան կը հանէ հետեւեալ իրողութիւնները:-

ա) Արցախի եւ Թիֆլիսի կողքին, անցնող քառամեակին անդամական ընդհանուր թիւի նկատառելի աճ արձանագ-



ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Նորութիւնը- Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովին գլխաւոր նորութիւններէն մէկը հիմնական նիւթերու շուրջ գեկոյցներու ներկայացումն էր, անկախ Կեղոնական Վարչութեան տեղեկագիրով ներկայացուած գեկուցումէն:

Ժողովին չորս գեկուցումներ ներկայացուեցան Հ.Մ.Լ.Մ.ի ռազմավարական ծրագիրին, քարոզչական ընդհանուր մօտեցումներուն, «Հրաշը» եւ Երիտասարդական բաժանմունքներուն մասին: Զեկուցումներէն երկուքը կատարուեցան առցանց: Եղբայրներ Մանուկ Մարսէլեան եւ Գէորգ Զակործեան ժողովականներուն միացան Արեւմտեան Մ. Նահանգներէն եւ Փոքրուգալէն, մինչ եղբ. Շահէ Ենիգոմշեան (ռազմավարական ծրագիր) եւ Երիտասարդական բաժանմունքի չորս ներկայացուցիչներ (Երիտասարդական) իրենց նիւթերը մատուցեցին անմիջական ներկայութեամբ:

Մնայուն ներկան- Արցախը եղաւ Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովին մեծագոյն եւ մնայուն ներկան: Մասնակիցներ ժողովի զանազան բաժիններով (սկաուտական, մարզական, կազմակերպական...), բայց մանաւանդ յատուկ օրակարգով անդրադան Արցախին եւ Արցախի հայութեան առնչուող մտահղութիւններուն:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին լրի կազմը, ժողովէն օր մը առաջ, Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուեցաւ «Արցախի համար աղօքի համազգային օր»ուան Պատարագին:

Ժողովի բացման նիստին յատուկ խօսք արտասանեց Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի Մեկուսի շրջամի տաենապետ եղբ. Գալիք Գրիգորեան: Ժողո-



13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎԻՌՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎ



ՄԱՏՆԱՅՆՇՈՒՄՆԵՐ

Վիճ կողմէ որդեգրուեցան Արցախի հայութեան աշակցութեան շաբթ մը որոշումներ, որոնցմէ մէկը եղաւ «Հ.Մ.Ը.Մ.ի Արցախ հիմնադրամ»ի ստեղծումը: Հիմնադրամի ստեղծման որոշումին մելանք տակավին չորցած, ժողովականներ, կէս ժամուան լնքացքին աւելի քան 80 հազար տոլարի հանգանակութիւն եւ խոստումներ կատարեցին՝ ի նպաստ Արցախէն բռնի զարդար ընտանիքներու անյետաձեկի կարիքներուն եւ անոնց զաւակներուն համար նախատեսուած Հ.Մ.Ը.Մ.ական ծրագիրներուն:

Արցախէն բռնագաղթի ենթարկուած հազարաւոր հայորդիներու դժուարին պայմաններուն ի տես, Պատգամատրական Ժողովը բացման պաշտօնական հանդիսութիւն եւ եզրափակիչ ճաշկերոյք չունեցաւ: Աւելին, ժողովի ամբողջ տետողութեան, պաշտօնական կամ անպաշտօն ոչ մէկ լուր, նկար կամ տեսերիգ հրապարակուեցաւ ժողովի աշխատանքներուն եւ պատգամատրներու առօրեային մասին:

Մեծամասնութիւնը- Պատգամատրական այս Ընդհանուր Ժողովին, ինչպէս նախորդներուն, փորձ կատարուեցաւ գիտնալու ժողովականներուն ծննդավայրը եւ միութենական կազմատրաման «հայրենիքը»: Արագ ստուգումէ ետք ի յայտ եկաւ, որ մեծամասնութիւնը միութենական իր առաջին քայլերը առած է Միջին Արեւելքի մէջ՝ 72.72 տոկոս (32.95 առ հարիւր Լիբանան, 21.59 առ հարիւր Սուլիա, 13.65 առ հարիւր Միջին Արեւելեան այլ երկիրներ, 4.55 առ հարիւր Իրան): Ամերիկեան ցամաքամասի

ծնունդներուն թիւը կազմեց 14.77 տոկոս, Հայաստանը՝ 6.8 տոկոս, Եւրոպան 3.4 տոկոս եւ Վաստրալիան 2.27 տոկոս:



րած են Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի (43 առ հարիւր), Լիբանանի (16.78 առ հարիւր) եւ Հարաւային Ամերիկայի (12.87 առ հարիւր) շրջանները: Իսկ անդամական թիւի զգալի անկումներ արձանագրած են Յունաստանի (63.27 առ հարիւր), Պուլկարիոյ (61.39 առ հարիւր) եւ Գանաստայի շրջանները (23.43 առ հարիւր):

բ) Սկառուտական մարզին մէջ, թիւերը անհամեմատօրէն բարձրացած են Արցախի (166 առ հարիւր), Թիֆլիսի (77.77 առ հարիւր), Շուէտի (65.03 առ հարիւր) եւ Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ (45.58 առ հարիւր): Փոխարէնը նահանջ արձանագրած են Կիպրոսի (40.39 առ հարիւր), Պուլկարիոյ (37.11 առ հարիւր), Յունաստանի (32.48 առ հարիւր) եւ Գանաստայի մէջ (24.40 առ հարիւր):

գ) Մարզականի պարագային, թիւերը մեծապէս բարձրացած են Եւրոպայի (Լոնտոն, Վիեննա, Միլնիխ 102.77 առ հարիւր), Արեւմտեան Մ. Նահանգներու (67.83 առ հարիւր), Հունաստայի (Ալմէլո, Ալբանիա, Առնէեմ 28.12 առ հարիւր) եւ Աւստրալիոյ մէջ (27.47 առ հարիւր): Շուէտի չորս մասնաճիւղերը միասնաբար (Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոտերթելիա, Օրէպրու) օժտուած են 60 մարզիկով: Չորս տարի առաջ անոնք ուելէ մարզիկ չունէին:

Մարզական գետնի վրայ անդամական թիւերու զգալի նահանջ արձանագրած են Յունաստան (89.10 առ հարիւր), Լիբանան (75.82 առ հարիւր), Ֆրանսայի երկու մասնաճիւղերու (41.30 առ հարիւր) եւ Հարաւային Ամերիկայի մէջ (39.84 առ հարիւր): Բացառիկ յաջողութիւններու հասած են Թիֆլիսը (թիւի քառապատկում) եւ Արցախը (142 առ հարիւր յաւելում):

դ) Ո՞չ սկառուտ եւ ո՞չ մարզիկ անդամական շարքերու պարագային, թիւերը ամէնէն աւելի բարձրացած են Լիբանանի (87.07 առ հարիւր), Հայաստանի (44.63 առ հարիւր), Ֆրանսայի երեք մասնաճիւղերու (41.30 առ հարիւր) եւ Հարաւային Ամերիկայի մէջ (39.84 առ հարիւր): Բացառիկ յաջողութիւններու հասած են Թիֆլիսը (թիւի քառապատկում) եւ Արցախը (142 առ հարիւր յաւելում):

Կ'արժէ նշել, որ անցնող քառամեակին, միութեան անդամական ընդհանուր թիւը արձանագրած է 1.28 առ հարիւրի նահանջ, որուն հիմնական պատճառներէն մէկը Եւրոպայի մասնաճիւղերու անդամական ընդհանուր թիւերուն նուազումն է 20.26 առ հարիւրով: Նուազումներ արձանագրուած



են նաեւ ամերիկեան ցամաքամասին (Արեւելեան եւ Արեւմըռեան Մ. Նահանգներ, Գանատա եւ Հարաւային Ամերիկա՝ 6.06 առ հարիւր), Աւստրալիոյ (5.77 առ հարիւր) եւ Հայաստանի ու նախկին Խ. Միութեան երկիրներու մէջ (Մուսիա, Վրաստան՝ 4.02 առ հարիւր): Փօխարէնը, անդամական ընդհանուր թիւերու բարձրացում արձանագրուած է Միջին Արեւելքի (12.93 առ հարիւր) եւ Հարաւային Ամերիկայի մէջ (12.87 առ հարիւր):

Սկաուտական մարզին մէջ, անցնող քառամեակին, միութեան սկաուտներուն ընդհանուր թիւը նուազած է 3.43 առ հարիւրով: Թիւի բարձրացում արձանագրուած է միայն ամերիկեան ցամաքամասին մէջ (5.61 առ հարիւր), այլապէս նուազումներ նկատելի են Աւստրալիոյ (10.33 առ հարիւր), Հայաստանի եւ նախկին Խ. Միութեան երկիրներու (10.20 առ հարիւր), Հարաւային Ամերիկայի (6.93 առ հարիւր), Միջին Արեւելքի (5.98 առ հարիւր) եւ Եւրոպայի մէջ (3.29 առ հարիւր): Ուշադրութեան արժանի է, որ միութեան 106 գործօն մասնաճիւղերէն եւ միաւորներէն 10-ն այսօր սկաուտական շարքեր չունին:

Մարզականի պարագային, Հ.Ա.Ը.Ա.ական մարզիկ-մարզիկուհիներուն թիւը աւելցած է 7.05 առ հարիւրով: Մեծագոյն յաջողութիւնները արձանագրուած են ամերիկեան ցամաքամասին (38.88 առ հարիւրի յաւելում): Նահանջ կայ Եւրոպայի (46.40 առ հարիւր), Միջին Արեւելքի (42.78 առ հարիւր) եւ Հարաւային Ամերիկայի մէջ (2.85 առ հարիւր): Միութեան 106 գործօն մասնաճիւղերէն եւ միաւորներէն 14-ը այսօր մարզական կեանք չունին:

Սկաուտական եւ մարզական թիւերէ անկախ, անցնող քառամեակին, միութեան պարզ անդամներու (ո՛չ սկաուտ, ո՛չ մարզիկ) թիւը արձանագրած է 6.89 առ հարիւր նահանջ: Կան հակասական երեւոյթներ: Մեծ նահանջ կայ ամերիկեան ցամաքամասի (67.52 առ հարիւր), Աւստրալիոյ (39.86 առ հարիւր) եւ Եւրոպայի մէջ (11.76 առ հարիւր), իսկ ողջունելի բարձրացում՝ Միջին Արեւելքի (61.48 առ հարիւր), Հարաւային Ամերիկայի (39.84 առ հարիւր) եւ Հայաստանի ու նախկին Խ. Միութեան երկիրներու մէջ (37.88 առ հարիւր):

Այսպէս, Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովի



ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Կարեւոր յառաջընթաց- Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովի ուշագրաւ երեւոյթներէն էր քոյրերու մեծարի ներկայութիւնը: Պատգամաւորական ժողովներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, քոյրեր կը կազմէին ներկաներու թիւին 23.52 առ հարիւրը՝ 24 ներկաներ 102-ի վրայ: Նախորդ Պատգամաւորական ժողովին քոյրերու մասնակցութեան համեմատութիւնը 23.36 առ հարիւր էր: Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր ժողովին ներկայութիւնը հազի 6.6 առ հարիւր էր՝ 6 քոյրեր 90-ի վրայ:

Պատգամաւորական 10-րդ Ընդհանուր ժողովին քոյրերը կը կազմէին ներկայութեան պատկերին 16.30 առ հարիւր՝ 15 քոյրեր 92-ի վրայ: 9-րդ Ընդհանուր ժողովին պատկերը 5.40 առ հարիւր էր՝ 6 ներկայ 111-ի վրայ, իսկ 8-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին 9.4 առ հարիւր՝ 8 ներկայ 85-ի վրայ:

45 տարուան երազի մը իրականացումը- Պատգամաւորական ժողովի դադարներէն մէկուն, Հ.Ա.Ը.Ա.-Ֆրանսի ատենապետ եղը. Պօլս Մահպուակեան փառլը փոյնրով ներկայացուց Հ.Ա.Ը.Ա.ի Փարիզի մարզահամալիրին նոր ընթացք առած շինարարական աշխատանքներուն նկարները: Ժողովականները գնահատանքով արտայայտուեցան այս եղակի իրագործումին մասին, որուն զիսաւոր երախտաւորներէն, Հ.Ա.Ը.Ա.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղը. Հրաչ Միսեռեան խօսք առնելով նշեց, որ առանց սեփական կեդրոն ունենալու դժուար է դիմանալ: Նորաստեղծ կեդրոնը 45 տարուան երազի մը արդիւնքն է: Հ.Ա.Ը.Ա.-Ֆրանս, Մեկուսի փոքր մասնաճիւր մը ըլլալով հանդերձ, 45 տարիէ կ'աշխատի այս երազին իրականացման համար, յարատեւու-





ՄԱՏԱՎԱՇՈՒՄՆԵՐ

թեամբ, համբերութեամբ եւ ժրաշանութեամբ: Հետեւաբար, ան թելադրեց, իբրև Հ.Մ.Լ.Մ.ական, երբեք չվախնալ... երազել եւ երազներու իրականացման համար աշխատել: Պէտք է երազ ունենալ, պէտք է հաւատալ մեր ուժերուն, պէտք է հաւատալ Հ.Մ.Լ.Մ.ի առարելութեան եւ մեր շուրջի բարեկամներուն, հաստատեց եղը. Սիսեռեան:

Առաւելագոյն մասնակցութիւն- Խրաբանչիւր Պատգամանարական Ընդհանուր Ժողովի փորձ կը կատարուի զիտնալու, թէ ներկաներէն ո՞ր եղայրը կամ քոյրը առաւելագոյն թիտվ Ընդհանուր Ժողովներու մասնակցած է: Այս ժողովին պարզ- և ցանքաւութեամբ մասնակցութեան պատիւը կը պատկանի Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի վաստակաշատ անդամ եղը. Հրաշ Սիսեռեանին: Եղը. Հրաշ ներկայ գրտներած է միութեան 13 Պատգամանարական Ընդհանուր Ժողովներէն 11-ին: Իրեն կը յաջորդեն եղայրներ Բագրատ Եսայեան՝ 8 և Վիգեն Աւագեան՝ եօրը Ընդհանուր Ժողովներու մասնակցութիւն:



Երկու եղայր...- Զարմանալի չէ երկու եղայր տեսնել որեւէ միութեան մէջ: Սակայն հազուադէպ է երկու եղայր տեսնել միութեան մը գերազոյն ժողովին: Պատգամանարական 13-րդ Ընդհանուր Ժողովներէն կար հազուադէպ նման եղայր նաև նման երկու երեւոյթ. առաջինը Նաճարեան եղայրն երեւոյթ. Պաշտէ (Կեդրոնական Վարչութեան ատենա-

վին կար հազուադէպ նման երկու երեւոյթ. առաջինը Նաճարեան եղայրն երեւոյթ. Պաշտէ (Կեդրոնական Վարչութեան ատենա-



տուեալներով, այսօր, 25 երկիրներու մէջ տարածուած Հ.Մ.Լ.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերը եւ միաւորները կը հաշուեն 7547 սկառուտներ, 8923 մարզիկներ եւ 8683 պարզ անդամներ, ընդհանուուր՝ 25153 թիւով: Քառամեակին ընթացքին, մարզիկներու թիւը բարձրացած է 586-ով (7.05 առ հարիւր), այն պահուն երբ սկառուտներու թիւը նուազած է 268-ով (3.43 առ հարիւր), իսկ պարզ անդամներուն թիւը՝ 642-ով (6.89 առ հարիւր):

Հ.Մ.Լ.Մ.ի 25153 անդամները բաժնուած են աշխարհագրական հետեւեալ պատկերով:-

- Ամերիկան ցամաքամամ՝ 9542 անդամ (2313 սկառուտ, 6058 մարզիկ, 1171 պարզ անդամներ): Միութեան ընդհանուր թիւին 37.93 առ հարիւրը:

- Միջին Արեւելք՝ 8365 անդամ (2376 սկառուտ, 1038 մարզիկ, 4951 պարզ անդամներ): Հնդհանուր թիւին 33.25 առ հարիւրը:

- Եւրոպա՝ 2673 անդամ (914 սկառուտ, 565 մարզիկ, 1194 պարզ անդամներ): Հնդհանուր թիւին 10.62 առ հարիւրը:

- Հայաստան եւ նախկին Խ. Միութեան երկիրներ՝ 1696 անդամ (1383 սկառուտ, 313 պարզ անդամներ): Հնդհանուր թիւին 6.74 առ հարիւրը:

- Հարաւային Ամերիկա՝ 1503 անդամ (309 սկառուտ, 478 մարզիկ, 716 պարզ անդամներ): Հնդհանուր թիւին 5.97 առ հարիւրը:

- Աւստրալիա՝ 1374 անդամ (252 սկառուտ, 784 մարզիկ, 338 պարզ անդամներ): Հնդհանուր թիւին 5.46 առ հարիւրը:

Տեղեկագիրներու ներկայացումէն եւ լուսաբանական հարցում-պատասխաններէն ետք, Երեքաբթի, Յ Հոկտեմբերի յետմիջօրէի նիստը յատկացուեցաւ ժողովականներու ըստ էութեան արտայայտութիւններուն եւ Կեղրոնական Վարչութեան բացառական խօսքին:

Այսուհետեւ, ժողովականները լսեցին արխիւային, հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբներուն գեկուցումները, որոնք ընթացաւարտ Կեղրոնական Վարչութեան գործունէութիւնը նկատեցին «Յոյժ գնահատելի»:

ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐԸ

Չորեքշաբթի, 4 եւ Հինգշաբթի, 5 Հոկտեմբերին, Պատգամաւորական Ընդհանուր ժողովը ընթացաւ աշխատանքային նիստերու դրութեամբ: Աշխատանքային ինը խմբակներ՝ կազմակերպական, կանոնագրային, սկառուտական, մարզական, քարոզչական, երիտասարդական, «Մարզիկ» պաշտոնաթերթի, տեղեկատուական արհեստագիտութեան եւ տնտեսական, առանձին հանդիպումներով քննարկեցին իրենց վրատաշուութեամբ օրակարգի կէտերը եւ շրջաններու բանաձեւերու հիմամբ պատրաստեցին որոշումի կարգ անցնելիք առաջարկները:

Իբրևե նորութիւն, նիստերուն սկիզբը, 2023-2027 քառամեակի աշխատանքներու հունաւորման նպաստեցին չորս կարեւոր գեկուցումներ, որոնք ներկայացուեցան առկայ եւ առցանց դրութեամբ: «Հ.Մ.Լ.Մ.ի ուազմավարական ծրագիրը երէկ եւ այսօր» նիւթը ներկայացուց եղը. Շահէ Ենիդոմշ-

եան, «Հրաշք բաժանմունք»ը՝ եղբ. Մանուէլ Մարսէլեան (առցանց), «Հ.Մ.Լ.Մ.ի քարոզական ուղղութիւնները»՝ եղբ. Գէորգ Յակոբճանեան (առցանց) եւ «Հ.Մ.Լ.Մ.ի երիտասարդական բաժանմունքը»՝ երիտասարդական համագումարի մասնակիցներ՝ եղայրներ Արմէն Եղիայեան, Յակոբ Թութուշեան, Նարօտ Քէյվանեան եւ Նենսի Խաչատուրեան:

Զորեցարթի, կէսօրուան դադարին, ընթացաւարտ Կեղրոնական Վարչութիւնը անակնկալ մը հրամցուց ժողովականներուն, երբ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց վաստակաշատ երկու նուիրեալներ՝ քոյլ Մարօ Քէշիշեան եւ եղբ. Շահէ Ենիկոմշեան (Այս մասին տեսնել էջ 30):

Ուրբաթ, 6 Հոկտեմբերին, Հնդհանուր Ժողովը լսեց աշխատանքային նիստերու ընթացքին քննարկուած առաջարկները եւ որդեգրեց զանոնք, իբրև Հ.Մ.Լ.Մ.ի յառաջիկայ քառամեակի գործունէութիւնը առաջնորդող գլխաւոր սկզբունքներ: Այդ օր, Հնդհանուր Ժողովի աշխատանքներուն հիւրաբար ներկայ գտնուեցաւ Համագդայինի Կեղրոնական Վարչութեան անդամ Արտաշէս Շահպահեան:

Ցանցանախումբերու կողմէ ներկայացուած եւ Պատգամաւորական Հնդհանուր Ժողովին կողմէ որդեգրուած հիմնական որոշումներուն այստեղ կ'արժէ անդրադառնալ ընդհանուր գիծերով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

- Ուսումնասիրել միութեան ոչ-գործօն շրջաններու եւ Մեկուսի շրջաններու իրավիճակը եւ արդիւնքը ներկայացնել յաջորդ Պատգամաւորական Հնդհանուր Ժողովին, յիշեալ շրջաններուն հանդէպ կանոնագրային համապատասխան արամագրութիւնները գործադրելու պահանջով:

- Գործնականացնել միութեան ուազմավարական ծրագիրը եւ ճշգել ծրագիրի իրագործման առաջնահերթութիւնները: Այս նպատակին համար յառաջացնել յատուկ յանձնախումբ:

- Նկատի ունենալով Հ.Մ.Լ.Մ.ի Ակրմարի Մեկուսի շրջանին նախորդ ութը տարիներու ոչ-գործօն իրավիճակը եւ աշխուժացման բազմաթիւ ապարդիւն փորձերը, ճշգել մէկ տարւան վերաշխուժացման շրջան մը եւ դարձեալ արդիւնքի չհասնելու պարագային՝ Մեկուսի շրջանը վերածել միաւորի:



ՄԱՏՆԱՇՈՒՄՆԵՐ

պետք Լիբանանէն) եւ Բաֆֆի (Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետը Սիտնիիէն) եւ Խաչատուրեան եղայրները՝ Վիգէն (Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետը) եւ Սեւակ (Պուրբնի մասնաճիւղէն):

Դէտի հանգամանքով՝ Պատգամաւրական Ընդհանուր Ժողովներու պատմութեան մէջ երկրորդ անգամ ըլլալով, ժողովականներու շարքին էին միութեան երիտասարդական համագումարին կողմէ ընտրած չորս երիտասարդներ՝ եղայրներ Արմէն Եղիայեան (Լիբանան), Յակոր Թութուշեան (Հարաւային Ամերիկա), քոյլեր Նարօտ Քէյվանեան (Արեւելեան Մ. Նահանգներ) եւ Նենսի Խաչատուրեան (Սոսերքելիա), որոնք դէտի հանգամանքով ներկայ գտնուեցան նիստերուն եւ համագումարին արտայատուած միտքերն ու առաջարկները փոխանցեցին ժողովին:

Երկրորդ տարուան աւարտին, եթէ տակաւին փորձերը մնացին ապարդիւն՝ միաւորը սառեցնել եւ զայն լուծելու առաջարկ փոխանցել յաջորդ Պատգամաւրական Հնդհանուր Ժողովին:



13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎԻՌՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎ



ՍԿԱՌԻՑԱԿԱՆ

- Ամբողջացնել սկառուտական գիրքերու շարքը՝ պատրաստելով Մոկի եւ Երէց-Պարմանուհի ճիւղի, ինչպէս նաև՝ Վկայեալ կարգի գիրքեր:

- Ստեղծել սկառուտական-միութենական դաստիարակչական նիւթերու եւ դասական սութիւններու հարթակ (platform) մը, որ հասանելի ըլլայ բոլոր շրջաններուն: Ունենալ սկառուտական ընդհանուր գրաւոր ուղեգիծ, որ ներառէ բացարողական տեսերիզներ՝ սկառուտական արարողութիւններու, փոխանցումներու, կարգերու, աստիճաններու, եւ պաշտօններու լաւագոյն նմոյշներ, որպէսզի շրջաններու եւ Մեկուսի շրջաններու մէջ անոնք ըլլան միօրինակ:

- Նկատի ունենալով որ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. Համաշխարհային Սկառուտական Շարժումի Եւրոպայի շրջանի անդամ է, աշխատանք տանիլ Եւրոպայի մէջ գործող շրջաններու եւ տուեալ երկիրներու ազգային սկառուտական կազմակերպութիւններուն հետ՝ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ի միջոցով յարաբերութիւններ հաստատելու համար:

- Կազմել սկառուտական յանձնախումը մը, որ հետապնդէ շրջաններու սկառուտական դաստիարակչական ծրագիրներու եւ կարգերու նոյնանման կիրարկումն ու որակը:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական ընդհանուր բանակումներէն անկախ՝ երկու տարին անդամ մը կազմակերպել շրջանային մակարդակի փոքր բանակումներ:

- Զանգեր գործադրել շրջանային բանակումներ կազմակերպելու 18-30 տարեկան տարագաւոր սկառուտներու համար:

- Համա-Հ.Մ.Լ.Մ.ական յաջորդ ընդհանուր բանակումը տեղի ունենայ 2026-ին, վերադառնալով նախապէս ճշդուած ժամանակացոյցին:

- Պատրաստել համա-Հ.Մ.Լ.Մ.ական ընդհանուր բանակումի մասնագիտական պէճերու ծրագիր մը, ներառելով «Արարատեան» կարգ ստացածներու կամ թեկնածուներու ներդրումը:

- Սկառուտական դաստիարակչական գրքոյիներու մէջ ընդգրկել պատմական նիւթեր, որոնք անդրադառնան մեր անցեալի եւ ներկայի աշխարհագաղաքական պայմաններուն, պատրաստելու համար անհրաժեշտ տեղեկութիւններով զին-

ւած Հ.Մ.Լ.Մ.ականներ, որոնք փաստացի տուեալներով պատրաստ ըլլան դիմադրելու ազրափյանական կեղծ տըլեալներուն:

- Նկատի ունենալով որ Հ.Մ.Լ.Մ.ը արդէն ունի պայմանները ամբողջացնող Wood Badge-ի սկառուտներ, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ի միջոցով կազմակերպել Wood Badge-ի դասընթացքներ:

- Սկառուտական կարգերու նիւթերը վերատեսութեան ենթարկել եւ նկատի ունենալ զանազան մակարդակի արհեստագիտական եւ թուայնացման նիւթեր (օրինակ՝ IT, robotics, coding, kids space, etc.):

- Յառաջացնել «Արարատեան» կարգ ունեցող խմբապետներէ կազմուած խմբաւորում մը, որ պիտի աշխատի կարգի նոր թեկնածուներուն հետ, դառնալով անոնց խորհրդատուները (mentorship program):

- Վերանայիլ «Արարատեան» կարգի մասնակցութեան պայմանները եւ գիտելիքները, նկատի ունենալով Պատգամաւորական ժողովի եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական խմբապետական համագումարի առաջարկները: Կարգին դաստիարակչական ծրագիրը ներառէ այժմէական նիւթեր եւ աշխատանքներ, որոնք արծարծեն միութենական մարտահրաւելներ, արդի նիւթեր եւ համաշխարհային սկառուտութեան հետ կապ ունեցող գիտելիքներ:

- Սկառուտական աշխատանքներու եւ գիտելիքներու





ծրագրումի աշխատանքին մէջ աւելի մեծ համեմատութեամբ նկատի ունենալ Հ.Մ.Լ.Մ.ի համաշխարհային հանդամանքը եւ ըստ այնմ աշխոյժ մասնակցութիւն ունենալ եւ արտաքին համապատասխան քարոզութիւն կատարել:

ՄԱՐԶԱԿԱՆ

- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական մարզախաղերու ընթացքին կազմակերպել մարզիկներու վերաորակաւորումի դասընթացքներ:
- Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական մարզախաղերու համար չքացառել զանոնք Հայաստանէն դուրս կատարելու կարելիութիւնը:
- Զեռնարկել Հ.Մ.Լ.Մ.-ական մարզիկներու եւ մարզիչներու ուղեցոյցի մը պատրաստութեան: Ուղեցոյցը ըլլայ բազմալեզու եւ ընդգրկէ Հ.Մ.Լ.Մ.-ի նպատակի ծանօթացումը:

ԵՐԻԾԱՍԱՐԴԱԿԱՆ

- Երիտասարդական համագումարին ձեւը փոխել՝ դասախոսութիւններու փոխարէն աւելի շատ ընդգրկելու համար զրոյց-քննարկումներ:
- Երիտասարդական համագումարի մասնակցութեան համար իւրաքանչիւր շրջանէն ընտրել գործօն եւ ոչ գործօն երիտասարդներ:
- Աշխատանք տանիի պատրաստելու բացատրողական տեսերիկ մը, որ ընդհանուր տեղեկութիւններ ներկայացնէ



Հ.Մ.Լ.Մ.-ի երիտասարդական բաժանմունքին մասին:

ԱՐՑԱԽԻ ՅԱՏՈՒԿ

Հ.Մ.Լ.Մ. ազգային արժէքներու եւ խորհրդանիշներու աւանդապահ միութիւն է: Եռագոյն դրօշը, 1918-ի Հանրապետութեան զինանշանը, քայլերգը եւ անկախութեան խորհուրդը պահպանած է 70 տարի, երբ Հայաստան կորսնցուցած է իր անկախութիւնը:

Այսօր, երբ էիմ յանդիման կանգնած ենք Արցախի Հանրապետութեան կորուստի իրականութեան դիմաց, Հ.Մ.Լ.Մ. իր պարտքն ու պարտաւորութիւնը կը նկատէ տէր կանգնիլ եւ պահպանել Արցախի Հանրապետութեան խորհրդանիշները, այդ խորհրդանիշներուն ընդմէջէն վառ պահելու համար Արցախի վերատիրացման խորհուրդը:

Առ այդ, Պատգամաւորական ժողովը կ'որոշէ՝

1. Հ.Մ.Լ.Մ.-ի բոլոր ակումբներուն մէջ, Եռագոյնի կողքին այսուհետեւ պատուել Արցախի Հանրապետութեան դրօշը:
2. Հ.Մ.Լ.Մ.-ի հրապարակային թէ ներքին բոլոր հանդիսութիւններուն, սկառատական եւ մարզական ձեռնարկներուն ծածանել նաեւ Արցախի դրօշը:

3. Հ.Մ.Լ.Մ.-ի մարզական խումբեր եւ սկառատական միաւորներ իրենց տարագներուն վրայ կրեն Արցախը խորհրդանշող պէճեր:

4. Արցախի քայլերգը տեղ գտնէ միութեան սկառատական-ազգային երգարաններուն մէջ եւ տեւաբար ուսուցուի սկառատներուն:

5. Արցախը հիմնական եւ մնայուն տեղ ունենայ Հ.Մ.Լ.Մ.-ի դաստիարակչական-քարոզական ծրագիրներուն մէջ:

«Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախ հիմնադրամ»

Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովը կ'որոշէ յառաջացնել հիմնադրամ մը, որ պիտի կոչուի «Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախ հիմնադրամ» եւ պիտի հոգայ Արցախին բռնի տեղահանուած ընտանիքներու կենցաղային կարիքները:

Հիմնադրամին կարելի է նուիրատուութիւններ կատարել՝



13-ՐԴ ՊԱՏԳԱՄՎԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



օրինակ՝ բժշկական, հոգեբանական, կրթական, եւ այլն:

Նաեւ, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. կազմակերպէ գործունէութիւններ եւ ծրագիրներ, որոնք նպատակադրեն Արցախին բռնագաղթած ընտանիքներու երեխանները ներգրաւել դաստիարակչական եւ սկաուտական աշխատանքներու մէջ։ Պատգամաւորական ժողովը շեշտեց, որ Հ.Մ.Լ.Մ. պարտականութիւնը ունի համախմբելու Արցախին տեղահան ընտանիքներու փոքրիկները, այնպէս ինչպէս 1918 թուականին համախմբած էր Ցեղասպանութենէն ճողովրած ընտանիքներու զաւակները եւ որբերը։

- Առցանց վճարումով (On site, card payment, etc.)
- Դրամահաւաքի այլ միջոցներով (GoFundMe.com կամ այլ)
- Facebook Fundraiser-ի ձեւով։
«Հ.Մ.Լ.Մ.ի Արցախ հիմնադրամ»ը պիտի գոյանայ հետեւեալ միջոցներով։-
- ա) Հ.Մ.Լ.Մ.ի կազմակերպելիք հասութաբեր ձեռնարկներու մուտքերէն որոշ տոկոս մը հիմնադրամին յատկացնելով։
- բ) Խրաբանչիւր շրջան տարեկան իր ցենզին կրկնապատիկը հիմնադրամին տրամադրելով։
- գ) Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովի մասնակիցներուն տեղույն վրայ կատարելիք հանգանակութեամբ։

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի յատուկ աշխատանքներ

Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովը որոշեց, որ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ուսումնասիրէ արցախցիներու ընկերային-կենցաղային անմիջական եւ երկարատեւ կարիքները։ Անմիջական կարիքները հոգալու նպատակով Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ջանայ հաւաքել Արցախի հայրենակիցներուն որեւէ ձեւով օժանդակութիւն ցուցաբերելու ցանկութիւնը ունեցող անձերու եւ կազմակերպութիւններու ծառայութիւնները,

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ

- Սիութեան քարոզչական աշխատանքները աւելի կազմակերպ եւ ամուր հիմերու վրայ դնելու համար, Հ.Մ.Լ.Մ.-ի Շըրջանային Վարչութիւնները պարտին ունենալ քարոզչական յանձնախումբեր, իսկ Մեկուսի Վարչութիւնները՝ քարոզչական պատասխանատուններ։

Շըրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու քարոզչական պատասխանատունները պարտին իրենց աշխատանքները համագրել Կեղրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին հետ, հետեւելով յանձնախումբին կողմէ մշակուած յատուկ ուղեգիծին։

- Կեղրոնական Վարչութիւննը ունենայ ընկերային ցանցերով զբաղող մասնագէտ պատասխանատու մը, որուն պարտականութիւննը ըլլայ տեւական նիւթեր պատրաստել միութեան ընկերային ցանցերու զանազան հարթակներուն (website, facebook, Instagram, Tictok, եւ այլն)։

- Շարունակել մարզել շրջաններու քարոզչական աշխատանքներու պատասխանատունները, որպէսզի անոնք օժտըւին քարոզչական համապատասխան հմտութիւններով եւ կարողութիւններով։

- Նախանձախնդիր ըլլալ, որ շրջանները քարոզչական



իրենց հարթակներուն, հրատարակութիւններուն եւ տարագներուն վրայ օգտագործեն Հ.Մ.Լ.Մ.ի խորհրդանշաններուն (Վահան, Շուշանածաղիկ) պաշտօնապէս որդեգրուած օրինակները:

- «Երկիր Մետիա»ի ճամբով ձեռնարկել Հ.Մ.Լ.Մ.ի զանազան շրջաններու աշխատանքները հայութեան ծանօթացնելու աշխատանքին:

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

- Շարունակել «Մարզիկ» պաշտօնաթերթի տպագիր հրատարակութիւնը՝ եռամսեայ դրութեամբ, թերթին բովանդակութիւնը կեղրոնացնելով Հ.Մ.-Լ.Մ.ական գրականութեան, պատմութեան, արժէքներու, ինչպէս նաև՝ համա-Հ.Մ.Լ.Մ.ական նախաճեռնութիւններու ներկայացման վրայ: Միաժամանակ ստեղծել «Մարզիկ»ի եկեղարոնային կայքէջը՝ online «Մարզիկ»ը եւ Արք-ը, որոնք կարելի անմիջականութեամբ ներկայացնեն միութենական լուրեր, նկարներ եւ տեսանիւթեր:

- Շրջանները մղել իրենց մնայուն թղթակիցները ունենալու «Մարզիկ»ի մօտ, որպէսզի անոնք կանոնաւոր թղթակցութիւններով հարստացնեն թերթին եւ online «Մարզիկ»ին բովանդակութիւնը: Online «Մարզիկ»ին մէջ լոյս ընծայել նաև օտար լեզուներով թղթակցութիւններ եւ գրութիւններ:

- «Մարզիկ»ի առաքման թեքնիք եւ նիւթեական դժուարութիւնները յաղթահարելու համար, փափաքող շրջաններուն արտօնել, որ կեղրոնական Վարչութեան գիտակցութեամբ եւ «Մարզիկ»ի վարչութեան հետ համագրաբար, թերթին ցրութեամբ կատարեն այլ միջոցներով, ինչպէս՝ PDF օրինակի տպագրութեամբ, ենամակներու տարածումով, online վաճառքով եւ այլն, պայմանով որ շարունակեն իրենց համապատասխան վճարումները կատարել թերթին: Վճարումներուն ձեւը եւ չափը կ'որոշուի յետ-ուսումնասիրութեան, պարագայ առպարագայ:

- «Մարզիկ»ի 45-ամեակին առիթով, 2025-ին հրապարակել



թերթին բոլոր թիւերուն PDF օրինակները ամփոփող Տի.Վի.Տի.ն, որուն վաճառքէն կրնայ գոյանալ նիւթական որոշ գումար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

- Կեղրոնական Վարչութիւնը յառաջացնէ յանձնախումբ մը, որ զբաղի տնտեսական աշխատանքներով: Ցանձնախումբին նպատակը պիտի ըլլայ միջոցներ գտնել հանգանակութեան (օրինակ՝ նույիրատուութիւններ, երաշխատորութիւններ) եւ հասոյթի աղբիւրներ:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐՁԻՆ ՆԻՍԵՐԸ

Ուրբաթ, 6 Հոկտեմբերի յետմիջօրէի ժամը 3-ին տեղի ունեցաւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին նախավերջին նիստը՝ օրակարգի առանձին կէտ ունենալով Արցախը եւ Արցախի հայութեան համար Հ.Մ.Լ.Մ.ի ծրագիրները: Յետքըն նարկումներու տրուեցան շարք մը որոշումներ (տեսնել էջ 23), որոնց իերեւ անմիջական գործնականացում, Ընդհանուր ժողովի մասնակիցները իրենց եւ իրենց շրջաններու անունով նորաստեղծ «Հ.Մ.Լ.Մ.ի Արցախ հիմնադրամ»ին կատարեցին աւելի քան 80 հազար տոլարի նույիրատուութիւն եւ խոստում:

13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎԻՌԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ապա, ժողովականները քննեցին միութեան մայր կանոնագրութեան մէջ կատարուելիք փոփոխութեան առաջարկ-ները եւ ժողովականներու կողմէ որոշումի կարգ անցնելիք անհատական առաջարկները: Վաւերացուեցաւ 2023-2027 քառամեակի գործունէութեան նախահաշվուը եւ հաստատուեցաւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ հրապարակուելիք հաղորդագրութիւնը:

Նիստին փակումէն առաջ, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ հիւրաբար Ընդհանուր ժողովին մասնակցող, Թեհրանի Հ.Մ.-Ա.Կ.-ի՝ Հայ Մակութային Արարատ Կազմակերպութեան ատենապետ Սոֆի Զաղարբէկեան: Ան ծանօթացուց Հ.Մ.-Ա.Կ.-ի գործունէութիւնը, կառոյցը եւ նշեց, որ իբրեւ գաղափարակից միութիւններ, Հ.Մ.-Ա.Կ.-ը եւ Հ.Մ.-Լ.-Մ.-ը այսօր կը դիմագրաւեն նմանօրինակ մարտահրատէներ՝ երիտասարդութիւնը համախմբելու դժուարութիւն, հայերէն լեզուի նահանջ, նիւթական-տնտեսական տագնապ, Միջին Արեւելեան գաղութներու նօսրացում, եւ այն: Ան լրաւ, որ երկու միութիւններու միջնեւ գործակցութիւնը կենսական է: Հարկ է օգտուիլ իրարու փորձառութենէն եւ անհանջ լծուիլ նորահաս սերունդներու հայեցի դաստիարակութեան գործին: Իր խօսքին աւարտին, Զաղարբէկեան յայտնեց, որ 2024-ը կը նչէ Հ.Մ.-Ա.Կ.-ի հիմնադրութեան 80-ամեակը եւ Հ.Մ.-Լ.-Մ.-ը հրաւելուած է մասնակցելու 80-ամեակի տօնակատարութիւններուն:

Ընթրիքէն ետք, երեկոյեան ժամը 10-ին, ընթացք առաւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին վերջին նիստը, որ նախ նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամներու թիւ ճշգեց 13-ը եւ անցաւ քուէարկութեան:

Յետ քուէարկութեան, 2023-2027 քառամեակի համար Հ.Մ.-Լ.-Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցան քոյլեր Թալին Օրտողեան (Լիբանան), Սանտրա Վարդանեան (Հայաստան), Լիոնի Սարմազեան (Գանատա), Սեսիլիա Տաղեան (Հարաւային Ամերիկա), Եղբայրներ Յաչերեան (Լիբանան), Վիգէն Աւագեան (Լիբանան), Աւետիս Տէրվիշեան (Սուրբիա), Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա), Ֆէտի Խաժակ Գաղանձեան (Շուշի), Վիգէն Արէլեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Մէեր Դաւիթեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Վահէ Թաւակչեան (Արեւելեան Մ. Նահանգներ) եւ Տիրան Վահրատեան (Աւստրալիա):

Հասաւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի փակման պահը: Սրտառուէ մթնոլորտի մէջ, սրտի խօսքեր արտասանեցին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան կարգ մը անդամներ, վաստակաշատ քոյլեր-եղբայրներ եւ առաջին անդամ ըլլալով պատասխանատու նման ժողովի մասնակցող երիտասարդներ: Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան (գրաւոր խօսքը տեսմել էջ 28):

Հուսկ, ժողովը իր աշխատանքները աւարտեց կէս գիշերան ժամը 12.50-ին, «Յառաջ նահատակ» քայլերդի խմբեր-գումար:

Լուսանկարները՝ ՇԱՆԹ ՏԵՍԻՐՁԵԱՆԻ

Սկզբունքով, Հ.Մ.-Լ.-Մ.-ի Պատգամաւրական 13-րդ Ընդհանուր ժողովը պիտի ունենար բացման պաշտօնական իր հանդիսութիւնը:

Սկզբունքով նաեւ, բացման պաշտօնական այդ հանդիսութեան, Արցախի մասնաճիւղի տեսանապետ եղը. Գաւիր Գրիգորեան տեսանիւրով մը պիտի փոխանցէր Արցախի մէջ Հ.Մ.-Լ.-Մ.-ի աշխատանքները ծանօթացնող խօսք մը, որուն պիտի լըկերանային համապատասխան նկարահանումներ եւ լուսանկարներ: Արցախը շրջափակման մէջ էր եւ անկարելի էր եղօր մասնակցութիւնը ապահովել Պատգամաւրական Ընդհանուր ժողովին:

Ժողովն օրեր առաջ, խօսքը պատրաստուած էր եւ օրինակը յղուած էր Հ.Մ.-Լ.-Մ.-ի Կեդրոնական Վարչութեան. կը մնային նկարահանումները, եղք... պատահեցաւ անսպասելին Արցախի յանձնումը թշնամին եւ Արցախի հայութեան բռնագաղթը Հայաստան:

Բնագաղողներու շարքին էր նաեւ եղը. Գաւիրը, Հ.Մ.-Լ.-Մ.-ի Արցախի մասնաճիւղի իր քոյրերուն եւ եղբայրներուն ճակատագրակիցը: Ան ապահով անցաւ Հայաստան, ներկայ գտնուեցաւ Պատգամաւրական 13-րդ Ընդհանուր ժողովին եւ բերանացի խօսքը մը զեկուցեց Արցախի մասնաճիւղի գործունեութեան մասին:

Բայց երանի՝ չզեկուցէր ան եւ տեսանիւրով առցանց փոխանցէր իր խօսքը:

Երանի՝ ինք Արցախ մնար, իսկ Արցախն ալ՝ հայութեան մնար, թէկուզ շրջափակուած:

Արցախը չմնաց:

Պատմութեան մնաց 14 Սեպտեմբեր 2023-ին եղը. Գաւիրին Արցախն լրիած վերջին խօսքը, տեսանիւրին բնագիրը, իբրեւ վկայութիւն եւ յիշատակ Հ.Մ.-Լ.-Մ.-ի 111-րդ մասնաճիւղին ապրած ողիսականին եւ դառն ճակատագիրին:

Ստորեւ՝ խօսքը ամբողջութեամբ:

Բարեւ սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր ես Զեր հետ միացել եմ տեսագրութեամբ, քանզի 2020 թուականի պատերազմը առ այսօր չի աւարտուել, եւ Արցախը այս պահին գտնուում է իր յարատեւ պայքարի հերթական փուլում, մօտ 10 ամիս է ինչ Արցախը եւ Արցախում ապրող 120.000 հայ շրջափակման մէջ են իրենց իսկ հողում, չունենալով ապրելու համար նախատեսուած մինիմալ պայմաններ:

Սակայն հայի այս տեսակը յանձնուել չգիտի եւ մենք ամէն օր արարում ենք յանուն խաղաղ կեանքի:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան կամ Հ.Մ.-Լ.-Մ.-ի գործունէութիւնը Արցախում հանդիպել է բազմազան գործունէութիւնների եւ փառք Աստծոյ այսօր ունենք

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԶԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅԱՆ ԽՕՍՔԸ...

**(Հ.Մ.Լ.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԱՍՆԱՇԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ՝
ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ՀՆԴՀԱՆՈՒՐ ՃՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ՏԵՍԱՆԻՒԹԻՆ)**

Կանոնադրութեամբ ձեւաւորուած միութիւն շուրջ 100 սկառուտներով:

Սկզբում համաճարակը, այնուհետեւ Սեպտեմբերի 27-ին սկսուած ծանր պատերազմը իրենց հետքը թողեցին ինչպէս Հ.Մ.Լ.Մ.Ի, այնպէս էլ ամբողջ Արցախի վրայ, ունեցանք բազում կորուսաներ, հազարաւոր զոհեր, որոնց թւում էր Հ.Մ.Լ.Մ.ական եղբայր Արտակ Խշանեանը:

Այնուամենայնիւ դասեր քաղելով անցեալից, Արցախը նորից սկսեց ապրել, եւ պայմանների բարելաւման գուգընթաց Հ.Մ.Լ.Մ.ը նորից սկսեց իր գործունէութիւնը:

2022 թուականի Յունիսի 11-ին Արցախի ժամանեց Ամերիկայից մեր շատ սիրելի քոյր Մարտի Քչշիշեանը, ով իր շուրջը համախմբեց պատասխանատու, աշխատասէր մօտ 25 պատանի եւ սկսեց նրանց մէջ սերմանել Հ.Մ.Լ.Մ.ի գաղափարը, կրթել ինելացի սկառուտներ եւ փոքրիկ հետախոյզներ:

Շաբաթական մի քանի հանդիպումներ, որոնք լեցուն էին բազմաբովանդակ օրակարգով, սկառուտական գիտելիքներով եւ խաղերով. այդ ժամանակ Արցախում էին գտնուում Հ.Մ.Լ.Մ.ի տարբեր մասնաճիւղերից սկառուտներ, ովքեր յաճախ հանդիպում էին մեր պատանիների հետ:

2-ամսեայ գործունէութեանը յաջորդեց պատանիների գիտելիքների ամփոփումը բանակումի տեսքով: Օգոստոսի 11-16-ը Արցախում տեղի ունեցաւ առաջին Հ.Մ.Լ.Մ.ական բանակումը, որտեղ քոյր Մարտի Քչշիշեանը գուգահետ պատրաստում էր արդէն խմբապետներ: Բանակումից յետոյ Հոկտեմբերի 20-ին կայացաւ արդէն սկառուտների երդման արարողութիւնը:

Այս ամէնի ընթացքում Արցախում ունեցանք նոր խմբապետ, քանզի քոյր Մարտին երկար չէր կարող մնալ: Քոյր Ալիոնա Յակոբջանեանը եկաւ փոխարինելու քոյր Մարտի Քչշիշեանին՝ սկառուտների հետ անընդհատ աշխատելու համար:

Արդէն 2022 թուականի Դեկտեմբերի 20-ին Գանձասարի վանական համալիրում Պատարագի մասնակցելուց յետոյ սկառուտները ստացան իրենց արժանի աստիճանները: 12 սկա-



ուտ ստացան Առաջնորդի, իսկ 5-ը՝ Փոխ Առաջնորդի աստիճան:

Գործունէութեանն գուգընթաց Հ.Մ.Լ.Մ.ը ձեւաւորեց նոր վարչութիւն՝ բաղկացած 7 անդամից: Ես մեծ պատասխանառուութեամբ ստանձնեցի ատենապետի պաշտօնը եւ նույիրուեցի Հ.Մ.Լ.Մ.ի գաղափարին ծառայելու գործին:

Վարչութեանը միացաւ նաեւ եղբայր Արմենու Թահմասեանը, եւ վարչութեան հետ համատեղ ջանքերով կատարեցինք բազմազան գործունէութիւններ, կազմակերպեցինք միջոցառումներ:

Այս տարի եւս ունեցանք շատ յաջողութիւններ, Յուլիսի 2-7-ը կազմակերպուեց Հ.Մ.Լ.Մ.ական 2-րդ բանակումը Արցախում, Բ. կարգի գիտելիքների ստուգման համար:

Բանակման օրերը յատուկ էին ընտրուած եւ Յուլիսի 3-ին սկառուտները եւ Հ.Մ.Լ.Մ.ի վարչութիւնը մասնակից եղան եղբայր Արտակ Խշանեանի ծննդեան 30-ամեակին նույիրուած յուշ-ցերեկոյթին, եւ նրա յուշարձանի մօտ 3 պատանի համալրեցին Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտական շարքերը:

Խմբապետական բանակումին յաջորդեց ամառուան կարեւորագոյն առաքելութիւնը՝ նորեկների անդամագրում, նրանց հետ դասապրոցեսների կազմակերպում, արշաւներ եւ բանակումի նախապատրաստում: Ստեփանակերտի բոլոր դպրոցների լաւագոյն աշակերտներին հնարաւորութիւն

13-ՐԴ ՊԱՏԳԱՄՎԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



տրուեց մասնակցելու Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտական գործունէ-ութիւններին եւ ճանաչելու հայրենիքը ու բնութիւնը սկառուտական աշխերով: Մի քանի գործունէութիւնից յետոյ՝ Յուլիսի 23-28-ը կազմակերպուեց համարացախեան Հ.Մ.Լ.Մ.ա-կան բանակում՝ շուրջ 120 դաշլիկների համար:

Կազմակերպուած բանակման հիմնական խմբապետական կազմը արդէն երգուեալ սկառուտներն էին եւ այդ 5 օրերին նրանք իրենց գիտելիքները փոխանցեցին նորագիրներին:

Օգոստոս ամսում թուաքանակի աճի հետ համատեղ ու-նեցանք նոր առաջադիմութիւններ:

2 բանակումներին իրենց կարեւորագոյն տեղն են ունեցել Հ.Մ.Լ.Մ.ի կենտրոնական Վարչութիւնը, Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի Մեկուսի վարչութիւնը, Արցախից Հ.Մ.Լ.Մ.ական երէց Անդրանիկ Զաւուշեանը, եւ բազում հիւրեր, ովքեր սկառուտների առօրեան յիշարժան ու հետաքրքիր էին դարձնում:

Առայժմ մեր գերագոյն խնդիրը Արցախը պահեն է եւ Արցախում Հ.Մ.Լ.Մ.ն աւելի զարգացնելը:

Դէ ինչ, սիրելի քոյրեր եւ եղբայրներ, առայժմ այսքանը Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղից, յուսով ենք որ յաջորդ անգամ կը հանդիպենք Արցախում:

Յաջողութիւն բոլորիս աշխատանքներին:



անի մը օր է, ահա, հաւաքուած ենք այստեղ՝ զբաղերով մեր բոլորիս սիրելի Հ.Մ.Լ.Մ.ի հարցերով, երբ անդին, մեզի մերձաւոր տարածութեան մը մէջ սպաննած են մեր հարազատ Արցախը: Ճիշտ կ'ընենք: Մեր կազմակերպութիւններով, մեր միութիւններով ահա հարիւրամեակէ մը աւելի կը մաքառինք հայութեան տկարութիւններուն դէմ, զանոնք անյաղթահարելի ուժի վերածելու նպատակով: Մեր կեանքը լեցուն է ձախողութիւններով եւ յաջողութիւններով: Զարմանալի չէ: աշխարհը այսպէս կը թաւալի մեր աչքին առջեւ. կ'աշխատինք, որպէսզի պարտութիւնները վերածին յաղթանակի: Այս մշտնջնեական պայքարին մէջ կայ նաև Հ.Մ.Լ.Մ.ը՝ ՀՕՄ-ի, Համագոյայինի, Հ.Յ.Դ.-ի կողքին. եւ ուրիշներ՝ բնական է:

Հ.Մ.Լ.Մ.ի շրջապատին մէջ քոյր ու եղբայրները ներկաները կը հրաւիրեն իրենց սրտի խօսքը ըսելու: Ես սրտի խօսքը չունիմ. ո՛չ անոր համար, որ սիրտ չունիմ, այլ որովհետեւ կը հաւատամ, որ սիրտ ու միտք միշտ միասին պէտք է քալեն: Սիրտը առանձին վստահելի խորհրդատու չէ. երբէք չէ եղած: Ասիկա է պատճառը նաեւ, որ խօսք կը ներկայացնեմ գրաւոր, վստահ ըլլալով, որ այս ձեւով գործածուած լեզուն բոլորին կողմէ նոյն ձեւով կ'ընկալուի՝ առանց թիւրիմացութիւններու գուռ բանալու:

Ի՞նչ գործ ունիմ ես այստեղ ձեր յարգելի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մէջ ներկայացնելով Հ.Յ.Դ.Բիւրոն: Շատերու միտքին մէջ կայ այն վարկածը, որ այստեղ Դաշնակցութիւնը ներկայ է իր կամքը պարտադրելու համար. ուրիշներ կը մտածեն, թէ Բիւրոն վստահութիւն չունի Հ.Մ.Լ.Մ.ականներուն վրայ եւ կ'ուզէ ի՞նք, ուրիշներու փոխարէն, որոշելիթէ ի՞նչ պէտք է ըլլայ այս միութեան ապագան: Այս եւ նոյնանման մտածումներ անտեղի են, որովհետեւ երկուքին՝ Դաշնակցութեան եւ իրեն կապուած որեւէ ուղեկից միութեան սերտ ու ճիշտ յարաբերութիւնները խնդրոյ առարկայ կառոյցներու ծննդոցը՝ իսկ երաշխաւորուած են: Անկեղծօրէն, մեզ այստեղ մղողը այս միութիւնները իրենց կարելի լաւագոյն վիճակին մէջ տեսնելու կամ հասցնելու կամքն է, այդ ուղղութեամբ ամէնէն յարմար ուղիները միասին որոնելով կամ ստեղծելով: Ե՞րբ պատահած է, որ Հ.Յ.Դ.Բիւրոն միջամուխ ըլլայ միութեան մը գործունէութեան: Մերկ աչքով երեմն երեւցող ակնբախ թերութիւններ սրբագրելու պարագայական մատնանշումներ կը հաստատեն ըսուածը. անոնք միջամտութիւններ չեն: Ճիշտ է, որ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի պարագայական բոլոր անխափիր շահագրգուած ենք յաջորդ քառամեակին համար ամէնէն յարմար ղեկավար մարմինը կազմելու հարցով. վերջիվերջոյ այդ մարմինէն կախեալ պիտի ըլլայ անմիջական ապագային միութեան ներկայացնելիք պատկերը:

ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԻՋԵՒ ՍԵՐՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԷՋ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Լ.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱՒՐԱԿԱՆ ՀՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ)

Ես անձնապէս ներկայ եղած եմ մէկէ աւելի այսպիսի ժողովներու՝ նոյնանմա՛ն պայմաններու մէջ: Անկուշտ գովեցիք ձեր շրջանաւարտ Կեդրոնական Վարչութիւնը: Ճի՞շդ ըրիք, որովհետեւ խսկապէս աննախընթաց դժուար էին իր ժամանակաշրջանի տիրող ամէն տեսակի պայմանները: Արտաքին պայմաններու մէկ մասը ի գօրու էն նաեւ հիմա՛. ներազգային կացութիւնը ծայր աստիճան վատթարացած է: Հետեւաբար նոյն ակնկալութիւնները ի գօրու են նորընտիր վարչութեան համար ալ: Մենք բոլորս զօրավիր պիտի ըլլանք այս վարչութեան, որպէսզի յաջորդ Պատգամաւորական ժողովին կրկնը այն, ինչ տեղի ունեցաւ ա՛յս անգամ:

Ես կը յորդորեմ, որ նորընտիր վարչութիւնը զգոյշ ըլլայ, որպէսզի Հ.Մ.-Լ.Մ.ը շարունակէ մնալ միակամ՝ կառչած իր բոլոր սկզբունքներուն եւ ձգտի իր գործերու բարելաւման յաջողութեան: Ճիպ թափէ մանաւանդ ամուր պահելու իր ներքին միասնականութիւնը, որ գաղտնիքն է իր յաջողութիւններուն: Կամայ թէ ակամայ միջամուխ չըլլայ այն միթնողրատին, որ տիրեց վերջին քանի մը տարիներուն Մ. Նահանգներու արեւմտեան շրջանէն ներս:

Շարունակէ իր գործը, այդտեղ եւ այլուր, ըստ իր բնաբանին՝ բարձրանալով եւ բարձրացնելով: Զկա՛յ աւելի նուիրական գործ:

Վարչութիւնը իր գործը կատարէ մեզ բոլորս յատկանչող համեստութեամբ: առանց ամօթխածութեան, բայց նաեւ՝ առանց անբարտաւանութեան: Զըլլալ իկարոսին պէս, այլ՝ հետեւիլ իր հօր՝ Դեղալոսին, որուն խրատը անտեսելու պատճառով թուիչքի տաեն իր անզգուշութեան պատճառով իկարոս ծովը ինկաւ, իր անունը փոխանցելով ծովուն եւ մօտակայ կղզին:

Շարունակել տագնապիլ հայրենիքի ցաւերով եւ ընել ինչ որ անիրածեշտ է շրջելու համար համազգային կեանքէն ներս յաջորդական պարտութիւններու ստեղծած խորապիչ մտահոգիչ մթնոլորտը, որ իր ստեղծած հիւման մէջ կը պահանջանական ներկային հեղինակները, ծրագրողն ու գործադիրները: Հուրն ու ջուրը կարեի չէ միասին նլատեցնել, քաջ գիտնալով, որ տեւապէս ապարդիւն՝ զիրար չէ զոքացնելով պիտի զբաղին անոնք: Կը ստացուի մէր առաքեալներէն մէկուն՝ Սիմոն Վրացեանի «Փակ»ի պատմութիւնը, որ հրատարակւած է իր «Կեանքի ուղիներով» շարքի հատորներէն մէկուն մէջ: Հետեւաբար միասնականութիւնը ազգային ուժերու



Շարունակել տագնապիլ հայրենիքի ցաւերով եւ ընել ինչ որ անիրածեշտ է շրջելու համար համազգային կեանքէն ներս յաջորդական պարտութիւններու ստեղծած խորապիչ մտահոգիչ մթնոլորտը: Այլեւս բացայաց են հայութեան ապրած գժոխային ներկային հեղինակները, ծրագրողն ու գործադիրները: Հուրն ու ջուրը կարեի չէ միասին նլատեցնել, քաջ գիտնալով, որ տեւապէս ապարդիւն՝ զիրար չէ զոքացնելով պիտի զբաղին անոնք: Կը ստացուի մէր առաքեալներէն մէկուն՝ Սիմոն Վրացեանի «Փակ»ի պատմութիւնը, որ հրատարակւած է իր «Կեանքի ուղիներով» շարքի հատորներէն մէջ: Հետեւաբար միասնականութիւնը ազգային ուժերու

լու համար համազգային կեանքէն ներս յաջորդական պարտութիւններու ստեղծած խորապէս մտահոգիչ մթնոլորտը, որ իր ստեղծած հիւման պարտութիւններու մութեամբ կը սպառնայ վերջակէտ դնել հայութեան հազարամեակներ հաշուող գոյութեան:

Վերջապէս, զգոյշ ըլլալ կեղծ առաքեալներէ, որոնք կը քարոզեն այնպիսի միասնականութիւնն, որ կը փորձէ կողքիողքի դնել, հաւասար համարել զոհն ու դահիճը: Այլեւս բացայաց են հայութեան ապրած գժոխային ներկային հեղինակները, ծրագրողն ու գործադիրները: Հուրն ու ջուրը կարեի չէ միասին նլատեցնել, քաջ գիտնալով, որ տեւապէս ապարդիւն՝ զիրար չէ զոքացնելով պիտի զբաղին անոնք: Կը ստացուի մէր առաքեալներէն մէկուն՝ Սիմոն Վրացեանի «Փակ»ի պատմութիւնը, որ հրատարակւած է իր «Կեանքի ուղիներով» շարքի հատորներէն մէջ: Հետեւաբար միասնականութիւնը ազգային ուժերու



13-ՐԴ ՊԱՏԳԱՄՎԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ՀՆԴՀԱՆՈՒԹՅ ԺՈՂՈՎԻՆ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ՝

ՔՈՅՔ ՄԱՐՈ ՔԷՇԻՇԵԱՆ ԵՒ ԵՂԲ. ՇԱՀՔ ԵՆԻԳՈՄՇԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՆ Հ.Մ.Լ.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱԽԻՆ

Հ.Մ.Լ.Մ.Ի Պատգամաւորական 13-րդ Հնդհանությունը ժամանակակից մեջ հրամցուց ժողովականներուն, երբ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով պարգևատրեց Հ.Մ.Լ.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն վաստակաշատ երկու անդամներ՝ քոյր Մարօ Քէշիշեանը և եղբ. Շահէ Ենիգոմշեանը:

Պարգեւատրումը նախատեսուած էր կատարել Պատգամաւորական Հնդհանությ ժողովի բացման պաշտօնական հանդիսութեան ընթացքին: Նախըն-

թացները շատ էին: 1995-էն՝ Պատգամաւորական 6-րդ Հնդհանությ ժողովին սկսեալ սովորութիւն էր իւրաքանչիւր Հնդհանությ ժողովի բացման հանդիսութիւնան արժանաւորներ պարգեւատրել: Այս անգամ սակայն, բացման հանդիսութեան ջնջումով, պարզեւատրումը կատարուեցաւ ներքին հանդիպումով, Պատգամաւորական ժողովի լրիւկագմին ներկայութեամբ:

Աննախընթացը, այս պարագային, քրոջ մը արժանացումն էր միութեան բարձրագոյն շքանշանին: 46 տարուան ընթացքին «Արժանեաց» շքանշանի տիրացած էին 92 եղբայրներ: Քոյր Մարօ Քէշիշեան կը հանդիսանար առաջին քոյրը, որ արժանաբար կը միանար յիշ-

եալ եղբայրներու փաղանգին: Իր հետ, «Արժանեաց» շքանշանը կուրծքին կրելու պատիւին կ'արժանանար այլ նույիրեալ մը, որ գլխաւոր «միտքն» ու «ճարտարապետը» կը հանդիսանար Հ.Մ.Լ.Մ.Ի ուազմավարական ծրագիրին, 15 տարուան ճիգ ու ջանք ի գործ զնելով ծրագիրին մշակման եւ տեւական արդիականացման համար:

ՊԱՐԴԵՒԱՏՐՈՒՄԸ

Պարգեւատրում հանդիսութիւնը տեղի ունեցաւ կէսօրուան ժամը 2-ին, Հնդհանությ ժողովի հանդիսարահին մէջ: Բացման խօսքով հանդէս եկաւ ընթացաւարտ կերպոնական վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Անրաւա, որ Հ.Մ.Լ.Մ. գեղեցիկ սովորութիւնը ունի Պատգամաւորական Հնդհանությ ժողովներու բացման հանդիսութիւններուն վաստակաւոր միութեաններ պարգեւատրելու: Սովորութիւնը կը շարունակուի, սակայն այս անգամ իւրայատուկ պայմաններու մէջ, որովհետեւ մեր ժողովուրդն ու հայրենիքը այսօր կը գիմագրաւեն ծանր պայմաններ եւ նման պայմաններու մէջ ճիշդ պիտի ըլլար մեծաշուրջ, պերճ հանդիսութիւններ կազմակերպել:

Շարունակելով, եղբ. Նաճարեան ընթերցեց պարգեւատրեալ քրոջ ու եղբօր



ՃԱՆՉՆԱՆՔ

ՔՈՅՑՐ ՄԱՐՕ ՔԷՇԽԵԱՆ



Քոյր Մարօ Քէշխեան ծննդաթ է Լիքանանի Այնձար հայատանք՝ Նախակրութիւնը եւ միջնակարգ ուսումը ստացած է ծննդավայրի Ազգ. «Յառաջ» վարժարանը, իսկ երկրորդականը՝ Ազգ. Լեւոն և Սոֆիա Յակոբեան Քոլեջը, Պուրճ Համուստ. Ապա, շրջանաւարտ եղած է Սէն Ժոզէֆ Համալսարանի հայագիտութեան ճիւղէն:

Քոյր Մարօ կանուխէն նետուած է կրթական ասպարեզ, իբրեւ հայերէն լեզուի եւ արուեստի նիւթերու ուսուցիչ, իսկ աւելի ուշ՝ իբրեւ մանկապարտէզպանուիի: Միաժամանակ, ան հետեւած է Պէյրութի Հայկակեան համալսարանի ուսուցիչներու վերապատրաստութեան դասընթացքին եւ Համազգայինի Նշան Փալանձեան ճեմարանի մանկավարժութեան ծրագիրին:

Իբրեւ մքջնիկ, փոքր տարիքէն ան անդամակցած է ՀՕԽ-ի Այնձարի մասնաճիւղի սկաուտական բաժանմունքին: Աւելի ուշ ան փոխանցուած է Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուստի մասնաճիւղ, իբրեւ արենոյշներու Վարիչ Առաջնորդ: Հասած է մասնաճիւղի խմբապետութիւնի պաշտօնին: Աւելի ուշ, պատախանատու պաշտօններ վարած է մասնաճիւղային եւ Շրջանային մակարդակներու վրայ:

1984-ին, քոյր Մարօ Քէշխեան հաստատուած է Մ. Նահանգներ եւ լծուած է հրապարակագրական-խմբագրական աշխատանքի: Մաս կազմած է «Ասպարեզ» օրա-

թերթի եւ «Հորիզոն» պատկերասփիւրի կայաններու անձնակազմներուն: Գործօն անդամ դարձած է Հ.Մ.Ը.Մ. ի Լու Անձելըսի մասնաճիւղին: Թէ՛ Լիքանանի եւ թէ Մ. Նահանգներու մէջ ան քանի մը շրջան վարած է Շրջանային Խմբապետութիւնի պաշտօն: Բազմից ընտրուած է Հ.Մ.Ը.Մ. ի Արևմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ:

Խորհրդային Հայաստանի վերջին օրերուն, 1990-ին, քոյր Մարօ Հ.Մ.Ը.Մ. Կեղրոնական Վարչութեան կողմէ գործուղուած է Հայաստան եւ իր մեծ ներդրումը ունեցած է հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ. ի մասնաճիւղներու ստեղծման աշխատանքին: Ան դեկավարած է համահայաստանան քանի մը բանակում: 2002-ին, վարած է համաՀ.Մ.Ը.Մ. ական 7-րդ բանակումին փոխ խմբապետութիւնը: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ. ի երեք Պատգամաւորական Ընդհանուր ժողովներու (1991, 2007, 2019):

Արցախեան 44-օրեայ պատերազմէն ետք, քոյր Մարօ իր գործօն մասնակցութիւնը բերած է Հ.Մ.Ը.Մ. Արցախի կառոյցի վերականգնուումի գործին, Կեղրոնական Վարչութեան կողմէ Արցախ գործուղուելով եւ Հ.Մ.Ը.Մ. ի տեղույն մասնաճիւղի սկաուտական աշխատանքները վերակազմակերպելով:

Իր երկարամեայ նուիրեալ աշխատանքին համար, քոյր Մարօ Քէշխեան արժանացած է բազմաթիւ գնահատականներու եւ պարգևեատրումներու, որոնցմէ կ'արժէ յիշել «Մարգիկ» պաշտօնաթերթի եւ «Ասպարեզ» օրաթերթի պատույ գիրերը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան «Վարդան Բախչչեան» յուշամետալը եւ Հ.Մ.Ը.Մ. Արևմտեան Մ. Նահանգներու շրջանին կողմէ տրուած «Ծառայութեան» շքանշանը: 2011-ին Մ. Նահանգներու ծերակուտական Էտրմ Շիֆի կողմէ ան արժանացած է «Տարուան կիսք» կոչումին, իսկ 2012-ին հոչակուած է տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ. ական»:

Քոյր Մարօ Դեկտեմբեր 2018-ին փոխադրուած է Հայաստան, ուր այժմ կը վարէ ՀՕԽ-ի Հայաստանի Շրջանային Վարչութեան ատենապետութեան պատախանատու պաշտօնը:



13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՐՈՒԿԱՆ ԺՈՂՈՎ

միութենական վաստակը ծանօթացնող տուեալները եւ ներկաներու շնորհաւորական ծափերով զանոնք պարգևեատրեց Հ.Մ.Լ.Մ.ի «Արժանեաց» շքանշանով: Ապա, ան հրաւիրեց պարգեւատրեալները՝ արտասանելու իրենց սրտի խօսքերը:

ՔՈՅՑ ՄԱՐՈ ՔԵՇԻՇԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՍՔԸ

Քոյց Մարո Քէշիշեան խօսքը սկսաւ անձնական յուշով մը, թէ ինչպէս Խ. Հայաստանի օրերուն մուտքը մերժըւած է հայրենիք՝ Հ.Մ.Լ.Մ.ական ըլլարուն պատճառով, սակայն հետագային,

Հայաստանի անկախացումին ետք, եղած է առաջիններէն, որ 1990-ին, Հ.Մ.Լ.Մ.ի օրուան կեդրոնական Վարչութեան կողմէ գործուղուած է հայրենիք եւ դերակատար եղած է Հ.Մ.Լ.Մ.ի մասնաճիւղերու ստեղծման:


Քոյց Մարո շեշտեց, որ Հ.Մ.Լ.Մ.ը եղած է երկրորդ տունը: Մայրը եղած է սկառու խմբապետուհին: Մօրը հետ ան մասնակցած է Հայէպի միջմասնաճիւղային վերջին խաղերու տողանցքին: Ան ըսաւ, որ Հ.Մ.Լ.Մ.ի մէջ սորված է համարձակութիւն, տրամաբանութիւն, արդարամտութիւն, եւ մանաւանդ՝ անձը միութենէն տարբերելու կարողու-

թիւն: Միութիւնը անձէն աւելի բարձր է, - նկատել տուաւ ան եւ աւեցուց. անձերը կու գան, իրենց պարտականութիւնը կը կատարեն ու կ'անցնին, միութիւնը կը մնայ: «Ես կը հաւատամ Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան եւ ես կը յայտարարեմ, որ եթէ ինծի գոնէն դուրս դնէք՝ ես պատուհանէն ներս կը մտնեմ», նշեց ան:

Շարունակելով, քոյց Մարո յայտնեց, որ մեծապէս երախտապարտ է Հ.Մ.Լ.Մ.ին: «Հ.Մ.Լ.Մ.ը ինծի սորվեցուց շատ բան՝ չարքաշութիւն, անկեղծութիւն եւ առանց վհատելու աշխատանք: Ես գործած եմ առանց պաշտօնի,

ՃԱՆՉՆԱՆՔ

ԵՂԲ. ՇԱՀԷ ԵՆԻԳՈՄԾԵԱՆ



Եղբ. Շահէ Ենիկոմշեան ծնած է Պէյրութ, Լիքանան: Նախակըրպութիւնը եւ երկրորդական ուսումը ստացած է Համազգայինի Նշան Փալանձեան Շեմարանին մէջ, ապա շրջանաւարտ եղած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, իբրեւ բժիշկ: Այնուհետեւ, մասնագիտացած է Մ. Նահանգներու:

Միշիկընի համալսարանը:

Եղբ. Շահէ վեց տարեկանին, իբրեւ գայլիկ, անդամակցած է Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին: Սկառուտական կարգերու մէջ յառաջանալով, 1970-ականներու սկիզբը ան հասած է մասնաճիւղի խմբապետի պաշտօնին: Եղած է պատրեթապոլի «Կամք» խումբի մարզիկ:

Եղբայր Շահէի խմբապետութեան տարիներուն Հ.Մ.Լ.Մ.ը վերածուած է համագաղութային կազմակերպութեան: Ան մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտական առաջին կանոնագիրը մշակելու կոչուած յատուկ յանձնախումբերուն, ներառեալ՝ ուղմա-

վարական ծրագրումի յանձնախումբին մէջ: Մասնակցած է Հ.Մ.Լ.Մ.ի իինգ Պատգամատրական Ընդհանուր ժողովներու (1979, 1983, 1987, 2011 եւ 2023):

Հ.Մ.Լ.Մ.ի սկզբունքներուն եւ արժեքներուն զերմօրէն փարած, եղբ. Շահէ Ենիկոմշեան Մ. Նահանգներ հաստատուելէ եսք շարունակած է միութենական իր գործունեութիւնը՝ առաւելաբար դաստիարակչական եւ ապագայի ծրագրումի մարզերուն մէջ: 2003-2005 ան եղած է Հ.Մ.Լ.Մ.ի Սանքա Գլարայի «Անի» մասնաճիւղի ատենապետ:

Եղբ. Շահէ իր ազակցութիւնը բերած է Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան զանազան աշխատանքներուն: Հ.Մ.Լ.Մ.ի մասին բազմաթիւ յօղուածներով հանդէս եկած է միութեան պաշտօնաթերքը «Մարզիկ»ին եւ հայ մամուլին մէջ: Ան պատրաստած է Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին յատուկ խմբապետներու դաստիարակչական ուղեցոյցգիրքը:

2017-ին, եղբ. Շահէ արժանացած է Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ի տիտղոսին:





առանց գնահատանքի եւ առանց որեւէ ակնկալութեան եւ պիտի շարունակեմ դործել: Ինձմէ ազատում չունիք», եղակացուց քոյլը Մարօ Քէշիշեան:

ԵՂԲ. ՇԱՀՔ ԵՆԻԳՈՄՇԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՍՔԸ

Իր կարգին, պարգեւատրեալ եղբ. Շահք Ենիգոմշեան խօսքը սկսաւ չնորհակալութեամբ: Այս չնորհակալութիւն յայտնեց ընտանիքին եւ նշեց, որ երեք զաւակներն ալ Հ.Մ.Լ.Մ.-ական են: Պատճառով, ըստ ան-, որովհետեւ անոնք տեսած են, թէ ի՞նչ աստիճան ապրած եմ Հ.Մ.Լ.Մ.-ով եւ որքա՞ն օգտըլած եմ անկէ: «Իսկապէս, ես Հ.Մ.Լ.Մ.-ի մէջ բախտաւոր եղած եմ, որովհետեւ այն օրերուն, երբ Հ.Մ.Լ.Մ.-ը համագաղութային կազմակերպութեան կը վերածուէր, բախտը այնպէս բերաւ, որ ես այդ օրերուն Հ.Մ.Լ.Մ.-ի մեծերուն հետոն էի», նշեց ան եւ շարունակեց: «Երիտասարդները, որոնք այսօր հոս են, կը մաղթեմ որ մօտենան հոս եղող, իսկապէս դաստիարակող անձերուն, որոնցմէ շտաբան կրնան սորվիլ անոնք»:

Եղբ. Ենիգոմշեան արտայայտուեցաւ Հ.Մ.Լ.Մ.-ի մէջ իր ապրած փորձառութեան մասին եւ խօսքը եզրափակեց ըսելով: «Ես բախտաւոր էի: Հ.Մ.Լ.Մ.-ը ինձի սորվեցուց ամէն ինչ: Ես գործի մէջ յաջողեցայ: Անկեղծութեամբ կ'ըսեմ, որ կարողացայ շատ մեծ ընկերութիւն մը վարել, որովհետեւ Հ.Մ.Լ.Մ.-ի մէջ, իբրև սկառուտ, ապա նաև՝ իբրև պատասխանատու, արդէն սորված էի ինչպէս կառավարել: Մեր մեծ ընտանիքը միշտ հզօր է: Երախտապարտ եմ Հ.Մ.Լ.Մ.-ի մեծ ընտանիքին եւ բոլորին կը մաղթեմ բարգաւաճ օրեր»:

Խօսքերէն ետք, պարգեւատրեալ քոյլըն ու եղբայրը ընդունեցին ներկաներու չնորհաւորութիւնները եւ պահը անմահացուցին յիշատակի նկարներով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Լ.Մ.-ի ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հ.Մ.Լ.Մ.-ի Պատգամատրական 13-րդ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 2-7 Հոկտեմբեր 2023-ին, Հայաստան: Ժողովին մասնակցեցան միութեան Շրջանային եւ Մեկուսի 30 շրջաններէն 75 իրաւասու ձայնով պատգամատրեալ, Հ.Յ.Դ. Քիրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչ Սոֆի Զաղարբէկեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Արտաշէս Շահպազեան եւ խորհրդակցական ձայնով 28 իրաւիրեալներ, ընդամենը՝ 103 մասնակիցներ: Ժողովին մէկ մասին ներկայացուցիչ Հակոբ Տէր Խաչատրութեան:

Ժողովը իր տեսակին մէջ իրայատուկ էր, որովհետեւ կը գումարուէր ներազգային ժամանակամատութեան մէջ:

Պատգամատրական Ընդհանուր Ժողովը մանրամասն քննութեան ենթարկեց 2019-2023 քառամեակի Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան գործունեութիւնը, յոյժ գնահատելի նկատեց կատարուած աշխատանքները եւ ապագայի հաջույն նշակեց նոր ծրագիրները:

Ժողովը լայնօրեն անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ.-ի սկառուտութիւնը, մարզական կեանքը եւ երիտասարդութիւնը յուզող իրատապ հարցերուն եւ համապատասխան որոշումներով քայլեր առաջարթեց անոնց բափ տալու նպատակով: Արձարձուեցան նաեւ միութեան քարոզութեան, արդի արեւտագիտութեան եւ ռազմավարական ծրագիրներու կապուած հարցեր:

Ժողովը ընդհանուր արժենորումը կատարեց միութեան կազմակերպական Ընդհանուր իրավիճակին եւ Ընդգծեց Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Կ.ի եւ միութեան աշխարհասիրու մասնաճիշերուն աշխատանքային դաշտերը ընդլայնելու կարելիութիւնները:

Ժողովը յատուկ օրակարգով կանգ առաւ Արցախի եւ Արցախի հայութեան կացութեան դիմաց: Ժողովը հաստատեց, որ դէմ յանդիման կը գրտնիլինք Արցախի ժամանակաւոր կորուսի իրականութեան դիմաց, հետեւաբար Ժողովը Հ.Մ.Լ.Մ.-ի պարտքն ու պարտաւորութիւնը նկատեց տէր կանգնիլ եւ պահպանել Արցախի Հանրապետութեան խորհրդանշիները՝ դրօշը, քայլերգն ու զինանշանը, այդ խորհրդանշիներուն ընդմէջէն նոր սերունդին մօտ վառ պահելու համար Արցախի վերատիրացման խորհուրդը:

Իրեւ Արցախի գաղքականներու անմիջական աջակցութեան քայլ, Ընդհանուր Ժողովը յառաջացուց «Հ.Մ.Լ.Մ. Արցախ հիմնադրամ»ը, որ պիտի օժանդակէ արցախից գաղքականներու անյետաձգելի կարիքներուն:

Իր հնգօրեայ աշխատանքներուն աւարտին, Ընդհանուր Ժողովը 2023-2027 քառամեակի Հ.Մ.Լ.Մ.-ի նոր Կեդրոնական Վարչութիւնը ընտրեց հետեւեալ կազմով.- եղբ. Յակոբ Խաչերեան (Լիքանան), եղբ. Վիգէն Աւագեան (Լիքանան), քոյր Թալին Օրտողլեան (Լիքանան), եղբ. Աւետիս Տէրվիշեան (Սուրիհա), քոյր Սահնորա Վարդանեան (Հայաստան), եղբ. Հրաչ Միսերեան (Ֆրանսա), եղբ. Ֆետի Խաժակ Գազանձեան (Շուէտ), եղբ. Վահե Թանաչեան (Արեւելեան Մ.Ն.), եղբ. Միեր Դաւիթեան (Արեւմտեան Մ.Ն.), եղբ. Վիգէն Արեւեան (Արեւմտեան Մ.Ն.), քոյր Լիոնի Սարմազեան (Գանատա), քոյր Սեսիլիա Տաղեան (Հարաւային Ամերիկա) եւ եղբ. Տիրան Վահրատեան (Աւստրալիա):

7 Հոկտեմբեր, 2023

**ԳԻՒԱՆ Հ.Մ.Լ.Մ.-ի ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ
13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ**

13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Զախիմ' Արեւմտեան Մ. Նահանգներու պատգամալորները շրջանի Կելքոնական Վարչութեան անդամ
եղայրներ Արմանս Քիլիմանի և Օշին Փիրումեանի հետ:
Աջիմ' Հ.Ս.Ը.Մ.Ի Միւնիխի Մեկուսի շրջանի պատգամալորը:



Զախիմ' Հ.Ս.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի պատգամալորները:
Աջիմ' Հ.Ս.Ը.Մ.Ի Գանատայի շրջանի պատգամալորները:



Զախիմ' Հ.Ս.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի շրջանի պատգամալորները:
Աջիմ' Հ.Ս.Ը.Մ.Ի Աւստրալիոյ շրջանի պատգամալորները:



Զախիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Սուրինյ պատգամատրները շրջանի Կեդրոնական Վարչութեան
անդամ եղբ. Մանուկ Քեօշկերեանի հետ:
Աջիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Երուսաղէմի, Հայֆայի և Եաֆայի Մեկուսի շրջաններու պատգամատրները:



Զախիմ' Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի Մեկուսի շրջանի պատգամատրը:
Աջիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Լիբանանի շրջանի պատգամատրները:



Զախիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Քույէրի Մեկուսի շրջանի պատգամատրները:
Աջիմ' Հ.Մ.Բ.Մ.-Ֆրանսի և Լալանսի Մեկուսի շրջաններու պատգամատրները:

13-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՀՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Զախիմ՝ Հ.Մ.Ք.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պատգամաւորները:
Աջիմ՝ Հ.Մ.Ք.Մ.ի Արցախի Մեկուսի շրջանի պատգամաւորը:



Զախիմ՝ Հ.Մ.Ք.Մ.ի Ալեքսյի Մեկուսի շրջանի պատգամաւորները:
Աջիմ՝ Հ.Մ.Ք.Մ.ի Լոնտոնի Մեկուսի շրջանի պատգամաւորները:



Զախիմ՝ Հ.Մ.Ք.Մ.ի Առնիեմի Մեկուսի շրջանի պատգամաւորը: Կեդրոնը՝ Վիեննայի պատգամաւորը:
Աջիմ՝ Պաղտատի պատգամաւորը:



Զախիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Սոսկուայի եւ Թիֆլիսի Մեկուսի շրջաններու պատգամաւորները:
Աջիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Սոտերթելիոյ շրջանի պատգամաւորները շրջանի երիտասարդականի
ներկայացուցիչն եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղը. Ֆէտի Խաժակ Գազանճեանի հետ:



Հ.Մ.Բ.Մ.ի Շուկոսի Մեկուսի Շրջաններու պատգամաւորներ: Զախիմ' Սթոքհոլմի պատգամաւորը:
Կեդրոնը՝ Օրէպրուի պատգամաւոր: Աջիմ' Վեսթերոսի պատգամաւորը:




Զախիմ' Հ.Մ.Բ.Մ.ի երիտասարդական համագումարէն ընտրուած պատգամաւորները:
Աջիմ' Հ.Մ.Բ.Մ.ի Գահիրէի Մեկուսի շրջանի պատգամաւորը:

ՀԱՄԱՀ.Մ.Ը.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՔԱՅԼԵՐԳ

**Խոսք եւ երաժշգի Ակուսրին Անալիան
Դաշն Յարութ Երէցեան**

Աշխարհի չորս կողմէն եկած ենք մենք,
Սկաուտական բանակումի:
Ուստը միասնաբար կը կատարենք,
Քաջ ըլլալով, առարինի:

Միշտ ուրախ՝ միշտ հզօր մեր կամքով,
Մենք կ'աշխատինք վճռական,
Մինչեւ որ նպատակներուն հասնինք,
«Խրոխտ, խիզախ ու միշտ պատրաստ»:
Կամաւոր բանակ, գործենք բարին:



Ծառայենք հպարտ՝ հայրենիքին:
Բարձրանանք սկաուտներով,
Հ.Մ.Ը.Մ.ի խտէալներով,
Բարձրացնենք շարքերը,
Մինչեւ յաղթանակ պայքարելով:

Յառաջ, յառաջ, Հ.Մ.Ը.Մ. յառաջ,
Հաստատ քալենք, ուժեղանան:
Պահենք Արցախ, Սփիտք եւ Հայաստան:
Ըլլանք մէկ դատ, մէկ գաղափար:

Միշտ ուրախ՝ միշտ հզօր մեր կամքով,
Մենք կ'աշխատինք վճռական,
Մինչեւ որ նպատակներուն հասնինք,
«Խրոխտ, խիզախ ու միշտ պատրաստ»:









ԲԱՑՈՒՄԻՆ ՕՐ ՄԸ ԱՌԱՋ

ՀԱՄԱՀ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՄԱՍԼՈՅ ՁՈՒՒՄՈՒԾ

Հինգշաբթի, 20 Յուլիսի առաւտօտեան ժամը 11.30-ին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի գրասենեակին մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին ծանօթացման մամլոյ ասուլիսը, որուն ներկայ գտնուեցան հայրենի լրատուամիջոցներուն ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամներ՝ եղբայրներ Վաչէ Նաճարեան, Դաւիթ Յակոբեան, Ֆէտի Խաժակ Գազանձեան եւ քոյր Թալին Օրտողլեան:

Մամլոյ ասուլիսին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեան, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պոլոս Մահապուակեան:

Եղբ. Դաւիթ Յակոբեան ողջունեց ներկայ թղթակիցները եւ ծանօթացուց մամլոյ ասուլիսին մասնակից պատասխանատուները: Ապա, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան խօսեցաւ բանակումի նախապատրաստական աշխատանքներուն մասին: Ան լաւ, որ աշխատանքները Բիւրականի եւ Երեւանի մէջ ընթացք առած են վեց ամիսէ ի վեր: «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայրը ենթարկուած է վերանորոգման եւ այժմ պատրաստ է ընդունելու աշխարհի զանազան երկիրներէն ժամանող Հ.Մ.Լ.Մ.ականները: Քոյր Սանտրա Վարդանեան չնորհակալութիւն յայտնեց Արագածոտնի մարզի շտապ օգնութեան բաժանմունքի պատասխանատուներուն եւ ոստիկանութեան, որոնք իրենց աջակցութիւնը կը ցուցաբերեն բանակումին յաջողութեան: Ան նաև նշեց, որ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ուրախութեամբ կը հիւրընկալէ համա-Հ.Մ.Լ.Մ.ական ձեռնարկները (մարզախաղեր, բանակումներ)՝ այդ նպատակին համար զօրաշարժի ենթարկելով իր շարքերը: Վերջապէս, քոյր Սանտրա Վարդանեան տեղեկացուց, որ բանակումը պիտի ունենայ ազգային մշակոյթներու նույրած օր մը, որուն ընթացքին բանակավայր պիտի այցելեն ֆիզիքական եւ մտային յառուկ խնամքի կարօտ՝ «Հրաշք» բաժանմունքի պատանիները:

Ասուլիսին երրորդ խօսքը արտասանեց համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պոլոս Մահապուակեան: Ան յայտնեց, որ բանակումը պիտի ունենայ 700 մասնակից եւ 10 հոգինոց խմբապետական ընդհանուր եւ գործադիր կազմ: Բանակումին պաշտօնական բացումն ու փակումը պիտի կատարուին 21 եւ 29 Յուլիսին, իսկ Շաբաթ, 22 Յուլիսի յետմիջօրէին, բանակողները հայրենի հայութեան պիտի ներկայանան պաշտօնական շքերթով, որ ընթացք պիտի առնէ Օփերայի «Ազատութեան» հրապարակէն եւ պիտի երկարի մինչեւ «Մահապատճեան»ի հրապարակ, ուրկէ անոնք փոխադրակառքերով պիտի ուղղուին Միծեռնակաբերդ՝ յարգանքի իրենց տուրքը մատուցելու Հայոց Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն:

Պաշտօնական խօսքերէն ետք, ասուլիսին մասնակիցները պատասխանեցին ներկայ թղթակիցներու հարցումներուն:



ՄԱՄԱԿԻՑՆԵՐԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական

12-րդ բանակումին մասնակցեցան միութեան 26 շրջաններէն եւ Բրանի «Արարատ» եւ «Նայիրի» քոյր կազմակերպութիւններէն 634 սկաուտներ՝ թուային հետեւեալ բաշխումով.-

Արեւմտեան Մ. Ն. 123

Գանատա 78

Լիքանան 62

Արեւելեան Մ. Ն. 51

Աւտրափա 41

Հարաւային Ամերիկա 39

Հ.Մ.Ը.Մ.Հ.Ա.Կ. 37

Քուէյր 23

Ֆրան 20

Լուսոռն 16

Սուրիս 16

Երուսաղէմ 13

Ալմէօ 10

Գահիրէ 9

Միւնիս 7

Թիֆլիս 7

Ամման 7

Յունաստան 6

Հայֆա 6

Պաղտաս 6

Վիեննա 6

Պուլկարփա 4

Օրէպրո 4

Մարսէ 3

Սոտերքելիս 2

Վալանս 1

«Արարատ» եւ «Նայիրի» 29

Սկաուտներու կողքին,
բանակումին իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալները.-

Օժանդակ անձնակազմ 35
Խոհարարական անձնակազմ 6
Քարտուլար եւ հաշուապահ 2

Գործավարներ 2

Խմբապետական եւ գործադիր
մարմին 10

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՒ 681

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12 ԲԱՌԱԿՈՒՄՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ը.կ համագաղութային կառույցին ստեղծումէն ի վեր տեղի ունեցած են համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական 12 բանակումներ՝ հետեւեալ կարգով.-

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Ա. բանակում- 1-13 Օգոստոս 1978, Քաղամոս, Յունաստան: Մասնակցութիւն՝ 12 շրջանէ 226 արի-արենոյշներ: Ընդհ. խմբապետ եղբ. Վարուժան Սերոբեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Բ. բանակում- 14-26 Օգոստոս 1980, Քամար, Ֆրանսա: Մասնակցութիւն՝ 12 շրջանէ 291 արի-արենոյշներ: Ընդհ. խմբապետ եղբ. Սուրէն Մուրատեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Գ. բանակում- 10-20 Օգոստոս 1986, Զալֆոնիթ Հայֆա, Անգլիա: Մասնակցութիւն՝ 11 շրջանէ 269 արի-արենոյշներ: Ընդհ. խմբապետ եղբ. Արթուր Աղամալեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Դ. բանակում- 21-31 Օգոստոս 1990, Այա Մարինա, Յունաստան: Մասնակցութիւն՝ 14 շրջանէ 484 արի-արենոյշներ: Ընդհ. խմբապետ եղբ. Ժիրայր Սարգսյան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Ե. բանակում- 27 Յուլիս-7 Օգոստոս 1994, Բիւրական, Հայաստան: Մասնակցութիւն՝ 14 շրջանէ 715 արի-արենոյշներ (24-ը հիւրաբար Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ Հայ Մշակութային «Սիփան» միութենէն): Ընդհ. խմբապետ եղբ. Սանուկ Քէօշկերեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Զ. բանակում- 27 Յուլիս-4 Օգոստոս 2002, Աղաւնաձոր, Հայաստան: Մասնակցութիւն՝ 17 շրջանէ 510 արի-արենոյշներ (31-ը հիւրաբար Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ «Սիփան», «Նայիրի» մշակութային միութիւններէն): Ընդհ. խմբապետ եղբ. Ռաֆֆի Կէվողանեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Լ. բանակում- 31 Յուլիս-9 Օգոստոս 2006, Բիւրական, Հայաստան: Մասնակցութիւն՝ 16 շրջանէ 655 արի-արենոյշներ (35-ը հիւրաբար Իրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ «Սիփան», «Նայիրի» մշակութային միութիւններէն): Ընդհ. խմբապետ եղբ. Ալեք Խաչատրեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Թ. բանակում- 31 Յուլիս-8 Օգոստոս 2010, Բիւրական, Հայաստան: Մասնակցութիւն՝ 18 շրջանէ 555 արի-արենոյշներ (39-ը հիւրաբար Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ «Սիփան», «Նայիրի» միութիւններէն): Ընդհ. խմբապետ եղբ. Օշին Փիրումեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական Ժ. բանակում- 31 Յուլիս-9 Օգոստոս 2014, Բիւրական, Հայաստան: Մասնակցութիւն՝ 18 շրջանէ 682 արի-արենոյշներ (38-ը հիւրաբար Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ «Սիփան», «Նայիրի» միութիւններէն): Ընդհ. խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական ԺԱ. բանակում- 19 Յուլիս-28 Յուլիս 2018, Բիւրական, Հայաստան: Մասնակցութիւն՝ 26 շրջանէ 1195 արի-արենոյշներ (31-ը հիւրաբար Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ «Սիփան» միութենէն): Ընդհ. խմբապետ քոյր Թալին Օրտովլեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.ական ԺԲ. բանակում- 21 Յուլիս-30 Յուլիս 2023, Բիւրական, Հայաստան: Մասնակցութիւն՝ 26 շրջանէ 681 արի-արենոյշներ (29-ը հիւրաբար Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն եւ «Սիփան» միութենէն): Ընդհ. խմբապետ եղբ. Պօղոս Մահպուտեան:

ՀԱՄԱ-Հ.Ս.Ը.ՍԿ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ



Ճանաչում



Համայստին
1994

ՀԱՄԱ-Հ.Ը.ՍԿ.ԱԿԱՆ
21-30 Էպիդի 2023

20

23


ԿՐՈՒՏ, ԿԻՒՑԻ
ՍԻՐԸ ՊԱՏՐԱՍ

1978-2023

45 ՏԱՐԻՆԵՐ ԾԱՐՈՒՆԱԿ







Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՅԱՆԻ
ՄԿԱԿՏՆԵՐՈՒ ԲԱՑԱՎԱՅՈՒԹԵԱՄՔ՝
ՀԱՄԱՀ.Մ.Ը.Ը.Մ.ԱԿԱԴ
12-ՐԴ ԲԱՏՎԱԿՈՒՄԻՆ
ԲԱՑՈՒՄԸ՝
«ԽՐՈԽՏ, ԽԻՉԱԱ,
ՄԻԾՏ ՊԱՏՐԱՍ»
ՆՃԱՄԲԱՆՈՎ

արուան մը ակամայ ուշացումով, Ուրբաթ, 21 Յուլիս 2023-ի երեկոյեան ժամը 6.15-ին (Երեւանի ժամանակացոյցով), Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայրին մէջ ընթացք առաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումը՝ բացման արարողութեամբ մը, որուն ներկայ գլուխեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Արսէն Համբարձումեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Զաքարեան, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, անդամներ՝ Դաւիթ Յակոբեան, Օշին Փիրումեան, Տիրան Վահրամեան, Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ քոյր Թափին Օրտողեան: Ներկայ էին նաև Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամներ, ինչպէս նաև՝ Հայաստանի մէջ իրաքի եւ Պուլկարիոյ դեսպաններու ներկայացուցիչներ:

Բացման արարողութիւնը ընթացք առաւ բանակողներու հանդիսաւոր կերպով բանակավայր մուտքով: Հ.Մ.Ը.Մ.ի Շըջանային եւ Մեկուսի 30 շրջաններէ եւ իրանի «Արարատ» եւ «Նայիրի» միութիւններէն 700 բանակողներ կարգապահ շարքերով իրենց տեղերը գրաւեցին դրօշակի կայմերուն դիմաց: Զգալի էր Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի սկաուտներուն բացակայութիւնը: Բոլորը միաքով ու հոգիով այդ պահուն բանակումն զրկուած Արցախի սկաուտներուն հետն էին:

Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Հայաստանի, Արցախի, Հ.Մ.-Ը.Մ.ի սկաուտական եւ բանակումի քայլերգներով բարձրացան Հայաստանի, միջազգային սկաուտութեան եւ բանակումի մասնակից շրջաններու երկիրներուն դրօշները: Հանդիսութիւնը վարեց բանակումի հերթապահ եղբ. Արամ Գայսիրեան, Արեւելեան Մ. Նահանգներէն:



ԲԱՆԱԿՈՒՄԻ ՀՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուպեան իր խօսքին սկիզբը անդրադարձաւ վերջին չորս տարին աշխարհը եւ հայ կեանքը հարւածած տագնապներուն: Ան նշեց քորոնայի համաճարակը, Արցախեան 44-օրեայ պատերազմը եւ Հ.Մ.Լ.Մ.-ական փաստակաւոր անդամներու կորուստը: Եղբ. Մահպուպեան անդրադարձաւ նաեւ բանակումէն Արցախի սկառատներու բացակայութեան երեւոյթին եւ ըսաւ. «Դժբախտաբար, այսօր մեզի հետ չեն մեր շատ սիրելի Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախի տարազաւորները, որոնք անհամբեր կը սպասէին միանալու, ծանօթանալու եւ յիշատակելի պահեր ապրելու մեր բոլորին հետ: Անոնք ակամայ բացակայ են, որովհետեւ 12 Դեկտեմբեր 2022-էն ի վեր շրջափակուած են եւ ծանր պայմաններու տակ կը փորձեն ապրիլ եւ գոյատեւել: Թէեւ Փիզիքապէս իրենց հետ չենք, բայց իրենց ապրած դժուար պայմանները կ'ապրինք հոգեպէս»:

Ապա, բանակումի ընթացքին մասին խօսելով, եղբ. Պօղոս Մահպուպեան ծա-

նօթացուց ընդհանուր յայտագիրը եւ ըսաւ. «Միասնաբար պիտի անցընենք անմոռանալի օրեր, կազմենք յիշատակներ, որոնք մեզի պիտի ընկերակցին տարիներ: Մենք՝ խմբապետական կազմ եւ գործադիր մարմին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Մ.Կ.-ի օժանդակութեամբ եւ Հ.Մ.Լ.Մ.-ի կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ մեր լաւագոյնը ըրած ենք եւ պիտի ընենք, որպէսզի համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական 12-րդ բանակումը եւս ուկեայ տառերով արձանագրուի Հ.Մ.Լ.Մ.-ի պատմութեան մէջ»:

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Մ.Կ.-ի ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Մ.Կ.-ի անունով խօսք առաւ վարչութեան ատենապետ քոյլ Սանտրա Վարդանեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Լ.Մ.-ի չնորհիւ Հայաստանի մէջ կըրկին կը միաձուլուին Սփիւռքի եւ հայունիքի սիրտերը: Մենք դարձեալ կարելիութիւն կ'ունենանք միասին անցընելու սկառատնեական աւիւնով եւ հայրենասիրութեամբ լեցուն, ստեղծագործ օրեր: Այնքան ուրախալի է բանակավայրին մէջ տեսնել աշխարհի չորս անկիւննե-

րէն ժամանած Հ.Մ.Լ.Մ.-ական քոյլեր եւ եղբայրներ, որոնցմէ շատերը առաջին անգամ ըլլալով Հայաստան կ'այցելեն եւ այսուհետեւ իրենց հոգիին մէջ կը կրեն հայրենիքի լոյսն ու արեւը, համն ու հոտը, սէրն ու ջերմութիւնը:

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Մ.Կ.-ի ատենապետը ցաւով անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախի սկառատներուն բանակումէն բացակայութեան երեւոյթին: Ան ըսաւ. «Թշնամական շրջափակումի պատճառ պատմութեան մէջ»:





ուով այսօր Արցախի մէջ ծանր իրավիճակ է: Կը սպառին սննդեղին եւ կենսական անհրաժեշտութեան վերջին պաշարները: Այսօր, աւելի քան երբեք, Արցախը մեր սատարումին եւ օգնութեան կարիքը ունի: Երբ բանակումը աւարտի եւ բանակողները իրենց երկիրները վերադառնան, իւրաքանչիւրը թող պատմէ Արցախի մասին եւ ամէն միջոցի գործ դնէ Արցախի փրկութեան համար: Փառք ու պատիւ այս օրերուն





աննկուն պայքարի մէջ գտնուող Հ.Մ.-Լ.Մ.-ական քոյլերուն եւ եղբայրներուն: Մեր խոնարհումը եւ յարգանքը իրենց: Մենք երբեք առանձին չենք ձգեր զիրենք»:

Այնուհետեւ, իր խօսքը Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բանակողներուն ուղղելով, քոյլ Սահմարա Վարդանեան ըստ. «Այսօր ձեր շարքերուն կրնային գտնուիլ մեր այն եղբայրները, որոնք նահատակւեցան յանուն հայրենիքի, յանուն Արցախի ազատութեան: Եւ այսօր մեր պարտքն է իրենց ոգեղէն ներկայութիւնը զգալ մեր կողքին, ընել կարելին՝ բանակումին պատշաճ կազմակերպման եւ իրագործման համար: Թող մեր եղբայրներու հոգին փառաւորուի մեր նուիրումի եւ ազնիւ աշխատանքի շնորհիւ»:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻԶԻՒՆ

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.-Լ.Մ.-ի կեղրոնական Վարչութեան սկառականի ներկայացուցիչ քոյլ Թալին Օրտողլեան: Ան նկատել տուաւ, որ «Նշանաբանները երբեք պատահական ընտրութեան արդիւնք չեն եղած, որովհետեւ անոնք իրենց մէջ խտացուցած են իւրաքանչիւր բանակումի նպատակը»: Քոյլը ներկայացուց բանակումին նշանաբանը՝ «Խրոխատ, խիզախ եւ միշտ պատրաստ»ը եւ փոխանցեց անոր իմաստն ու խորհուրդը. «Խրոխատ է Հ.Մ.-Լ.Մ.-ական սկառական, երբ հպարտութեամբ կը տողանցէ հայրենիքին դուրս կամ երեւանի պողոտաներուն վրայ: Խիզախ է Հ.Մ.-Լ.Մ.-ական սկառատը. փաստը՝ բանակավայրին մէջ ծաղկող «Խիզախներու պուրակ»ն է, որ



խորհրդանիշն է գերագոյն քաջութեան եւ անձնագոհութեան երիտասարդ Հ.Մ.-Լ.Մ.-ականներու, որոնք արիաբար նետւեցան հայրենիքի պաշտպանութեան սրբազն գործին՝ դառնալով գերագոյն զոհորդութեան օրինակելի տիպարները: Միշտ պատրաստ է Հ.Մ.-Լ.Մ.-ական սկառատը: Պատրաստ է ծառայելու, պատրաստ է օգնելու, պատրաստ է աշխատելու»:

Ապա, քոյլ Թալին Օրտողլեան արտայայտուեցաւ համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական բանակումներու կարեւորութեան մասին եւ շեշտեց, որ «համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական բանակումները կը պարգեւեն եղակի առիթը մէկտեղելու աշխարհի չորս ծագերէն հասած հարիւրաւոր սկառատներ, որոնք թէե զիրար չեն ճանչնար, սակայն Հ.Մ.-Լ.Մ.-ի դրօշին ներքեւ անոնք կը բարեկամանան, կը մտերմանան եւ անքակտելի կապեր կը հաստատեն իրարու հետ. կապեր, որոնք կը մնան հաստատ՝ անտեսելով զիրենք



բաժնող հազարաւոր մղոնները»: Այս առիթով, իր խօսքը բանակողներուն ուղղելով, ան ըստ «Սիրելի՝ սկաուտներ, օգտուեցէք ձեզի ընծայուած այս եզակի առիթէն, որմէ զրկուած են ձեզի նման հազարաւոր հայ պատանիներ. ուրախութեամբ եւ հաճոյքով վայելեցէք այս անկրկնելի պահերը, եւ վերջապէս, հպարտութեամբ բարձրածայնեցէք եւ գործի վերածեցէք համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին նշանաբանը՝ «Խրոխա, խիզախ, միշտ պատրաստ»ը»:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Բացման հանդիսութեան եզրափակիչ պատգամը արտասանեց Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան ըստ, որ «Այս բանակումը յատուկ նշանակութիւն ունի, որովհետեւ կը կազմակերպւի քորոնայի պարտադրած սահմանափակումներէն ետք եւ համաշխարհին քաղաքական, ընկերատնտեսական բարդ պայմաններու մէջ, եւ մանաւանդ՝ մեր հայրենիքի մէկ անըաժան մասնիկը կազմող Արցախի տակաւին շարունակուող շրջափակման պայմաններուն մէջ: Արդ, բանակումը կը նշէ հայ ժողովուրդի միասնականութեան, քաջութեան եւ պատրաստակամութեան ողին, որուն լաւագոյն կրողները կը հանդիսանան Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտները»:

Եղբ. Վաչէ Նաճարեան համա-Հ.Մ.-Լ.Մ.ական բանակումներու պատմութեան անդրադառնալով յայտնեց, որ այս տարի համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումները կը բոլորէն իրենց 45-ամեակը:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական առաջին բանակումը տեղի ունեցած է 1978-ին, Յունաստան, 226 մասնակիցներով: Այս տարի կը լրանայ նաեւ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական բանակումներու Հայստանի մէջ կազմակերպման 29-ամեակը, արուած ըլլալով որ միութիւնը համա-Հ.Մ.Լ.Մ.ական իր բանակումները մայր հայրենիքի մէջ կը կատարէ 1994-էն ի վեր: Յարդ կատարած է 8 բանակումներ, 6-ը իր սեփական բանակավայրին մէջ, որ 30 Հոկտեմբեր 2021-էն ի վեր ստացած է «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայր անունը, ի յիշատակ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երախտաշատ նախկին ատենապետին, որ մեծ ներդրում ունեցաւ բանակավայրին ընդարձակման, վերանորոգման աշխատանքներուն եւ վերջին քանի մը բանակումներու կազմակերպման մէջ:

Կեդրոնական Վարչութեան ատենապետը իր խօսքին մէջ յատուկ ողջոյն յղեց բանակումի մասնակցութեան կա-



րեխութենէն զրկուած Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի սկաուտներուն, երբ ըստ. «Արցախի Հ.Մ.Լ.Մ.ական սկաուտները սկըզբունքով այսօր մեզի հետ հոս պէտք է ըլլային, սակայն մեզի հետ չեն Փիզիքապէս: Մենք վստահ ենք, սակայն, որ անոնք մեզի հետ են հոգեպէս, միտքով ու հոգիով, ինչպէս որ Արցախը ներկայ է հոս գտնուող իւրաքանչիւր բանակողի հոգիին ու սրտին մէջ: Մեր զօրակցութիւնը Արցախին եւ Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի մասնաճիւղի սկաուտներուն:





Յոյսով ենք, որ արգելքները շուտով կը վերանան եւ մենք կը հանդիպինք դարձեալ»:

Այսուհետեւ, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետը խօսեցաւ սկառութեան ներկայացուցած կարեւորութեան մասին եւ հաստատեց, որ «Հ.Մ.Լ.Մ.ի սկառութիւնը միշտ եղած է բարի ուժ՝ նպաստելով այն գաղութներուն, ուր կը գործէ ան, նպատակ ունենալով հայրենիքը, եւ օրինակ ունենալով հայ գիտակլից եւ տիպար քաղաքացին, հայրենիքէն ներս թէ դուրս, բայց միշտ՝ հայրենիքի շունչով»: Ուստի, իր խօսքը բանակող սկառուներուն ուղղելով, ան ըսաւ. «Այս բանակումին նշանաբանը՝ «Խրոխտ, խիզախ, միշտ պատրաստ»ը մարմնաւորելով դուք պարտականութիւնը ունիք զօրացնելու Սփիռոփի մեր գաղութները: Զեր նպատակը պիտի ըլլայ ոգեշնչել ուրիշները՝ հետեւելու ձեր առաջնորդութեան եւ գործօն ըլլալ՝ հասնելու համար ձեր նպատակին: Յոյց տուէք քաջութիւն՝ պաշտպանելու ճշդը, հպարտացէք ձեր ժառանգութեամբ եւ միշտ պատրաստ եղէք օգնութեան ձեռք երկարել կարի-

քաւորին, հաւատարիմ՝ սկառուտական ձեր դաւանանքին եւ երդումին: Դուք, նոր սերունդի ներկայացուցիչներ, ձեր նախնիներու նման, կրնաք ըլլալ գրական փոփոխութիւններու հզօր ուժ՝ հայ ժողովուրդի գոյատեման ճամբուն վրայ»:

Իր պատգամին աւարտին, Կեղրոնական Վարչութեան ատենապետը պաշտօնապէս բացուած յայտարարեց Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումինը եւ յաջողութիւնը մաղթեց բանակումինը:

աշխատանքներուն:

Հուսկ, բացման արարողութիւնը աւարտեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգով:





ԴՈՒՔ ԿՐՆԱՔ ԸԼՎԱ ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԶՕՐ ՈՒԺ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ ճԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ (Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԻ ՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

Անսահման հպարտութեամբ եւ ու-
ղախութեամբ կանգնած եմ այ-
սօր ձեր առջեւ:

Պատիւը ունիմ Հ.Մ.Լ.Մ.Ի Կեդրոնա-
կան Վարչութեան անունով բարի գա-
լուստ մաղթելու ձեզի՝ համա-Հ.Մ.Լ.Մ.ա-
կան 12-րդ բանակումի բացման այս պա-
հուն, Հ.Մ.Լ.Մ.Ի «Գառնիկ Մկրտիչեան»
սկառուտական բանակավայրին մէջ, ուր
հայրենի երկինքին տակ կը մէկտեղումին
700 մասնակիցներ, Հ.Մ.Լ.Մ.Ի 26 շրջան-
ներէ եւ իրանի 2 քոյլ միութիւններէ:

Այս բանակումը յատուկ նշանակու-
թիւն ունի, որովհետեւ ան կը կազմա-
կերպուի քորոնայի պարտադրած սահմանափակումներէն
ետք եւ համաշխարհային, քաղաքական, ընկերատնտեսական
բարդ պայմաններու մէջ, մանաւանդ՝ մեր հայրենիքի մէկ
անքաժան մասնիկը կազմող Արցախի տակաւին շարունակու-
ող շրջափակման պայմաններուն մէջ։ Արդ, բանակումը կը
նշէ հայ ժողովուրդի միասնականութեան, քաջութեան եւ
պատրաստակամութեան ոգին, որուն լաւագոյն կրողները կը
հանդիսանան Հ.Մ.Լ.Մ.Ի սկառուտաները։

2023-ը ամեակներու տարի ըլլալով, կ'արժէ յիշել, որ այս
տարի համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումները կը բոլորն
իրենց 45-ամեակը։ Համա-Հ.Մ.Լ.Մ.ական առաջին բանակու-
մը տեղի ունեցած է 1978-ին, Ցունաստան, 226 մասնակիցնե-
րով։ Այս տարի կը լրանայ նաեւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանա-
կումներու Հայաստանի մէջ կազմակերպման 29-ամեակը,



արուած ըլլալով որ միութիւնը համա-
Հ.Մ.Լ.Մ.ական իր բանակումները մայր
հայրենիքի մէջ կը կատարէ 1994-էն ի
վեր։ Յարդ կատարած է 8 բանակումներ,
6-ը իր սեփական բանակավայրին մէջ, որ
30 չոկտեմբեր 2021-էն ի վեր ստացած է
«Գառնիկ Մկրտիչեան» սկառուտական
բանակավայր անունը, ի յիշատակ Հ.Մ.-
Լ.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան երախ-
տաշատ նախկին ատենապետին, որ մեծ
ներդրում ունեցաւ այս բանակավայրին
ընդարձակման եւ վերանորոգման աշ-
խատանքներուն եւ վերջին քանի մը բա-
նակումներու կազմակերպման աշխա-

տանքներուն մէջ։ Յիշատակը անմառ մնայ:

Բանակումի բացման այս պահուն, ջերմ ողջոյն կը փո-
խանցեմ 700 բանակողներուն, որոնք հաւաքուած են այս-
տեղ՝ Հայաստանի մէջ։ Յատուկ ողջո՞յն մեր սիրելի Արցախի
Հ.Մ.Լ.Մ.ական սկառուտներուն, որոնք սկզբունքով այսօր մե-
զի հետ հոս պէտք է ըլլային, սակայն մեզի հետ չեն ֆիզիքա-
պէս։ Մենք վստահ ենք, սակայն, որ անոնք մեզի հետ են հոգե-
պէս, միտքով ու հոգիով, ինչպէս որ Արցախը ներկայ է հոս
գտնուող իւրաքանչիւր բանակողի հոգիին ու սրտին մէջ։ Մեր
զօրակցութիւնը Արցախին եւ Հ.Մ.Լ.Մ.Ի Արցախի մասնաճիւ-
ղի սկառուտներուն։ Ցոյսով ենք, որ արգելքները չուտով կը
վերանան եւ մենք դարձեալ կը հանդիպինք։

Սիրելի բանակողներ, այս բանակումին նշանաբանը՝
«Խրոխտ, խիզախ եւ միշտ պատրաստ» խորապէս կ'արձա-

Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտութիւնը միշտ եղած է բարի ուժ՝ նպաստելով այն գաղութներուն, ուր կը գործէ ան, նպատակ ունենալով հայրենիքը, եւ օրինակ ունենալով հայ գիտակից եւ տիպար քաղաքացին, հայրենիքէն ներս թէ դուրս, բայց միշտ՝ հայրենիքի շունչով:

Նազրէ Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական սկզբունքները:

Իրականութեան մէջ, դուք հոս ներկայ էք իբրեւ Հ.Մ.Լ.Մ.ի հայեցի դաստիարակութիւնը ստացած սկաուտներ։ Զեզմէ իւրաքանչիւրը իր մէջ կը մարմնաւորէ այս յատկութիւնները, որոնք կը թարգմանուին հետեւեալ ձեւով։

Խրոխտ, այսինքն՝ ունիք այն հպարտութիւնը, որ կը լեցնէ ձեր սիրտերը ազգային-մշակութային արժէքներու սիրով։

Խիզախ, այսինքն՝ այն քաջութիւնը զոր ունիք՝ կեանքի մարտահրաւէրներուն դիմաց կանգնելու,

Միշտ պատրա՛ստ, այսինքն՝ պատրաստ էք առանց նախապայմանի անձնուրաց կերպով ծառայել ազգին։

Ցաջորդող 10 օրերուն մենք միասնաբար պիտի ապրինք սկաուտական, ազգային եւ ընկերացին կեանք։ Պիտի ունենանք անմոռանալի օրեր։ Աւարտին, իբրեւ Հ.Մ.Լ.Մ.ի սերմեր, դուք ձեզի հետ պիտի տանիք յիշատակներ, զորս պիտի տարածէք ձեր շրջաններուն, մասնաճիւղերուն եւ խումբերուն մէջ՝ յաջորդող սերունդներուն մէջ եւս ցանելով Հ.Մ.Լ.Մ.ականի գեղեցիկ երազը եւ զայն իրականացած տեսնելու ձգտումը։

Մենք հոս քով-քովի եկած ենք Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական ոգիով աշխատելու, դաստիարակուելու, զուարծանալու եւ հարստանալու նորանոր գիտելիքներով եւ մանաւանդ՝ հաստատելու նոր բարեկամութիւններ, որոնք մինչեւ մեր կեանքին վերջը պիտի մնան մեզի խրախուսող յիշատակներ։

Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտութիւնը միշտ եղած է բարի ուժ՝ նպաստելով այն գաղութներուն, ուր կը գործէ ան, նպատակ ունենալով հայրենիքը, եւ օրինակ ունենալով հայ գիտակից եւ տիպար քաղաքացին, հայրենիքէն ներս թէ դուրս, բայց միշտ՝ հայրենիքի շունչով։

Իբրեւ Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտներ, մարմնաւորելով այս բանակումին նշանաբանը՝ «Խրոխտ, խիզախ եւ միշտ պատրա՛ստ», դուք պարտականութիւնը ունիք զօրացնելու հայկան Սփիւռքի մեր գաղութները։ Ձեր նպատակը պիտի ըլլայ ոգեշնչել ուրիշները՝ հետեւելու ձեր առաջնորդութեան եւ ըլլալ գործօն՝ համար ձեր նպատակին։ Ցոյց տուէք քաջութիւն՝ պաշտպանելու ճիշդը, հպարտացէք ձեր ժառանգութեամբ եւ միշտ պատրաստ եղէք օգնութեան ձեւք երկարել կարիքաւորին, հաւատարիմ՝ սկաուտական ձեր դաւանանքին եւ երդումին։

Դո՞ւք, նոր սերունդի ներկայացուցիչներ, նման ձեր նախնիներուն, կրնաք ըլլալ դրական փոփոխութիւններու հզօր ուժ՝ հայ ժողովուրդի գոյատեւման ճամբուն վրայ։

Վստահ եմ, որ ձեզմէ իւրաքանչիւրը պիտի շարունակէ մեր նախնիներուն աշխատանքը՝ անջնջելի հետքեր ձգելով եւ տարածելով Հ.Մ.Լ.Մ.ի ազգային ոգին։



Եզրափակելով, բոլորիդ կը մաղթեմ յիշատակներով հարուստ բանակում մը, լեցուն նոր ընկերութիւններով, որոնք ձեզի պիտի ընկերացին ձեր կեանքի ամբողջ տեւողութեան, ամրապնդէն ձեր պատասխանատութեան գիտակցութիւնը՝ ստեղծելու համար աւելի պայծառ ապագայ մը ո՛չ միայն Հ.Մ.Լ.Մ.ի, այլև՝ համայն հայութեան համար։

Եկէք միասին ըլլանք «Խրոխտ, խիզախ եւ միշտ պատրա՛ստ», եւ իբրեւ Հ.Մ.Լ.Մ.ականներ ըլլանք այն ուժը, որ պիտի առաջնորդէ մեր ժողովուրդի պայծառ ապագան։

Հիմա մեր երթը կը սկսի ցոյց տալով մեր 28 շրջաններու 700 մասնակիցները, վաղս ալ Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր եւ Երեւանի հրապարակ, ցոյց տանք թէ ինչպէ՞ս կը վերածուինք մէկ բանակի։

Սիրելի քոյլուր եւ եղբայրներ, այս արարողութեամբ պաշտօնապէս բացուած կը յայտարարեմ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը։ Բարի վայելում։



ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ ԹՈՂ ԸԼՎԱՅ ԶԵՐ ԿՈՂՄՆԱՑՈՅՑԸ ԵՒ ԱՌՋՆՈՐԴԻ ԲՈԼՈՐԻԴ ՔԱՅԼԵՐԸ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵՐՊՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆԻ
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ՔՈՅՑՐ ԹԱԼԻՆ ՕՐՏՈՂԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ
ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)



Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,
«Խրոխտ, խիզախ, միշտ պատրա՛ստ»: Այս է
նշանաբանը համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանա-
կումին: Համա-Հ.Մ.Լ.Մ.ական բոլոր բանակում-
ներն ալ ունեցած են իրենց նշանաբանները, որոնք
երբեք պատահական ընտրութեան արդիւնք չեն
եղած, որովհետեւ անոնք իրենց մէջ խտացուցած են
իւրաքանչիւր բանակումի նպատակը: Եւ այսօր,
ահա նշանաբան մը եւս, որ իր կարգին պիտի դառ-
նայ խորհրդանիշը այս բանակումին եւ ձեզմէ իւ-
րաքանչիւրը իր հետ պիտի տանի անոր իմաստն ու
խորհուրդը:

Խրոխտ է Հ.Մ.Լ.Մ.ական սկաուտը, երբ հպարտութեամբ կը տողանցէ հայրե-
նիքն դուրս կամ երեւանի պողոտաներուն վրայ:

Խիզախ է Հ.Մ.Լ.Մ.ական սկաուտը. փաստը՝ այս բանակավայրին մէջ ծաղկող
«Խիզախներու պուրակ»ն է, որ խորհրդանիշն է գերագոյն քաջութեան եւ անձնա-
զոհութեան երիտասարդ Հ.Մ.Լ.Մ.ականներու, որոնք արիաբար նետուեցան հայ-
րենիքի պաշտպանութեան սրբազն գործին՝ դառնալով գերագոյն զոհողութեան
օրինակելի տիպարները:

Միշտ պատրաստ է Հ.Մ.Լ.Մ.ական սկաուտը. պատրաստ է ծառայելու, պատ-
րաստ է օգնելու, պատրաստ է աշխատելու:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի սիրելի մասնակցողներ, այս նշանա-
բանը թող ըլլայ ձեր կողմնացոյցը եւ առաջնորդէ բոլորիդ քայլերը բանակումին եւ
ընդհանրապէս ձեր բոլոր աշխատանքներուն ընթացքին:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումները կը պարգեւեն եզակի առիթը մէկտեղե-
լու աշխարհի չորս ծագերէն ժամանած հարիւրաւոր սկաուտներ, որոնք թէ եւ զի-
րար չեն ճանչնար, սակայն Հ.Մ.Լ.Մ.ի դրոշին ներքեւ անոնք կը բարեկամանան, կը
մտերմանան եւ անքակտելի կապեր կը հաստատեն իրարու հետ. կապեր, որոնք կը
մնան հաստատ՝ անտեսելով զիրենք բաժնող հազարաւոր մղոնները: Դուք եւս պի-
տի ապրիք նոյն փորձառութիւնը եւ Հ.Մ.Լ.Մ.ական ձեր քոյրերուն եւ եղբայրնե-
րուն թիւը պիտի բազմապատկուի եւ իւրաքանչիւր երկրի մէջ պիտի ունենաք հա-
րազատ ընտանիքի անդամներ:

Սիրելի սկաուտներ, օգտուեցէ՛ք ձեզի ընծայուած այս եզակի առիթէն, որմէ
զոկուած են ձեզի նման հազարաւոր հայ պատանիներ. ուրախութեամբ եւ հաճոյ-
քով վայելեցէ՛ք այս անկրկնելի պահերը. եւ վերջապէս, հպարտութեամբ բարձրա-
ձայնեցէ՛ք եւ գործի վերածեցէ՛ք համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին նշանա-
բանը՝ «Խրոխտ, խիզախ, միշտ պատրա՛ստ»:



Վերջապէս օրը հասաւ համա-
Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բա-
նակումին: Հինգ տարի
առաջ տօնեցինք մեր միութեան 100-ա-
մեակը, ուրախ, զուարթ, չորս տարի
ետք կրկին տեսնուելու խոստումով:

Սակայն 2019-ի աւարտին համայն
աշխարհը ունեցաւ անհաւատալի ըն-
թացք մը, որ աներեւակայելի էր, եւ կը
կարծէինք, թէ նմանօրինակ պահեր
կարելի է միայն ֆիլմերու մէջ ապրիլ:

Քորոնան խանգարեց ու ցնցեց աշ-
խարհը: Բոլորս ալ ունեցանք ծանօթ
մը, որ ազգուեցաւ համաճարակին:

2020-ին հայութիւնը ճակատագրա-
կան պահեր ապրեցաւ 44-օրեայ պատե-
րազմին հետեւանքով: Կորոնցուցինք
Արցախի հողերուն 80 տոկոսը եւ ունե-
ցանք 5000-է աւելի նահատակներ: Նա-
հատակներ, որոնք նույրաբերեցին
իրենց ամենաթանկը՝ երիտասարդու-
թիւնը, կեանքը եւ ապագան՝ ի գին
մեր հայկական հողերու պահպանման:
Փա՛ռք մեր հերոսներուն: Փա՛ռք մեր
նահատակներուն: Փա՛ռք եղբ. Արտակ
իշխաններն, եղբ. Յարութթ Բանոյեա-
նին, եղբ. Գէորգ Հաճեանին, եղբ. Մո-
սիկ Սեբեմեանին, եղբ. Գրիգոր Ղա-
զարեանին, եղբ. Էրիք Գալստեանին,
եղբ. Արմէն Առուստամեանին, եղբ.
Արտակ Մարտիրոսեանին, եղբ. Յակոբ
Աստարճեանին եւ եղբ. Հայկ Դերիկլ-
եանին: Փա՛ռք Հ.Մ.Լ.Մ.ականներուն,



ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԵՐՏԵՆՔ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԵԶԻ ՀՆԿԵՐԱԿՑԻ ՏԱՐԻՆԵՐ

*(ՀՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ ԵՂԲ. ՊՈՂՈՍ ՄԱՀՊՈՒԹԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)*

որոնք առանց տատամսելու, առաջին վայրկեանէն ներկայացան պայքարի դաշտ՝ առաջին դիրքեր, եւ միանալով եղայրներ Վարդան Բախչեանին ու Վիգէն Զաքարեանին, նահատակուեցան յանուն Արցախի եւ Հայաստանի:

Պատերազմէն անկախ, մեր միութիւնը նաեւ ականատեսը եղաւ անակնկալ կորուստներու, որոնց կարգին էր Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախին ատենապետ եղը. Գառնիկ Մկրտիչեանը: Եղբայր Գառնիկը տարիներ շարունակ դաստիարակեց բազմաթիւ սերունդներ, ներառեալ՝ վարչականներ, սկաուտներ, մարզիկներ եւ միութենականներ: Ան իր յատուկ ներդրումը ունեցաւ այս բանակավայրին ընդարձակման եւ բարելաւման աշխատանքներուն: Եւ այդ իսկ պատճառով, Կեդրոնական Վարչութիւնը 2021-ին այս

բանակավայրը անուանեց «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայր, ուր աշխարհի չորս կողմերէն յաջորդական սերունդներ պիտի մնանան բանակումներ կատարելու Արարատի հսկողութեան տակ, Արագածի լանջերուն:

Մեր միութիւնը կորսնցուց նաեւ Կեդրոնական Վարչութեան գործօն անդամ, Հարաւային Ամերիկայի շրջանէն եղը. Արմանտո Թորգոմեանը, Կեդրոնական Վարչութեան նախին անդամ եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեանը եւ Ժիրայր Սարգսիսեանը, որոնք իրենց նկատառելի աշխատանքը եւ ներդրումը ունեցած են մեր միութեան շարքերուն մէջ, դարբներով հայեցի դիմագիծով սերունդներ: Երբեք պիտի չմոռնանք իրենց համեստութիւնը, խանդավառութիւնը, նուիրումը եւ միութեան ծառայելու պատրաստակամութիւնը՝ մինչեւ իրենց կեանքին վերջին վայրէնը:

Պիտի ինդրեմ, որ մէկ վայրկեան լուսամբ յարգենք յիշատակը մեր նահատակներուն եւ մեզմէ յաւէտ բաժնուած քոյրերուն եւ եղբայրներուն:

Սիրելի քոյրեր եւ

եղբայրներ,

Դժբախտաբար, այսօր մեզի հետ չեմ մեր շատ սիրելի Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի տարազաւորները, որոնք անհամբեր կը սպասէին միանալու, ծանօթանալու եւ յիշատակելի պահեր ապրելու մեր բոլորին հետ: Անոնք ակամայ բացակայ են, որովհետեւ 12 Դեկտեմբեր 2022-էն ի վեր ըրջափակուած են եւ ծանը պայմաններու տակ կը փորձեն ապրիլ եւ գոյատեւել: Թէեւ ֆիզիքապէս իրենց հետ չենք, բայց իրենց ապրած դժուար պայմանները կ'ապրինք հոգեպէս:

Կեանքի պայմանները եւ պարագաները պատճառ դարձան, որ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական մեր բանակումը յետաձրութիւն մէկ տարիով, բայց ահաւասիկ բոլոր ներկայ ենք մասնակցելու Հ.Մ.-Լ.Մ.ի սկաուտական ամէնչն յատուկ եւ սպասուած ծրագիրին: Միասնաբար պիտի անցընենք անմոռանալի օրեր, կերտենք յիշատակներ, որոնք մեզի պիտի ընկերակցին տարիներ: Մենք՝ խմբապետական կազմ եւ գործադիր մարմին, Հ.Մ.Լ.Մ.Վ.-Հ.Ա.Ս.Կ.ի օժանդակութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ մեր լաւագոյնը ըրած ենք եւ պիտի ընենք, որպէսզի համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը ուսկեայ տառերով արձանագրուի միութեան պատմութեան մէջ:

Բարի վայելում եւ յիշատակելի օրեր ձեր բոլորին:





Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակումը պատութեան անցաւ յիշատակելի ինը օրերով, որոնցմէ իւրաքանչիւրը իրեն յատուկ հետքն ու դրոշմը ձգեց «Խրոխտ, խիզախն եւ մի՛շտ պատրաստ» բանակողներուն մօտ: Յայտագիրներու ժամանակագրական ժապաւէնը յիշութիւններու մէջ արձանագրեց հետեւեալները:

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

21 Յուլիս 2023-ը եղաւ Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակումին առաջին օրը:

Առաւտեան ժամերուն, վերջին պատուիրակութիւններն ալ բանակավայր ժամանելով յստակացաւ բանակողներուն թիւը:

Ի տարբերութիւն նախորդ բանակումներէն, շրջանները խմբակային դրութեամբ բաժնուեցան միաւորներու եւ, այսպէս, ընդհանուր բանակողները բաժնուեցան չորս միաւորի: Իւրաքանչիւրը միաւոր բաղկացաւ երեք խումբէ, իւրաքանչիւր խումբ՝ վեց խմբակէ:

Յետմիջօրէին տեղի ունեցաւ բանակումին պաշտօնական բացումը, որուն մասին կ'արժէ տեսնել առանձին (Էջ 45):

Երեկոյեան խարուկահանդէս տեղի չունեցաւ՝ տեղացող անձրեւին պատճառով: Այդ օր խարոյիկի ներկայացումներ ունէին Հ.Մ.Լ.Մ.-ի Գանատայի, Ալմերյի եւ Պաղտատի պատուիրակութիւնները: Ներկայացումները յետաձգուեցան եւ բաժնը բացաւեցան յաջորդող օրերու վրայ:

ՀԱՄԱՀ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ

12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԻՆԸ ՕՐԵՐԸ



ըու օրերուն՝ համա-Հ.Մ.Լ.Մ.-ական
12-րդ բանակումի թիշբրներով:

Բանակումին երկրորդ օրը, Շա-
բաթ, 22 Յուլիսին, վրաններու քըն-
նութենէն եւ դրօշակի արարողու-
թենէն ետք կիրարկուեցաւ մարզա-
կան խաղերու յատուկ յայտագիր:
Կատարուեցան զանազան խաղեր-
գնդակ նետել, պարան քաշել, գնդա-
կով ցատկել եւ թերթով քալել:

Իւրաքանչիւր սկառուտ խաղե-
րուն մասնակցեցաւ հանգրուանա-
ցին ձեւով: Նախ տեղի ունեցաւ կրտ-
սեր բանակողներու մրցակցութիւն,
իսկ ապա՝ երէց բանակողներու:

Կէսօրուան ճաշէն ետք, բանա-
կողները ուղղուեցան երեւան եւ
ծանօթացան մայրաքաղաքի տեսար-
ժան վայրերուն: Ապա, պատուիրա-
կութիւններու պատասխանատունե-
րը մեկնեցան Արցախեան պատե-
րագմներու նահատակաց պանթէոն՝
Եռաբլուր (տեսնել էջ 76):

Երեկոյեան, խարոյկին շուրջ տե-
ղի ունեցաւ Արցախեան պատերազ-
մի նահատակներու նույիրուած յուշ-
երեկոյ՝ ներկայութեամբ նահատակ
Հ.Մ.Լ.Մ.-ականներու ծնողներուն եւ
խմբապետական կազմին:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Բանակումին ամբողջ տեսողութեան, ամէն առաւօտ կա-
տարուեցաւ վրաններու քննութիւն եւ դրօշակի արարողու-
թիւն (բացի այն օրերէն, երբ յայտագիրը արտաքին էր): Երե-
կոները տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, մասնակցու-
թեամբ պատուիրարկութիւններու, իսկ յատուկ պարագանե-
րու՝ միայն օրուան դրօշակակիրներով:

Վրաններու քննութիւնները կատարուեցան ամբողջական
տարագով, իսկ արդիւնքները քարտուղարութեան փոխան-
ցըլեցան Google Form-ի միջոցով:

Դրօշակի արարողութիւններուն եւս բանակողները ներ-
կայ գտնուեցան ամբողջական տարագով, իսկ շրջապտոյտնե-

կի, 23 Յուլիսը սկսաւ բանակավայրին մէջ կազմակերպուած
«Մշակութային օր»ով:

Խումբերը ընտրելէ ետք իրենց մասնակցելիք աշխատանքը
(յաւաշի պատրաստութիւն, քանդակագործութիւն, գծագ-
րութիւն, ձեռագործ, կատով աշխատանք, հայկական թռչնա-
գիր, հայկական նուագարաններ), ուղղուեցան տաղաւարնե-
րը:

Խաչքարի եւ քանդակի տեսական հանգրուանին, քանդա-
կագործ Գագիկի Յովհաննէսեան սկառաւաներուն տուաւ հա-
կիրճ պատմութիւնը հայկական խաչքարերուն եւ ծանօթա-
ցուց քանդակի գործիքները: Քանդակագործ Յովհաննէսեան



յաջորդող օրերուն, հանգրուանային աշխատանքներու ընթացքին, առիթը տուաւ սկառտաներուն պատրաստելու իրենց յատուկ խաչքարները եւ քանդակները:

ՀՕՄ-ի ներկայացուցիչները ստանձնեցին առանձին տաղաւար մը, ուր սկառտաներուն սորվեցուցին հայկական ձեռագործի արուեստին նրբութիւնները:

Նոյն օրը տեղի ունեցաւ զարգացման մրցում: **Հարցումները** նախապէս դրկուած էին պատուիրակութիւններուն, որոնք կատարած էին անհրաժեշտ պրապումներ եւ հաւաքած էին ճիշդ պատասխաններ:

Զարգացման մրցումին մասնակից խմբակները բաղկացան եօթնական սկառտէ: Մրցումը ընթացաւ Kahoot ծրագիրով: Իւրաքանչիւր պատուիրակութիւն պատասխանները ընտրեց որոշուած հեռաձայնէ մը: **Հեռաձայները** կապուած էին մայր ծրագիրին, հետեւաբար ճիշդ եւ արագ պատասխաննողը ստացաւ աւելի կէտեր: Թէ՛ մասնակիցները եւ թէ անոնց չուրջ հաւաքուած սկառտաները խանդավառութեամբ հետեւեցան զարգացման մրցումի հարցումներուն: Զարգացման մրցումը վարեցին բանակումի գործադիր կազմէն քոյրեր Մե-



նար Պոյաճեան եւ Թամար Քէշիշեան:

Զարգացման մրցումին առաջին հանդիսացաւ Հ.Ա.Լ.Մ.Ի Արեւմտեան Սիացեալ Նահանգներու շրջանը:

Երեկոյեան տեղի ունեցաւ խարուկահանդէս: Հ.Ա.Լ.Մ.Ի Աւստրալիոյ, Արմելոյի, Շուէտի, Հ.Ա.Ս.Կ.Ի եւ Ֆրանսի պատւիրակութիւնները ներկայացուցին իրենց պատրաստած խարոյկները:

ՉՈՐՐՈՐԴ ՕՐԸ

Համա-Հ.Ա.Լ.Մ.-ական բանակումին չորրորդ օրը, Երկուշաբթի, 24 Ցուլիսը եղաւ յատկանշական: Օրուան յայտագիրը ընդգրկեց երեք հաճելի աշխատանք: «Երկիրներու ներկայացումներ», «Homenetmen's top chef» եւ «Homenetmen's got talents»:

Առաւօտեան ընդհանրական աշխատանքներէն ետք, բանակավայրին մէջ տիրեց մէծ եռուգեռ: Բոլոր պատուիրակութիւնները, 26 շրջաններ, յօնեցան գործի եւ ձեռնարկեցին իրենց տաղաւարները պատրաստելու՝ լաւապէս ներկայացնելու համար իրենց ապրած երկիրներու սովորութիւնները, ճաշերն ու մշակոյթը:

Այդ միջոցին բանակավայր այցելեց «Birthright Armenia»-ի պատասխանատու Սեւան Գապագեան, որ հանդիպում մը ունեցաւ 18 տարիքը ամբողջացուցած եւ «Birthright»-ով հետաքրքրուած 60 բանակողի հետ: Հանդիպումին ընթացքին անբացարկ այցարեց «Birthright Armenia»-ի նպատակը, որ կը քաջալերէ երիտասարդները վերադառնալու Հայաստան եւ կամաւոր աշխատանքով զարգացնելու իրենց ընտրած մասնագիտութեան հմտութիւնները, նոյն ժամանակ օգնելով հայրենիքին:

Ճաշի դադարէն ետք, բոլորը պատրաստ էին այցելելու տաղաւարները եւ ծանօթանալու բանակավայրին մէջ ներկայացուած զանազան մշակոյթներուն: Բանակումի խմբապետական եւ գործադիր խմբապետական կազմէն ներկայացուցիչներ շրջելէ անկախ ունէին դժուար պարտականութիւն մը: անոնք պէտք է նիշերով գնահատէին տաղաւարները՝ աւարտին ընտրելու համար լաւագոյն երեքը:

Տաղաւարներու աշխատանքին արդիւնքը եղաւ հետեւեալը:

1. Լիբանան
2. Երուսաղէմ
3. Ֆրանս

Չուգանեռ, փոքր ճաշարանին մէջ տեղադրուեցան սեղաններ եւ անհրաժեշտ սարքեր՝ «Homenetmen's top chef»-ի մրցումին առ ի պատրաստութիւն:





Պատուիրակութիւնները ճշգեցին իրենց շրջանները ներկայացնող երկուքական խոհարարներ, որոնք իրենց ճաշակով եւ հմտութեամբ պատրաստեցին համել ուստեղիքներ:

Առաջին անգամ ըլլարով կազմակերպուած այս մրցումը ընթացաւ հաճելի մթնոլորտի մէջ, խոհարարներու յատուկ գիտարկով, գոգնոցով եւ խոհանոցային անհրաժեշտ սարքերով։ Աշխատանքին երկրորդ մասը կատարուեցաւ աւելի ուշ։

«Homenetmen's top chef»-ի մրցումին արդիւնքը յայտարարուեցաւ փակման պաշտօնական արարողութեան ընթացքին։

Նոյն ժամերուն, մեծ ճաշարանը հիւրընկալեց «Homenetmen's got talent»-ի մրցումը Շնորհալի Հ.Մ.Լ.Մ.ականներու կիսուառութիւնի մէջ կարելի եղաւ գտնել զանազան ձիրքերու տէր Հ.Մ.Լ.Մ.ականներ։ Իսկ ինչ որ մթնոլորտը աւելի ջերմացուց, յատուկ խնամքի կարօտ «Հրաշք»ի պատանիներուն ժամանումն էր բանակավայր։ «Հրաշք»ի պատանիները արժանացան բանակողներու սիրալիք ընդունելութեան։ Անոնցմէ ոմանք մինչեւ իսկ մասնակցեցան ձիրքերու յայտնաբերման մրցումին։



Մրցումի մասնակիցներուն խանդավառութիւնը կը հաւասարէր տաղաւարներուն մօտ ստեղծուած հաճելի մթնոլորտին։ Մրցումը նախատեսուած ժամանակէն աւելի խլելով՝ որոշուեցաւ շարունակել այլ օր մը՝ առաւելագոյն թիւով ձիրքերու յայտնաբերման համար։

«Homenetmen's got talent»-ի մրցումին արդիւնքը եւս յայտարարուեցաւ փակման պաշտօնական արարողութեան ընթացքին։

Երեկոյեան, ընթրիքէն ետք տեղի ունեցաւ խարուկահանդէս։ Հ.Մ.Լ.Մ. Յունաստան, Գանատա, Երուսաղէմ, Հայֆա եւ Արեւելեան Սիացեալ Նահանգներ ներկայացուցին իրենց խարոյկները։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐԸ

Հասաւ այնքան սպասուած շրջապտոյտի օրը։

Բանակումին հինգերորդ օրը, երեքշաբթի, 25 Յուլիսին, բանակողները բաժնուեցան երկու մասի։ Առաջին մասը ուղղուեցաւ Սեւանայ լիճ, իսկ երկրորդը՝ Կիւմրի։ Դժուար էր կողմնորոշուիլ, թէ ո՞ւր երթալ։ Սակայն շրջապտոյտը ընտ-





ըսովի չէր, որովհետեւ երկու օր ետք, նոյն երկու շրջապայռոցը պիտի կրկնուէր Հերթափոխով։ Հետեւաբար, բանակողներ առիթը պիտի ունենային այցելելու երկու վայրերն ալ։

Սեւանայ լիճ ուղղուած բանակողները այցելեցին լիճին զոյգ վանքերը։ Ազատ ժամուան ընթացքին, անոնք ծանօթացան լիճին տեսարժան վայրերուն, աղօթեցին, նկարուեցան եւ վայելեցին Սեւանի չքնաղ ափը։ Ապա, բոլորը փոխադրամիջոցներով մեկնեցան մօտակայ զբօսաշրջական համալիրին լողաւազանը, ուր հանգստացան եւ հաճելի ժամեր անցուցին։ Բանակողները հոն ստացան իրենց ճաշն ու ըմպելիքը։ Ճոխ մթնոլորտով եւ տեսակաւոր խաղերով օրը, սակայն, երկար չտեւեց, որովհետեւ օդի աննպաստ պայմանները բանակողներուն ստիպեցին կանուխ շարժիլ եւ բանակավայր վերադառնալ։

Կիւմրի այցելող պատուիրակութիւնները իրենց կարգին ունեցան հաճելի յայտագիր՝ մասնակցելով «City hunt»-ի մրցումին։ Խմբագետական կազմը զայն աւելի հետաքրքրական դարձնելու համար որոշեց մրցումը խառն խմբակներու փոխարէն կատարել շրջաններով։

Կիւմրի հասնելով պատուիրակութիւնները հաւաքուեցան «Վարդանանց» հրապարակը եւ իրենց թիւերուն համաձայն բաժնուեցան խումբերու։ Մասնակիցներուն բացատրուեցան խաղին օրէնքները, բաժնուեցան բացատրողական թերթիկներ եւ թելադրուեցաւ հեռաձայններու պերըները խնայողութեամբ գործածել՝ խաղը իր բարեյաջող աւարտին հասցնելու համար։

Ժամը հասած էր եւ խումբերը սկսան ցրուիլ Կիւմրիի փողոցներուն մէջ՝ կատարելու համար խաղին պահանջներն ու պատուէրները։ Հաճելի էր հետախուզել Կիւմրին, ծանօթա-



նալ քաղաքին պատմական թաղերուն, եկեղեցիներուն, հրապարակին եւ ժողովուրդին։ Կիւմրեցիներ հացումով հետեւեցան կազմակերպուած աշխատանքին, աշխարհի չորս ծագերէն ժամանած սկաուտներուն ցուցաբերելով հիւրասէր եւ հարազատ մօտեցում։

Օրուան աւարտին յայտարարուեցան ախոյեան խումբերուն անունները - Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ. տիրացաւ երեք մրցանակներուն, իր խմբակները հանդիսանալով առաջին, երկրորդ եւ երրորդ։

Կիւմրիի մէջ նախատեսուած երկրորդ յայտագիրը ագագդրական պարի ուսուցումն էր։ Մասնակիցները սորվեցան





«Թամզարա», «Քոչարի», «Մշոյ շորոր», «Սասնայ եարխուշտա» պարերը եւ, աւարտին, հրապարակին վրայ պարեցին տպաւորիչ շուրջպար մը: Ապա, երգելով եւ բարձր տրամադրութեամբ անոնք հրաժեշտ տուին Կիւմըլի քաղաքին եւ վերադան բանակավայր:

Երեկոյեան տեղի ունեցաւ խարուկահանդէս. Հ.Մ.Լ.Մ. Կիրանան, Գահիրէ, Վիեննա, Քուէլթ, Թիֆլիս եւ Միւնիին ներկայացուցին իրենց խարոյկները:

ՎԵՅՏՐՈՐԴ ՕՐԸ

26 Յուլիսը, բանակումին վեցերորդ օրը, յատկանշուեցաւ

Արագածի գագաթին նուաճումով:

Առաջանակացած վերջնական թիւը Արագածի գագաթը բարձրանալ փափառողներուն՝ 411 սկառուտներ, որոնց մէ 341-ը 16 տարեկան եւ փեր: Լեռնագնացութեան մասնակցեցան նաեւ «Արարատեան» կարգի թեկնածու խմբապետներ: Լեռնագնացներուն ընկերացան հինգ մասնագէտ ուղեւորներ, բժիշկ մը, բուժեղբայր մը, բանակումի գործադիր մարմինէն եղբայրներ Ակուսթին Անալեան, Յովիկ Փամբալեան եւ Գրիգոր Տուլգարեան:

Բանակավայր մնացող սկառուտները մասնակցեցան ջուրի եւ չարքաշութեան խաղերու: Անոնք խմբակներու բաժնուե-





«НОМЕНЕТМЕН'S GOT TALENT»-Ի ՄԱՍՆԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՍԿԱՈՒՏՆԵՐ

Սուրիա- քոյր Աննա Պետրոսեան (ասմունք), եղբ. Յովսէփ Իշխան Մարաշեան (քոնկ ֆու)

Ֆրանս- եղբ. Բաֆֆի Մկրտիչեան (երգ)

Լիբանան- եղբայրներ Սազօ Թովմասեան (պար) և Սերուժ Խանճիհանեան (երգ)

Գանատա- քոյրեր Լոռի Պերպէրեան (երգ) և Լիանա Թոփեան (հայկական պար)

Հարաւային Ամերիկա- եղբ. Արամ Պոյաճեան (տհոլի նուազ)

Լոնսոն- եղբ. Դափիր Աճեմեան (սոուտուկ և պար)

Պուլկարիա- քոյր Վյտա Եղոկարեան (երգ)

Միւնիխ- եղբ. Սամուէլ Անարքեան (կախարդութեան)

Քուէյր- եղբ. Սերոր Մանուկեան (երգ)

Վիեննա- քոյր Ասրիանա Թաշեան (պար)

Թիֆլիս- եղբ. Դափիր Մաղալով (ասմունք)

Արեւմտեան Մ. Նահանգներ- խմբային պար

Արեւելեան Մ. Նահանգներ- քոյր Մելանա

Փափազեան (երգ), եղբ. Հայկ Բէնիէեան (ասմունք)

Հ.Մ.Ա.Կ.- խմբային մարզական ներկայացում

Ալմելօ- խմբային պար



Լով խաղացին հաճելի մթնոլորտով եւ ջուրով յաղթահարեցին բանակավայրին կէսօրուան տաք օդը (աւելի քան 40 աստիճան): Ապա, անցան չարքաշութեան խաղերուն՝ իրենց ձիրքերն ու քաջութիւնը ցուցաբերելով նետ ու աղեղով, զէնք ու կացինով:

Հնդրիփէն ետք տեղի ունեցաւ խարուկահանդէս. Հ.Մ.-Լ.Մ. Հարաւային Ամերիկա, Սուրիա, Լոնսոն, Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Պաղտատ, Ամման եւ իրանի Հ.Մ.-Ա.Կ.ը ներկայացուցին իրենց խարոյկները:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐԸ

Հինգչաբթի, 27 Յուլիսը անցաւ Երեքշաբթի, 25 Յուլիսի նմանողութեամբ: Հերթափոխով, երկու օր առաջ կիւմրի այ-





շելած պատուիրակութիւնները ուղղուեցան Սեւանայ լիճ, իսկ լիճ այցելած պատուիրակութիւնները՝ Կիւմրի:

Այդ օր Սեւանայ լիճ այցելողները եղան բախտաւոր, որովհետեւ անոնք ունեցան աւելի նպաստաւոր օդ եւ առիթ՝ վայելելու լիճին ջուրն ու գեղատեսիլ ափը:

Կիւմրիի մէջ, «City hunt»-ի խաղը ընթացաւ նոյն խանդավառութեամբ: Խաղին աւարտին յայտարարուեցան յաղթական խմբակները:-

1. Հարաւային Ամերիկա
2. Գահիրէ
3. Հարաւային Ամերիկա

Ազգագրական խմբային պարով բանակողները աւարտեին Կիւմրի իրենց այցելութիւնը եւ բարձր տրամադրու-

թեամբ վերադարձան բանակավայրը, ուր երեկոյեան նշեցին Լիզպոնի հերոսական գործողութեան 40-ամեակը (տեսնել էջ 82):

ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐԸ

Բանակումին ութերորդ օրը, Ուրբաթ, 28 Յուլիսը եղաւ սկառուտական աշխատանքներով լիցուն օր: Վրաններու քրննութենէն եւ դրօչակի արարողութենէն ետք, բանակողները բաժնուեցան խմբակներու եւ կատարեցին զանազան աշխատանքներ: «Escape room»-ի խաղը մեծ հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն ստեղծեց սկառուտներուն մօտ, որոնք հաճելի ձեւով ընտելացան խաղին եւ փորձեցին լուծել հանելուկներն ու հարցումները:

Օրուան ընթացքին շարունակուեցան Երեքշաբթի օրուան յայտագիրներէն «Homenetmen's top chef»-ի եւ «Homenetmen's got talent»-ի մրցումները, որոնք ո՛չ միայն նորութիւն էին համա-Հ.Մ.-Մ.-ական բանակումներու մասնակիցներուն համար, այլև հաճելի առիթ՝ յայտնաբերելու անոնց թաքուն ձիրքերը:

Երրորդ հիմնական յայտագիրը «Մառայութեան աշխատանք»ն էր: Իրականացաւ երկու աշխատանք: Գործադիր խմբապետական կազմէն քոյր թամար Քէշիշեանի գլխաւորութեամբ 23 սկառուտներ այցելեցին Երեւանի «Զինուորի տուն» վերականգնողական կեդրոն, ուր կատարեցին գետնի մաքրութիւն:

Մառայութեան այլ աշխատանք մը կատարուեցաւ Բիւրականի մէջ, ուր 101 սկառուտներ ճամբու մաքրութիւն կատարեցին Բիւրականի մուտքէն մինչ ելքը:





«HOMENETMEN'S TOP CHEF»-Ի ՄԱՍՆԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՍԿԱՌԻՏՆԵՐ

Մարսի- քոյրեր Նանօր Բանոյեան եւ Գայիանէ
Տէր Պօղոսեան

Ամման- քոյր Ալին Պալեան

Սուրիա- քոյր Լուսին Քիւրքնեան

Օրեպրու եւ Սոտերթելիա- եղբայրներ Հերոս Սահկեան եւ Էլի Գազանճեան

Հայֆա- քոյր Եւա Տէմիրճեան, եղբ. Գրիգոր Սողոմնեան

Երուսաղէմ- քոյր Մարիան Քարանաշօ

Ֆրանս- եղբ. Տիրան Խաչատորեան, քոյր Սաշճա Կալթիէր

Լիբանան- քոյր Սանահին Թովլմասեան

Գանատա- եղբ. Կարօ Համամճեան

Գահիրէ- քոյր Շիսիփ Խորի

Հարաւային Ամերիկա- քոյրեր ճուաննա Մեյյոյեան եւ Քամիլա Թապագեան


Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.- եղբ. Վրէծ Քիլէմեան, քոյր Կալի Մարգարեան

Լոնտոն- եղբ. Քրիստափոր Անորէասեան

Պուլկարիա- քոյր Վարդի Կարապետեան

Միւնիխ- եղբ. Նորայր Պէկոյեան, քոյր Դալար Ասատորեան

Քուէյր- եղբայրներ Վլէք Թեմմամեան եւ Մելք Մելիքսէրեան



Հ.Մ.Ը.Մ.-ի Կեղրոնական Վարչութեան եւ բանակումի խմբ-
բապետական կազմին անունով Բիւրականի գիւղապետին եւ
Երեւանի «Զինուորի տան» տնօրէնութեան փոխանցուեցան
յուշանուէրներ:

Կէսօրէ եաք պատուիրակութիւնները հաւաքուեցան ամ-
բողջական տարազով ընդհանուր խմբանկար մը ունենալու,
ինչպէս նաեւ՝ պատուիրակութիւն առ պատուիրակութիւն
յիշատակի նկարներ նկարուելու համար: Տպաւորիչ էր խան-
դավառութիւնն ու ճոխութիւնը մասնակիցներուն մօտ,
որոնք կողք-կողքի շարուած, իրենց յիշողութեան մէջ այդ
պահը անմահացուցին մէկ ողիով եւ մէկ կամքով կատար-
ւած ալիքներու շարժումներով:

Օրը իր աւարտին հասաւ սկառուտական խանդավառ խա-
րուկահանդէսով, ուր պատուիրակութիւններ ներկայացու-
ցին իրենց պատրաստած խարոյիները:





ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Շաբաթ, 29 Յուլիսին, բանակումին վերջին օրը, առաւօտեան դրոշակի արարողութեան ժամանակ, բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պողոս Մահապուպեան գնահատեց մասնակիցներուն խանդավառութիւնն ու ճշդապահութիւնը եւ բանակումի խմբապետական կազմին անունով «Տիպար սկաուտ»ի յուշանուէրներ յանձնեց Արեւմտեան Միացեալ Նահանգներէն եղբ. Յովիկ Օհանեանին եւ Գանատայի շրջանէն քոյր Նարօտ Տիշոյեանին:

Ցայտարարուեցան զարգացման մրցումի, երկիրներու ներկայացման լաւագոյն տաղաւարի, լաւագոյն վրանի, մուտքի ձեռայինի, խարուկահանդէսի, ուստիուժմի մրցանքներու մրցանակակիր պատուիրակութիւններուն անունները: Այսպէս.-

Լաւագոյն խարուկահանդէս- Հարաւային Ամերիկա երկիրներու ներկայացման լաւագոյն տաղաւար-

1. Լիբանան
2. Երուսաղէմ
3. Ֆրանս

Լաւագոյն ուստիուժմամ- Աւստրալիա

Լաւագոյն մուտքի ձեռային- Արեւելեան Մ. Նահանգներ

Զարգացման մրցում- Արեւմտեան Մ. Նահանգներ

Լաւագոյն վրան- Հ.Մ.Հ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ի թիւ 20 վրան

Թեսմիջօրէի ժամը 5-ին տեղի ունեցաւ բանակումին վակաման պաշտօնական հանդիսութիւնը, որուն մասին կարդալ առանձին (Էջ 84):



Վիեննա- քոյր Լոռի Չիվեան, եղբ. Սարգիս Մարքեան

Պատաստ- եղբ. Զոհրապ Պետրոսեան, քոյր Անիք Բեհազարեան

Աւարալիա- եղբ. Դրո Մոմեան, քոյր Զեփիս Կիլպոյեան

Թիֆլիս- քոյր Էլիզապէք Վարդանովա, քոյր Անյշ Առուշանեան

Արեւմտեան Մ. Նահանգներ- քոյր Լենա Տոլմածեան

Արեւելեան Մ. Նահանգներ- քոյր Նարինէ Սաղեան, եղբ. Զարլզ Գուսպարեան


Հ.Մ.Ա.Կ.- քոյրեր Մինէ Քէշի և Փիմէ Սարդարեանս

Յունաստան- քոյրեր Մարի Արամ և Էլիփիտա Քալօկիրու

Ալմելո- եղբ. Յակոբ Գասպարեան, քոյր Թամիճա Ասոմեան











ՏԱՂԱՐԱՐՆԵՐ











ՏԱՂԱՒԱՐՆԵՐ











ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՔԵՐԹ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

ԵՌԱԲԼՈՒԹԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՊԱՌԹԷՌՆԻՆ ԵՒ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՅՈՒԺԱՐՉԱՆԻՆ

ամա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին երկրորդ օրը, Շաբաթ, 22 Յուլիսի յետմիջօրէին, բանակող սկառատները այցելեցին Երեւան եւ ծանօթացան մայրաքաղաքի տեսարժան վայրերուն: Ապա, պատուիրակութիւններու պատասխանատուները մեկնեցան Արցախեան պատերազմներու նահատակաց պանթէոն՝ Եռաբլուր:


ԵՌԱԲԼՈՒԹԻ ՄԷՋ

Եռաբլուրի մէջ, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամներու եւ բանակումի խմբապետական կազմի առաջնորդութեամբ, սկառատ պատասխանատուներ յարգանքի իրենց տուրքը ընծայեցին հայ ժողովուրդի վերջին 35 տարւան նահատակներուն, Արցախի համար իրենց կեանքերը զո-

հաբերած նուիրեալներուն: Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութիւնը յիշատակի եւ ոգեկոչման ծաղկեպսակ մը զետեղեց «Անծանօթ զինուոր»ի յուշակոթողին առջեւ, ուր բանակողներուն անունով խօսք առաւ եղը. Շահան Աթմաճեան:

Եղը. Շահան Աթմաճեան իր խօսքին մէջ ըստ, որ հայութիւնը իր հազարաւոր զաւակներուն թանկ արեամբ ուռոգեց հայրենիքի դաշտերը, որպէսզի մնայ արժանապատիւ, Հայստանը մնայ հայութեան, Արցախը չենթարկուի թշնամիի լուծին: Մեր պայքարի ուղին դժուար է: Մտածել որ դիւրին է, չարաչար սխալած կ'ըլլանք: Անհրաժեշտ է դիտակցիլ, որ հայրենիքը կարիքը ունի մեր բոլորին, որպէսզի մնանք քարտէսին վրայ եւ վերատիրանանք մեր իրաւունքներուն:

Շարունակելով, Եղը. Շահան Աթմաճեան հաստատեց.



«Մեզի համար Արցախը երբեք չի կրնար թշնամիներուն պատկանիլ: Արցախը ազատ ու անկախ պէտք է մնայ, որպէսզի մայր Հայրենիքին միանայ: Ան պէտք է նորէն ծաղկի: Մենք համոզուած ենք, որ Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքը, հերոսներու ծնողները, հարազատները եւ ամբողջ Հայութիւնը ո՛չ մէկ ձեւով պատրաստ է զիջելու իր Հայրենիքին անվտանգութեան երաշխիք այդ հողամասը, եւ իր մէջ անմար կը պահէ Հայութեան ու Հայաստանի ազատագրութեան պայքարի ջահը: Մեզի համար, Հայաստան, Արցախ, Զաւախք, Սփիւռք միասին կը կազմէն մէկ ամուր բռունքը: Թող ոչ ոք կասկածի մեր ժողովուրդի հերոսական ուժին: Ան կրնայ կերտել նոր յաղթանակներ եւ Հայութեան պարգեւել լրւաւոր ժամանակներ»:

Եղբ. Շահան Աթմաճեանի խօսքէն ետք, Եռաբրուր այցելող համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի պատուիրակութիւնը յարգանքի իր տուրքը ընծայեց Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան նախկին անդամ, Արցախեան առաջին պա-



տերազմի նահատակ եղբ. Վարդան Բախչեանի շիրիմին: Տեղի ունեցաւ ծաղկեմատոյց եւ «Յառաջնահատակ» քայլերդի խրմբերգում:



ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՔԵՐԹ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷջ

Երեւանի մէջ, երեկոյեան ժամը 7-ին, կազմակերպուեցաւ համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակումի պաշտօնական շքերթը, առաջնորդութեամբ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի սկաուտական շեփորախումբին եւ մամնակցութեամբ բանակումի մասնակից պատուիրակութիւններուն:

Օփերայի «Ազատութեան» հրապարակէն ընթացք առած եւ «Աբովեան» փողոցէն, «Հանրապետութեան» հրապարակէն մինչեւ «Շահումեան»ի հրապարակ երկարած շքերթը երկարեցաւ շուրջ մէկ ժամ: Տողանցքին բանակումին խմբապետական ընդհանուր եւ գործադիր կազմերը, ապա բոլոր պատուիրակութիւնները՝ շրջաններու անուններու այբուբենական շարքով: Խրոխտ ու խիզախ բանակողներու առջեւէն տողանցքին Հայաստանի, Արցախի, Հ.Մ.Լ.Մ.-ի, Հ.Մ.Լ.Մ.-ի



սկաուտութեան եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին դրօշները պարզած սկաուտներ:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՄԷՋ


Երեւանի շքերթէն ետք, երեկոյեան ժամը 8-ին, համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի մասնակիցները ուղղուեցան Հայոց Յեղասպանութեան նահատակներու Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր լուռ եւ կարգապահ շարքերով տո-



Դանցեցին մուտքէն մինչեւ անմար կրակին շուրջ առաջնորդող երթուղին: Այս առիթով, Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին անունով, Կեդրոնական Վարչութիւնը գետեղեց ծաղկեպսակ մը, մինչ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղը. Վաչէ Նաճարեան յարգանքի իր խոնարհումը ընծայեց մեր մէկուկէս միլիոն սրբադասուած նահատակներու յիշատակին:


Անմար կրակին շուրջ, սկառատներ կատարեցին ծաղկեմատոյց: Հոգեւոր հայրերու գլխաւորութեամբ կատարուեցաւ աղօթք եւ հոգեհանգստեան պաշտօն: Ապա, բանակումի խրմբապետական գործադիր կազմին անունով խօսք առաւ եղը. Ակուսթին Անալեան: Ան ըսաւ, որ յիշողութիւն կորսնցնելլ վասանգաւոր է: Յիշողութեան կորուսաը խոչնդուա կը հանդիսանայ իրաւունքի յաղթանակին հասնելու համար, ու այդպիսով արդարութեան ջահը կը սկսի մարի: Ով որ չի գիտեր իր պատմութիւնը, դատապարտուած է կրկնելու անոր սխալները: Մեր ժողովուրդը քաջ գիտէ իր պատմութիւնը, սակայն այսօր կան որոշ ճիգեր, որոնք կը փորձեն տկարացնել մեր ժողովուրդին յիշողութիւնը: Եւ եթէ յիշողութիւնը ուժ չունի, մեր արդար պահանջները տեղ չունին:

Շարունակելով, եղը. Ակուսթին խօսեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի ազգային-պահանջանական դիմագիծին մասին եւ ընդգծեց «Մենք հաստատ գետնի վրայ պիտի քալենք, պիտի աշխատինք, պիտի բարձրանանք ու պիտի բարձրացնենք, որպէսզի պայքարը շարունակուի, որպէսզի մեր արդար իրաւունքներուն եւ նպատակներուն հասնինք: Որովհետեւ մենք Շաւարշ



Քրիսեանի գաղափարականին ժառանգորդներն ենք: Որովհետեւ Յովհաննէս Հինդլեանի եւ Գրիգոր Յակոբեանի բարոյական եւ ազգային աւանդին շարունակողներն ենք: Եւ որովհետեւ մեր բառարանին մէջ «անկարելի» եւ «պարտութիւն» բառերը գոյութիւն չունին»:

Այսօրուան կացութեան անդրադառնալով, եղը. Ակուսթին Անալեան շեշտեց, որ «Վտանգը այլեւս տեսանելի իրականութիւն է բոլորին համար: Թշնամին բոլոր միջոցներով որոշած է նոր հարուածով մը բնացինջ ընել հայն ու Հայաստանը եւ համաթուրանական իր երազը իրականութիւն դարձնել»: Հետեւաբար, հաստատեց ան. «Իբրեւ Հ.Մ.Լ.Մ.ի սկառատներ, մենք խոստում եւ երդում տուած ենք ազգ ու հայրենիք պահանելու, հայ մշակոյթը, լեզուն եւ ազգային նկարագիրը պահելու, տարածելու եւ զարգացնելու: Ուրեմն, մենք երեք անտարբեր պիտի չմնանք այս կացութեան նկատմամբ եւ պիտի չհամակերպինք: Ազգային պահանջանակա-



կան երթէն հրաժարումը, հայութեան արժէքային համակարգին տկարացումը եւ անտեսումը, ինչպէս նաև ազգային դադարախօսութեան քանդումի փորձերը մեր գործելակերպին մէջ տեղ պիտի չունենան»:

Եղբ. Ակուսթին Անալեան իր խօսքը եզրափակեց վստահեցնելով, որ «Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ներուժին հաւաքագրումը, նորահաս սերունդներու ազգային կազմաւորումը կը շարունակեն ու պիտի՝ շարունակեն մեզի համար մնալ մնայոն առաջադրանք եւ կարեւոր ու անյետաձգելի աշխատանք»:

Խօսքէն ետք, բանակողները ազգային-հայրենասիրական երգերով հրաժեշտ տուին Ծիծեունակաբերդին, հայութեան եւ Հայաստանին ծառայելու Հ.Մ.Լ.Մ.ականի իրենց երդումը վերանորոգելով եւ ազգային մեր պահանջատիրութեան ջահը վառ պահելու աննկուն կամքով:





27 Յուլիսը յատկանշական օր մը եղաւ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական բանակումի մասնակիցներուն համար: Այդ օր, երեկոյեան, խարուկահանդէսի փոխարէն, բանակողները ազգային-յեղափոխական երգերու երեկոյով մը նշեցին Լիզպոնի հերոսական գործողութեան 40-ամեակը:

Այս առիթով պատրաստուած յատուկ բեմին վրայ ելոյթ ունեցաւ երգիչ Սուլքն Աճէմեան, ընկերակցութեամբ իր նուագախումբին:

Հ.Մ.Լ.Մ.ի կեղրոնական Վարչութեան, բանակումի խըմբագետական եւ գործադիր կազմի անդամներու ներկայութեամբ երեկոն սկիզբ առաւ Լիզպոնի տղոց նուիրուած երգով: Օրուան խորհուրդը փոխանցեց բանակումի խմբագետական գործադիր կազմի անդամ եղբ. Ակուսթին Անալեան՝ Հարաւային Ամերիկային:

Իր խօսքին մէջ, եղբ. Ակուսթին Անալեան ըսաւ. «Լիզպոնի հերոսները իրենց արարքով ապացուցեցին, որ իրենց նպատակը ահաբեկչութիւն էիր, այլ՝ նուիրաբերում Հայ Դատին: Լիզպոնի հերոսական գործողութիւնը միջազգային հանրութեան յիշեցուց, որ Հայոց Յեղասպանութիւնը անժխտելի

իրականութիւն է: Այս գործողութեան ետք բազմաթիւ երկիրներ ճանչցան Հայոց Յեղասպանութիւնը»:

Շարունակելով, եղբ. Անալեան յայտնեց. «Լիզպոնի հինգը մեզի սորվեցուցին, որ Հայ ըլլալը կապուած է Հայ Դատի պահանջատիրական պայքարին հետ: Նոյնիսկ ներկայ դաժան օրերուն անոնք կը մնան անմոռանալի եւ օրինակելի հերոս-



ԲԱՆԱԿՈՂՆԵՐ ԼԻԶՊՈՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԸ Կ'ՈԳԵԿՈՉԵՆ ԱԶԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅՈՎ



Ներ: Հետեւաբար, այսօր անգամ մը եւս կրկնենք, որ Արցախը մեզի կը պատկանի: Մենք ո՛չ մէկ ձեւով պատրաստ ենք Արցախի մեր քոյլ-եղբայրներէն բաժնուելու: Մենք չենք կրնար անտարբեր ըլլալ: Մենք՝ Հ.Մ.Լ.Մ.ի չարքաշ սկառաներ, աղգին համար միշտ պիտի աշխատինք, որպէսզի ազատագրութեան պայքարի ջահը վառ մնայ եւ փոխանցուի սերունդէ սերունդ՝ մինչեւ վերջնական յաղթանակ: Այս է մեր փշոտ ճամբան, սակայն մեր դրօշը պիտի ծածանի ընդդէմ բոնակալութեան: «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը եւ անսպառ կամքը մեզի պիտի հասցնեն նոր յաղթանակներու: Թերեւս մեր մեծ մայրերն ու մեծ հայրերը չտեսնեն այդ օրերը, բայց վստահ եղէք, որ մենք՝ Հ.Մ.Լ.Մ.ականերս պիտի տեսնենք այդ օրերը»:

Ապա, իր խօսքը եղբափակելով, եղբայրը հաստատեց. «Ինչպէս որ դուք կ'ըսէիք՝ մենք խենթեր ենք, բայց չակերտեալ խենթեր: Մենք այսօր ամբողջ հայութեան կ'ուղղենք ձեր խօսքը եւ կ'ըսենք՝ եկէք, միացէք մեզի: Մենք կը հաւատանք, որ խիզախ, խրոխա եւ միշտ պատրաստ կը կերտենք մեր ապագան, իրականացնելով մեր մեծ տեսլականը՝ խաղաղ ապրիլ ազատ, անկախ եւ միացեալ Հայրենիքի հողին վրայ»:

Օրուան խորհուրդին փոխանցումէն ետք, երեկոն շարունակուեցաւ ոգեւորուած սկառատներու ազգային-յեղափոխական երգերով ու կանչերով: Հասաւ պահը յիշելու Արցախի մեր եղբայրներն ու քոյլերը, որոնք թշնամական պաշարումի պատճառով զրկուած էին Հ.Մ.Լ.Մ.ական իրենց հարազատ քոյլերուն եւ եղբայրներու հետ ըլլալու կարելիութենէն: Ֆիզիքապէս անոնք ներկայ չէին, սակայն իւրաքանչիւր բանակողի մտքին ու հոգիին մէջն էին: Այդ երեկոյ առցանց կապով, անոնք բանակողներու հետ եղան ձայնով ու նկարով, երբ Ստեփանակերտէն տեսերիզով մը իրենց ողջոյնները յղեցին համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի մասնակիցներուն: Փոխադարձաբար, օրուան հերթապահին հրահանգով, բանակողները դարձան դէպի դրօշակի ձողերը եւ «Պատուա՛՛ի հրահանգով բարձրացան Հայաստանի ու Արցախի զոյգ դրօշները, որոնք ծածանած մնացին մինչեւ առաւօտ:



նը օրուան սկառտական յայտագիրներէ, մրցանքներէ, մշակութային ճոխ առօրեայէ եւ բանակավայրէն դուրս կատարած այցելութիւններէ ետք, Շաբաթ, 29 Յուլիս 2023-ի երեկոյեան ժամը 6-ին, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրին մէջ իր աշխատանքները աւարտեց համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը, յիշատակելի նոր էջ մը աւելցներով 105-ամեայ Հ.Մ.Լ.Մ.ի արդի պատմութեան մէջ:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին փակման հանդիսաւոր արարո-

թութիւնը կատարուեցաւ ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան նախկին անդամ եղբայրներ Բագրատ Եսայեան եւ Իշխան Եղիայեան, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Աւագեանի, Օշին Փիրումեանի, Դաւիթ Յակոբեանի, Արմանտ Քիլիճեանի, Ֆէտի Խաժակ Գազանձեանի եւ քոյր Թալին Օրտողեանի:

Իրենց ներկայութեամբ համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումի փակման արարողութիւնը պատուեցին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան, Համազգայինի Կեղրոնական Վարչութեան անդամ Տիգրան Պապիկեան, իրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան ատենապետ Սոֆի Զաղարբէկեան, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ քոյր Մարօ Քէշիշ-

եան, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան նախկին անդամ եղբայրներ Բագրատ Եսայեան եւ Իշխան Եղիայեան, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ընտանեկան պարագաներ, ազգային բարերար Գաբրիէլ Զէմպէրճեան, Հ.Մ.Լ.Մ.ի բարեկամներ եւ արտասահմանէն ժամանած մէծաթիւ ծնողներ:

Փակման արարողութիւնը ընթացք առաւ Հայաստանի եւ Արցախի քայլերգներուն կատարողութեամբ եւ բանակումի հերթապահ եղբ. Արամ Գայսէրեանի ողջոյնի կարճ խօսքով:

Խօսքին աւարտին, եղբ. Գայսէրեան յայտարարեց «Homenetmen's got talent»-ի եւ «Homenetmen's top chef»-ի մըրցանակակիր շրջաններուն անունները -



ՀԱՄԱՀ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ ՀԱՄԱՏԵՅԱՎ ՀԱՅՈՒԹԵԱՆ «ԽՐՈԽՏ, ԽԻԶԱՆ ԵՒ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ»ԿԱՄԱԳՈՐ ԲԱՆԱԿԸ ՄՆԱԼՈՒ ՅԱՆՉԱՊՈՒԹԵԱՄՔ



HOMENETMEN'S GOT TALENT

1. Արեւմտեան Միացեալ Նահանգներ
2. Իրան
3. Հիբանան

HOMENETMEN'S TOP CHEF

1. Ալմելօ
2. Գանատա
3. Աւստրալիա

ԲԱՆԱԿՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏԻՆ ԽՕՄՔԸ

Փակման արարողութեան առաջին խօսքը բարտասանեց ընդհանուր խմբապետ եղբ. Պողոս Մահպուապեան ըստ. «Հ.Մ.Լ.Մ.ի նպատակին անմար ջահը այս պահէն սկսեալ ձեզի կը փոխանցենք, որպէսզի ձեր կարգին շարունակէք երթը եւ զայն փոխանցէք յաջորդող սերունդներուն։ Կը խորհինք թէ պիտի դառնաք արժանի յանձնառունքը ձեզի տրուած այս իրաւունքին։ Շարունակեցէք երթը ձեր անձնական երազները իրականացներով, եւ թող Հ.Մ.Լ.Մ.ի սկառատական դաւանանքը դառնայ ձեր մշտական ուղեցոյցը»։

Ները եւ Հ.Մ.Լ.Մ.ի վեհ նպատակը տարածել իրենց շրջաններուն մէջ։

Իր խօսքը բանակող սկառատաներուն ուղղելով, եղբ. Պողոս Մահպուապեան ըստ. «Հ.Մ.Լ.Մ.ի նպատակին անմար ջահը այս պահէն սկսեալ ձեզի կը փոխանցենք, որպէսզի ձեր կարգին շարունակէք երթը եւ զայն փոխանցէք յաջորդող սերունդներուն։ Կը խորհինք թէ պիտի դառնաք արժանի յանձնառունքը ձեզի տրուած այս իրաւունքին։ Շարունակեցէք երթը ձեր անձնական երազները իրականացներով, եւ թող Հ.Մ.Լ.Մ.ի սկառատական դաւանանքը դառնայ ձեր մշտական ուղեցոյցը»։

Իբրեւ վերջին հրահանգ, եղբ. Պողոս Մահպուապեան թելագրեց. «Խստօրէն արգիլուած է ձեր եռանդը կորսնցել։ Մի վախնաք մեծ երազելէ։ Երազելը շատ

լաւ բան է։ Սակայն պէտք է զգուշանալ, որովհետեւ... երբեմն-երբեմն երազները կրնան իրականանալ»։

«ԱՐԱՐԱՏԵԱՆ»

ԿԱՐԳԻ ՏՈՒԶՈՒԹԻՒՆԸ

Այս առիթով կատարուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի սկառատական բարձրագոյն կարգի տուչութիւն 34 քոյր-եղբայրներու, որոնք անցնող երկուքուկչս տարիներուն առցանց դասախոսութիւններով, ապա՝ բանակումի ընթացքին մէկ օրւան վրայ երկարած յատուկ հանդիպումով տիրացան «Արարատեան» կարգի գիտելիքներուն, մշակեցին եւ գործադրեցին սկառատական ծրագիրներ եւ իվերջոյ արժանացան իրենց աշխատանքին արդար արգասիքը նկատուող «Արարատեան» կարգի փողկապին եւ մետալին, զորս փակման արարողութեան ընթացքին ստացան Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղայրներու կողմէ։

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.Ի

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄՔԸ

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.Ի խօսքը փոխանցեց վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան։ Քոյրը ըստ, որ ընկալեալ սովորութիւն է եւ Հ.Մ.Լ.Մ.ական բարձր գիտակցութեան դրսեւում է կրկնել, թէ միութենական աշխատանքի համար պէտք չէ չնորհակարութիւն յայտնել, բայց ես կը փափաքիմ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.Ի վարչութեան անունով չնորհակալութիւն յայտնել այն բոլոր Հ.Մ.Լ.Մ.ականներուն, որոնք իրենց պարտականութեան բարձր գիտակցութեամբ, ամիսներ շարունակ եւ բանակումի ընթացքին, աշխատեցան Հայրենիքի եւ Արցախի այս



չափազանց բարդ պայմաններուն մէջ կազմակերպելու եւ իրականութիւն դարձնելու համար համար-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը:

Շարունակելով, քոյր Սանտրա Վարդանեան շնորհակալութիւն յայտնեց այն եղակի համախմբումին համար, որ կրնայ ապահովել միայն Հ.Մ.Լ.Մ.ի նման համաշխարհային կազմակերպութիւն մը, եւ որուն շնորհիւ մենք՝ Հ.Մ.-Լ.Մ.ականներս անգամ մը եւս փաստեցինք, որ Հայաստան-Արցախ-Սփիտոք եռամիասնութիւնը ո՞չ մէկ իրավիճակ եւ ո՞չ մէկ իշխանութիւն կրնայ սասանել: Մենք՝ Հ.Մ.Լ.Մ.ականներս, ինչպէս բանակումին կարգախօսը կը յուշէ, խրոխտ ենք, խիզախ ենք եւ միշտ պատրաստ դիմագրաւելու մարտահրաւէրները ու խնդիրները, աւելի մեծ եւ կարեւոր նպատակներու իրագործման ճամբուն վրայ:

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Մ.Կ.ի ատենապետը մաղթեց, որ բանակողները Հայրենիքին իրենց հետ տանին նոր լիցքեր, եռանդ ու խինդ, աւելի մեծ նուիրումով կատարե-

լու Հ.Մ.Լ.Մ.ականի իրենց պարտականութիւնները: «Կը փափաքիմ դարձեալ յիշեցնել, որ ձեզմէ իւրաքանչյւրը պիտի ըլլայ Հայաստանի եւ Արցախի ներկայացուցիչը իր շրջապատին մէջ՝ կոտրելով այն լուսթիւնը, որ որդեգրուած է, բարձրածայնելու այն խնդիրները, որոնք այս պահուն կը դիմագրաւեն մեր քոյրերն ու եղբայրները Արցախի մէջ եւ անդրադառնալու այն բոլորին, ինչ որ կը կատարուի մեր հայրենիքին շուրջ», հաստատեց քոյր Սանտրա Վարդանեան:

ՅՈՒՆԱՆՈՒԻՐՆԵՐՈՒԻ ԲԱՇԽՈՒԻՄԸ

Փակման արարողութիւնը ընդգրկեց յուշանուէրներու բաշխում՝ քանի մը հանգրուանով: Նախ, բանակումին նշանակով յուշանուէրներ յանձնուեցան բանակումի օժանդակ մարմինի անդամներուն (քոյր Նանօր Սթամպուլեան, եղբայրներ Յարութ Տէմիրճեան, Շանթ Տէմիրճեան) եւ բժշկական անձնակազմին (բժիշկներ Տիգրան Նահապետեան, Վահէ Գէորգեան, բուժեղ-



բայր Անթոնի Գագիկեան, բուժքոյր Նաթալի Թաշճեան): Ապա, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութիւնը յուշանուէրներու փոխանակում կատարեց մասնակից պատուիրակութիւններու խմբապետներուն հետ: Իսկ երրորդ հանգրուանով, Կեղրոնական Վարչութիւնը յուշանուէրներ յանձնեց բանակումի գործադիր մարմինի եւ խմբապետական կազմի անդամներուն, ինչպէս նաև փակման արարողութեան ներկայ հիւրերուն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆԻ

ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՅԻՉԻԶԻՒՆ ԽՕՍՔԸ

Խօսք առաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանճեան եւ բանակումի իննօրեայ յայտագիրները ներկայացնելով յայտնեց, որ «Այս բոլորը կատարուեցան եւ պիտի շարունակուին կատարուիլ համար-Հ.Մ.Լ.Մ.ական մեծ ջանքով եւ շրջաններու հակայական ճիգով, մէկ հիմնական նպատակ ունենալով՝ մեր մէջ միշտ վառ պահել հայու ողին, հայութեան պատկանելիութիւնը, հայ մշակոյթը, հայ լիուն եւ հայութեան եւ հայրենիքին համար զոհուած տղոց լիշտակը»:

Եղբ. Ֆէտի Խաժակ Գագանճեան յատուկ կերպով յիշեց Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի սկաուտները, որոնք թշնամական պաշարումի պատճառով զրկուեցան բանակումի մասնակցութեան իրաւունքին: Ան ըստ. «Արցախի սկաուտներ, դուք մեր առօրեայ հանդիպումներուն, խարուկահանդէսնե-





ըուն ընթացքին հոգիով ու սրտով մեզի հետ էիք, յոյառվ ենք, որ յառաջիկայ ծրագիրներուն անպայման կը միանանք Փիզիքապէս»: Եղբ. Ֆէտի Խաժակ Գաղանճեան գնահատեց նաեւ բանակումի յաջողութեան համար Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի ի գործ դրած ճիգերը եւ դրուատիքի խօսքեր արտասանեց բանակողներուն, որոնք կարողացան շաղուիլ յատուկ խնամքի կարօտ «Հրաշք» պատանի եւ երիտասարդ տղոց ու աղջիկներուն հետ, ստեղծել ընկերային մթնոլորտ եւ սկաուտական ոգիով գործակցիլ միասնաբար:

Ապա, եղբ. Ֆէտի Խաժակ Գաղանճեան չնորհակալութիւն յայտնեց բանակումի յաջողութեան նպաստած խմբապետական կազմին եւ գործադիր մարմնի խմբապետներուն, որոնք «աշխատեցան եւ ծառայեցին անխնայ, բանակումի ընթացքին ստեղծեցին ամուր շղթայ մը, զոր երբեք կարելի չէր կոտրել՝ ի



պատիւ իրենց մէջ տիրող համագործակցութեան ողիին. անոնք ի սպաս զրին իրենց բոլոր գիտելիքները եւ փորձառութիւնները, զորս ստացած էին իրենց շրջաններէն եւ համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակումը յաջողուցին եւ յաջողեցան»:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸԼ

Փակման արարողութեան եզրափակիչ պատգամը փոխանցեց Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան:

Պատգամին սկիզբը եղբ. Վաչէ Նաճարեան նշեց, որ «Փակման այս արարողութիւնը պարզապէս հրաժեշտ չէ, այլ՝ Հ.Մ.Լ.Մ.-ի աշխարհասփիւռ համակիրներուն համար վկայութիւն է, հաստատում է Հ.Մ.Լ.Մ.-ի հանդէպ ցուցաբերուող ազգային միասնութեան եւ հաւատքին, Հ.Մ.Լ.Մ.-ի աշխատանքներուն հանդէպ մեծ վստահութեան՝ Հայրենիքի, Արցախի թէ Սփիւրքի զանազան գաղութներուն մէջ»:

Կեդրոնական Վարչութեան ատենապետը այս առևիթով շնորհակալութիւն յայտնեց բանակումի խմբապետական կազմին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան, բանակումի օժանդակ անձնակազմին, սկաուտական «Արարատեան» կարգի կազմակերպիչ կորիգին եւ բանակումի մասնակից շրջաններու պատվիրակութիւններու պատասխանատուներուն, որոնց բոլորին միասնական եւ հսկայական ճիգերով կարելի եղաւ սկաուտական եւ միութենական այս մեծ իրագործումը կատարել: Եղբ. Վաչէ Նաճարեան չմոռցաւ յիշելու նաեւ Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախի սկաուտները, անոնք՝ որոնք «իրենց գոյատեւումով օրինակ են մեր բոլորին եւ կը շարունակեն արժեւորել պայքարի խորհուրդը եւ ազատ, անկախու ամբողջական Հայաստանի մեր յաւերժական տեսլականը»:

Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակումին ընդհանուր գնահատումը կատարելով, Կեդրոնական Վարչութեան ատենապետը յայտնեց, որ «Հայաստակ բոլոր մարտահրաւելէրներուն, երբ կը





Կանգնինք այստեղ, Հ.Մ.Լ.Մ. կը փաստէ, որ աւելի քան պարզ կազմակերպութիւն մընէ: Հ.Մ.Լ.Մ. ունի 105 տարւան ժառանգութիւն եւ կը շարունակէ զօրանալ անցնող իւրաքանչիւր օրւան ընթացքին: Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը վկայութիւնն է ապագայ հայ տիպար քաղաքացիներ պատրաստելու, յաջող ղեկավարներ դաստիարակելու, տարբեր գաղութներու միջեւ կամուրջներ կառուցելու եւ Սփիւրքը Հայրենիքին կապելու ու մասնաւնդ՝ հայկական իրականութեան մէջ հպարտութեան զգացում սերմանելու աշխատանքն»:

Շարունակելով, եղբ. Վաչէնածանը նշեց. «Թող այս բանակումը ծառայէ իբրև փարոս՝ լու-

սաւորելու գալիք սերունդներու ճանապարհը: Երբ վերադառնաք ձեր երկիրները, ձեզի հետ տարէք այստեղ ձեռք բերած փորձառութիւնները, բարեկամութիւնները եւ սորված միութենական արժէքները: Ձեր դերը՝ իբրեւ մասնակից այս բանակումին, կ'երթայ այս բանակավայրի սահմաններէն անդին: Եղէք մեր ազգի պատմութեան յաջորդէջին դրական փոփոխութիւններուն կորիզը՝ միշտ օգնելով ուրիշին, բարձրանալով եւ բարձրացնելով: Ձեր դաստիարակութենէն մեկնած՝ օրինակ եղէք, ձեր քաջութեամբ, նըւիրուածութեամբ եւ յարատեւող ոգիով: Աշխարհը թող ականատես ը ը ը լ լ ա յ Հ.Մ.Լ.Մ.ը բնորոշող միասնութեան ուժին, որովհետեւ միաս-

նաբար, իբրեւ կամաւոր բանակ, կրնանք յաղթահարել ամէն խոչընդուռ եւ այդ ուժը դնենք ի սպաս մեր ազգի յարատեւութեան, որպէսզի ան յաղթական դուրս գայ իրեն սպառնացող բոլոր մարտահրաւերներէն»:

Հուսկ, Կեդրոնական Վարչութեան ատենապետը իր պատգամը եզրափակեց ըսելով. «Թող Հ.Մ.Լ.Մ.ի բոցը յաւիտեան վառ այրի ձեր սրտերուն մէջ: Վարձը կատար բոլորին եւ մեր ժամադրութիւնը չորս տարի ետք, Հ.Մ.Լ.Մ.ի երկրորդ հարիւրամեակի երկրորդ բանակումին»:

ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին պատգամէն ետք, երեկոյեան ժամը 7.30-ին, բանակումին եւ Հ.Մ.Լ.Մ.ի քայլերգներով վար առնըւեցան բանակավայրին մէջ ինը օր ծածանած դրօշակները: Ըստ ընդունած կարգի, երկիրներու դրօշակները յանձնուեցան բանակումի հերթապահ եղբ. Արամ Գայսիրեանին, իսկ բանակումին դրօշակը՝ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պողոս Մահպուակեանին:

Փակման պաշտօնական արարողութեան յաջորդեց ազգագրական-տոհմիկ երգերու համերգ՝ կատարողութամբ երգիչ ներսիկ իսպիրեանի: Համերգը աւարտեցաւ ազգային-յեղափոխական երգերով եւ հայութեան «խրոխտ, խիզախ» եւ միշտ պատրաստ» կամաւոր բանակը մնալու յանձնառութեամբ:





ԹՈՂ Հ.Մ.Լ.Մ.Ի ԲՈՅԸ ՅԱՒԻՏԵԱՆ ԱՅՐԻ ԶԵՐ ՍՐՏԵՐՈՒՆ ՄԷՋ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ՎԱԶԻ ՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
ԲԱՆԱԿՈՒՄԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

Պատուարժան հիւրեր,
Սիրելի քոյլեր եւ եղայլըներ,
Եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի շատ սիրելի
սկառատներ,

Այսօր, երբ հաւաքուած ենք Բիւրական, Հ.Մ.Լ.Մ.ի «Գառ-
նիկ Մկրտիչեան» բանակավայր, համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ
բանակումի փակման արարողութեան, սիրտս լեցուն է խոր
երախտագիտութեամբ եւ հիացմունքով՝ ձեզմէ իւրաքանչիւ-
րին հանդէպ: Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին դուք
ցուցաբերեցիք Հ.Մ.Լ.Մ.ական սկառատական ողի եւ դերա-
կատար եղաք անգամ մը եւս հաստատելու միութենական

աննկուն զօրութիւնը եւ միասնականութիւնը, որմով կը բնո-
րոշուի ձեր միութիւնը:

Փակման այս արարողութիւնը պարզապէս հրաժեշտ չէ,
այլ վկայութիւն է Հ.Մ.Լ.Մ.ի աշխարհասփիւռ համակիրնե-
րուն համար, հաստատում է Հ.Մ.Լ.Մ.ի շուրջ ազգային մի-
ասնականութեան եւ հաւատքին՝ Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքնե-
րուն հանդէպ հայրենիքի մէջ, Արցախի եւ Սփիւռքի բոլոր
գաղութներուն մէջ:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի աշխատանքնե-
րուն պաշտօնական աւարտով, առաջին հերթին շնորհակա-
լութեան խօսք բանակումի խմբագետական կազմին եւ գոր-



ծաղիր մարմինի քոյլերուն եւ եղբայրներուն, որոնք այս բանակումին շարժակն էին ու աշխատանքի կորիգը: Անոնք կազմակերպեցին եւ բոլոր պայմանները ստեղծեցին բանակումին յաջողութեան համար: Իրենց օժանդակութեամբ կարելի եղաւ աւարտին հասցնել ամիսներու վրայ երկարած անսպառ հետքը:

Անոնք անխոնջ աշխատեցան, որպէսզի այս բանակումը հասնի իր յաջող աւարտին: Իրենց նուիրուածութեամբ, աշխատանքի կիրքով եւ ամենայետին մանրամասութիւններու ուշադրութեամբ անոնք կերտեցին իրագործում մը՝ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը, որ անմոռանալի փորձառութիւն մը պարգևեց բոլոր մասնակիցներուն: Ուշագրաւ օրինակով մը, անոնք ցոյց տուին Հ.Մ.Լ.Մ.ական նուիրեալ եւ կազմակերպ խմբային աշխատանք:

Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պողոս Մահպուակնեան,

Փոխ խմբապետուհի քոյլ Շարլին Գեօգալեան,
Փոխ խմբապետ եղբ. Գէորգ Օհանեան,
Հնդհանուր հերթապահ եղբ. Արամ Գայսերեան,
Եղբայրներ Ակուսթին Անալեան, Յովիկ Փամբալեան,

Աւագ Կարապետեան, Գրիգոր Տուլգարեան, քոյլեր Մենար Պոյաճեան եւ Թամար Քէշիչեան:

Ցատուկ շնորհակալութեան խօսք Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նուիրեալ վարչութեան, գրասենեակին եւ բոլոր անդամներուն, որոնք բանակումի նախօրեակին եւ ընթացքին ամէն ճիգ կատարեցին համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի կեցութեան եւ ծրագիրներու յաջողութեան համար: Անոնք լուռ կը շալկեն համա-Հ.Մ.Լ.Մ.ական աշխատանքներու յաջող կայացման կազմակերպական պատասխանատուութիւնը Հայաստանի մէջ եւ ամէն անգամ կը ցուցաբերեն բարձր մակարդակի աշխատանք եւ միութենական պատասխանատուութիւն:

Զեր վարձքը կատար քոյլ Սանտրա եւ վարչութեան քոյլեր եւ եղբայրներ:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր այն քոյլերուն եւ եղբայրներուն, որոնք քուլիսներու ետին, հիմա ներկայ կամ հեռակայ Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոններէն այս աշխատանքը կը հետապլն-դէին: Անոնք շուքի մէջ աշխատելով անձայն նպաստեցին պայծառ հատոր մը եւս աւելցնելու համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումներու պատմութեան:



Յատուկ չնորհաւորութիւններ եւ վարձքը կատար բանակումի աշխատանքներուն զուգահեռ «Արարատեան» կարգի կազմակերպիչ մարմնին՝ եղբ. Ակուսթին Անալեանին, քոյրել Նարէ Խղաթեանին եւ Արտա Զէյթունլեանին, որոնց նուիրական մօտեցումով կարելի եղաւ ծրագրել, համադրել եւ յաջողապէս իրականացնել «Արարատեան» կարգի աշխատանքները եւ իրենց լրումին հասցնել երկու տարի ետք:

Չնորհաւորութիւններ, բնականաբար, «Արարատեան» կարգի նորագոյն սերունդին, Հ.Մ.Լ.Մ.ի սկառատական բարձրագոյն կարգին արժանացած մեր քոյրերուն եւ եղբայրներուն, եւ մանաւանդ անոնց, որոնք յատուկ ճիգով անպայման ուղեցին ստանալ «Արարատեան» կարգի իրենց նշանները հայրենի հողին վրայ: Դուք պիտի ըլլաք ջահակիրները մեր միութեան երկրորդ հարիւրամեակի աշխատանքներուն ծրագրման եւ իրագործման: Վստահ ենք, որ դուք լաւապէս պիտի արժենորդք ճիգի վստահուած այս կարեւոր առաքելութիւնը՝ ստանձնելով յաջորդող սերունդին դեկավարութեան պատասխանատուութիւնը:

Ու վերջապէս, չնորհակալութիւն 28 շրջաններէ մասնակից պատովիրակութիւններու խմբապետ-խմբապետուհիներուն եւ անդամներուն, որոնց կարգապահութիւնն եւ գիտակցութիւնը ուղղակիրէն նպաստեցին բանակումին յաջողութեան: Զեր անսասան աջակցութիւնը եւ պատասխանատըռութեան գիտակցութիւնը զօրութիւն տուին մեր երիտասարդ մասնակիցներուն ընդունելու Հ.Մ.Լ.Մ.ի սկառատութեան իրական էութիւնը եւ 10 օրեր ապրելու այդ սկզբունքներով, ընտանեկան միջնորդառով, ճեր հացն ու աղը կիսելով միութենական եղբայրներու եւ քոյրերու հետ, որոնք դեռ 10 օրեր առաջ օտար կը նկատուէին ճիգի:

Պէտք է անպայման յիշել եւ չնորհակալութիւն յայտնել Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի մեր քոյրերը եւ եղբայրները, որոնք ժամանակուած էին մեզի հետ ըլլարու: Անոնք իրենց գոյատեւումով օրինակ եղան մեր բոլորին եւ կը շարունակեն արժենորել պայքարի խորհուրդը եւ ազատ, անկախ ու ամբողջական Հայատանի մեր յաւերժական տեսլականը:

Հակառակ բոլոր մարտահրաւէրներուն, երբ կը կանգնինք այստեղ, Հ.Մ.Լ.Մ. կը փաստէ, որ աւելի քան պարզ կազմակերպութիւն մըն է ան: Հ.Մ.Լ.Մ. 105 տարուան ժառանգութիւն է, որ կը շարունակէ հզօրանալ անցնող իւրաքանչիւր օրուան ընթացքին: Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը վկայութիւնն է ապագայ հայ տիպար քաղաքացիներ պատրաստելու, յաջող դեկավարներ դաստիարակելու, տարբեր գաղութեներու միջեւ կամուրջներ կառուցելու, Սփիւռքը հայրենիքին կապելու եւ հայ իրականութեան մէջ հպարտութեան գգացում սերմանելու իր անժխտելի դերակատարութեան:

Կը հաւատամ, որ այս բանակումը փարոս պիտի ժառանգ Հ.Մ.Լ.Մ.ի յառաջիկայ հարիւրամեակին: Մենք 105-ամեայ միութիւն ենք եւ կը շարունակենք մնալ ուժեղ: Մենք յանձնառու ենք հայ երիտասարդները կրթելու եւ հզօրացնելու երկար տարիներ:

26 երկիրներէ եւ շրջաններէ ժամանած Հ.Մ.Լ.Մ.ական սկառատներուն կ'ըսենք՝ հպարտ եղէք, որովհետեւ դուք էք մեր ազգի ապագան:

Թող այս բանակումը ծառայէ իրեւ փարոս՝ լուսաւորելու գալիք սերունդներու ճանապարհը: Երբ վերադառնաք ձեր երկիրները, ձեզի հետ տարէք այստեղ ձեռք բերած փորձառութիւնները, բարեկամութիւնները եւ սորված միութենական արժէքները: Զեր դերը՝ իրեւ մասնակից այս բանակումին, կ'երթայ այս բանակավայրի սահմաններէն անդին: Եղէք մեր ազգի պատմութեան յաջորդ էջին դրական փոփոխութիւններուն կորիկը՝ միշտ օգնելով ուրիշին, բարձրանալով եւ բարձրացնելով:

Զեր դաստիարկութենէն մեկնած օրինակ եղէք ձեր քաջութեամբ, նուիրուածութեամբ եւ յարատեւող ողիով: Աշխարհը թող ականատեսը ըլլայ Հ.Մ.Լ.Մ.ը բնորոշող միասնականութեան ուժին, որովհետեւ միասնաբար, իրեւ կամաւոր բանակ, կրնանք յաղթահարել ամէն խոչընդուած եւ այդ ուժը դնենք իսպամ մեր ազգի յարատեւութեան, որպէսզի ան յաղթական դուրս գայ իրեն սպառնացող բոլոր մարտահրաւէրներէն:

Բանակումը խաղաղ եւ հանդարտ պատոյս մը չէր, այլ յոդնեցուցիչ հեւքով եւ ժրաջան աշխատանքով սկառատական ձեռնարկ մըն էր: Սակայն ան յատուկ էր, որովհետեւ սկառատական միութենական ողին էր տիրապետողը: Այն ողին, որ յատուկ է միայն Հ.Մ.Լ.Մ.ին: Այն ողին, որ այս բանակումը ամրապնդեց մեր մէջ: Մեր յատուկ միութենակ անդամ մը եւս առիթը ընծայեց մեզի ապրելու բացառիկ օրեր՝ գորանալով հայրենիքի հողին ուժով: Անկասկած, ձեզին մէկուն պատիւ էր բանակի ձեր եղբայրներու եւ քոյրերու կողմքին ու անոնց հետ բաժնեկցիլ հայրենիքի հողն ու երկինքը, օդն ու ջուրը եւ հպարտանալ Հ.Մ.Լ.Մ.ական սկառատ ըլլարու իրութեամբ:

Դժբախտաբար, պէտք է բաժնուինք: Սակայն իւրաքանչիւր զինուած նոր առաքելութեամբ՝ այս բանակումին ստեղծած ողին ու յիշատակները մաստունքի նման տանելու աշխարհի չորս կողմէրը եւ ցանելու ո՛չ միայն Հ.Մ.Լ.Մ.ական շրջանակի մէջ, այլ ամէն տեղ ուր հայկական ճրագ կայ, շարունակելու մեր առաքելութիւննը՝ Սուրբ աշխատանքը: Այստեղ ձեւաւորուած փորձառութիւնները, յիշեցներ, որ դուք առանձին չէք այս առաքելութեան մէջ: Դուք այս միութեան համաշխարհային ընտանիքին մէկ մասնիկն էք: Ունիք տուն ամէն երկրի մէջ, ուր Հ.Մ.Լ.Մ. կայ, ունիք ընտանիք ամէն երկրի մէջ, ուր Հ.Մ.Լ.Մ.ական կայ եւ մանաւանդ հաւատանի միացած պատրաստէր միասին՝ «խրոխտ, խիզախ եւ միշտ պատրաստ» մենք կրնանք յաղթահարել բոլոր մարտահրաւէրները ի շահ մեր ազգի իրաւունքներուն վերատիրացման: Թող այս բանակումին յիշատակները խթանեն ձեր միութենական կիրքը եւ ողեշնչեն ձեզ՝ ձեր աշխատանքները շարունակելու ձեր գաղութներէն ներս թէ հայրենիքի մէջ:

Թող Հ.Մ.Լ.Մ.ի բոցը յաւիտեան այրի ձեր սրտերուն մէջ:

Վարձքը կատար ձեր բոլորին եւ մեր ժամանակութիւնը չորս տարի եաք, Հ.Մ.Լ.Մ.ի երկրորդ հարիւրամեակի երկրորդ բանակումին:

ՎԵՐԱԿԱՐՁՔ ԶԵՐ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՈՐ ԹԱՓՈՎ ԾՐԱԳՐԵՑՔ ՅԱՌԱՋԻԿԱՅԻ ԶԵՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՄԿԱՌԻՏԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԵՂԲ. ՖԷՏԻ ԽԱԺԱԿ
ԳԱՅԱՆՃԵԱՆԻ ԽՈՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ
ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

Յարգելի ներկաներ,
26 երկիրներու սկառտական սիրելի պատուիրակութիւններ:

Բարի եկած էք համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումի փակման հանդիսաւոր այս արարողութեան, որ տեղի կ'ունենայ Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» սկառտական բանակավայրին մէջ: Անսահման հպարտութեամբ եւ ուրախութեամբ հաւաքուած՝ կը նշենք յաջող աւարտը այս արտասովոր իրադարձութեան, որ միացուցած է 26 շրջաններ:

700 մասնակիցներ բանակավայրին մէջ ունեցաք անմոռանալի ինը օրեր, որոնց ընթացքին կատարեցիք հետազօտական, մշակութային, արկածախնդրական, ընկերային ծրագիրներ, խև բանակավայրէն դուրս ունեցաք պտոյտներ, տողանցեցիք երեւանի փողոցները, այցելեցիք Ծիծեռնակաբերդ եւ Եռաբլուր: Այս բոլորը կատարուեցան եւ պիտի շարունակուին կատարուիլ համա-Հ.Մ.Լ.Մ.ական մեծ ջանքով եւ շրջաններու հակայական ճիզով, հիմնական նպատակ ունենալով մեր մէջ միշտ վառ պահել հայու ոգին, հայ ազգին պատկանելիութիւնը, հայ մշակոյթը, հայ լեզուն եւ հայութեան ու հայրենիքին համար զոհուած տղոց յիշատակը:

Անդրադառնալով մեր Արցախի սկառտներուն, որոնք ակամայ, պաշարման մէջ ըլլալով, չկարողացան ներկայ գրանլուիլ այս բանակումին, կը հաստատենք, որ անոնք առօրեայ մեր հանդիպումներուն, աշխատանքներուն, խարուկահանդէսներուն ընթացքին մեզի հետ էին հոգիով ու սրտով, այն յոյսով որ յառաջիկայ ծրագիրներուն մեզի կը միանան նաեւ ֆիզիքապէս:

Խոսքս ուղղելով Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Մ.Կ.ին, դուք իսկապէս ամուր կազմակերպութիւն էք: Անցնող երկար տարիներու ընթացքին, եւ յատկապէս Արցախի պատերազմներուն ընթացքին, դուք կարողացած էք ձեր խոստումին հաւատարիմ մնալ, միշտ օգնել ուրիշին, իբրև պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ: Զեր ամբողջական աջակցութեամբ մենք կարողացած ենք համա-Հ.Մ.Լ.Մ.ական բոլոր ծրագիրները յաջողցնել, սիրելի Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Մ.Կ.:

Բանակումին ընթացքին մենք ականատեսը եղանք, թէ ինչպէս Հ.Մ.Լ.Մ.ական մեր



սկառտները կարողացան շաղուիլ «ՀՐԱՇՔ»ի պատանի եւ երիտասարդ տղոց ու աղջիկներուն հետ, ստեղծել ընկերային միջնորդ եւ սկառտական ոգիով գործակցիլ միասին:

Երախտապարտութեան խօսք կ'ուզեմ փոխանցել համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին նշանակը գծող եղբ. Յովիկ Փամբալեանին՝ Սուրբիոյ շրջանէն: Բանակումին քայլերգին բառերը գրող եւ երաժշտութիւնը յօրինող եղբ. Ակումին Անալեանին՝ Հարաւային Ամերիկայէն, քայլերգին դաշնաւորումը կատարած եղբ. Յարութ Երէցեանին՝ Սուտերթելիայէն եւ քայլերգը մեկնաբանած եղբ. Համօ Երէցեանին՝ դարձեալ Սուտերթելիայէն, Շուէտ:

Սիրելի պատուիրակութիւններու խմբապետներ եւ պատասխանատուներ, հպարտութեամբ վերադարձէք ձեր շրջանները, ձեզի հետ տանելով նոր պատասխանատութեան փորձառութիւն: Վերադարձէք ձեր շրջանները այն խոստումով, որ նոր թափով պիտի ծրագրէք յառաջիկայի ձեր յայտագիրները:

Իսկ սիրելի գործադիր մարմինի խմբապետներ, աշխատեցաք եւ ծառայեցիք անինայ: Բանակումին ընթացքին դուք ձեզի ստեղծեցիք ամուր շղթայ մը, զոր երբեք կարելի չէր կոտրել՝ ի պատիւ ձեր մէջ տիրող համագործակցութեան ոգիին: Դուք ի սպաս դրիք ձեր ամբողջ գիտելիքները եւ փորձառութիւնները, զորս ստացած էիք ձեր շրջաններէն եւ ինքնազարգացումով, եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը յաջողցուցիք ու յաջողեցաք:

Հարազատ խմբապետական կազմ՝ քոյր Շարլին Կէօգէլեան, եղբ. Գէորգ Օհանեան եւ ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուպեան, ձեզի յանձնարարուեցաւ ծրագրել եւ կազմակերպել համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը:

Այսօր բոլորս ականատեսն ենք այս բանակումին աւարտին: Վկաներն ենք, թէ ինչպէս ձեր ստանձնած դրօշը հասցուցիք այն բարձունքին, ուր իւրաքանչիւր Հ.Մ.Լ.Մ.ական կ'ուզէ տեսնել: Դուք ձեր յատուկ դրոշմը ձգեցիք համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումին վրայ եւ դարձաք փայլուն աստղերը բանակումին ձեզի:

«Խրոխա, խիզախ եւ միշտ պատրաստ» նշանաբանով բարի երթ կը մաղթեմ ձեզի եւ բարով հասնիք ձեր տունները:





ԶԵԶԱՆԻՑ ԻՒՐԱՋԱՆՉԻՐԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՄՐՑԱԽԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԻՐ ԾՐՁԱՊԱՏՈՒՄ

(Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՔՈՅՑՐ ՍԱՆՏՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

Լնկալեալ սովորութիւն է եւ Հ.Մ.Լ.Մ.ական բարձր գիտակցութեան դրսեւորում, երբ ասում ենք, թէ միութենական աշխատանքի համար պէտք չէ շնորհակալութիւն յայտնել բոլոր այն Հ.Մ.Լ.Մ.ականներին, որոնք իրենց պարտականութեան բարձր գիտակցութեամբ, ամիսներ շարունակ եւ բանակման ընթացքում, աշխատեցին Հայրենիքի եւ Արցախի համար այս չափազանց բարդ ժամանակահատուածում կազմակերպելու եւ իրականութիւն դարձնելու համաձ. Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակումը: Շնորհակալութիւն նաեւ բոլոր մասնակից պատուիրակութիւններին եւ իրենց Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւններին: Առանց ձեր ջանքերի եւ ներդրումների հնարաւոր չէր լինելու ապահովել 700 սկառաների ներկայութիւնը այս բանակմանը:

Սակայն իմ շնորհակալութիւնը ո՞չ միայն բանակման յաջող կայացման համար է, այլև այն եզակի համախմբման, որը կարող է ապահովուել միայն Հ.Մ.Լ.Մ.ի նման համաշխարհային տարրողութեամբ կազմակերպութիւնը, եւ որի արդիւնքում մենք՝ Հ.Մ.Լ.Մ.ականներս մի անգամ եւս փաստեցինք, որ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը ո՞չ մի իրավիճակ եւ ո՞չ մի իշխանութիւն չի կարող սասանել, եւ որ մենք՝ Հ.Մ.Լ.Մ.ականներս ինչպէս մեր բանակման կարգախօսն է յուշում՝ խրոխա ենք, խիզախ ենք եւ միշտ պատրաստ, դիմագրաւելու մարտահրաւէրներն ու խնդիրները,





առաւել մեծ եւ կարեւոր նպատակների իրագործման ճանապարհին:

Անցնող 10 օրերի ընթացքում, բանակման խմբապետական եւ գործադիր մարմնի, ինչպէս նաև Հ.Մ.Լ.Մ.ի Կենտրոնական Վարչութեան ջանքերով իրականութիւն դարձաւ ամիսներ շարունակ ծրագրուածը, իր տարբերուող յայտագրով եւ նոր մօտեցումներով, որի արդինքում վստահ եմ դուք բոլորդ Զեր շրջանները կը վերադառնաք բարձր տրամադրութեամբ, հիանալի յուշերով եւ կրկին հանդիպելու ակնկալիքով։

Իսկ Հայունիքից ձեզ հետ կը տանէք նոր լիցքեր, եռանդ ու խինդ աւելի մեծ նույիրումով կատարելու ձեր պարտականութիւնները որպէս Հ.Մ.Լ.Մ.ականներ։ Ուզում եմ նորից յիշեցնել, որ ձեզանից իւրաքանչիւրը պիտի լինի Հայաստանի եւ Արցախի ներկայացուցիչը իր շրջապատում՝ կոտրելով այն լուսութիւնը, որը որդեգրուած է, բարձրաձայնելու այն խընդիրները, որոնք հէնց այս պահին դիմագրաւում են մեր քոյրերն ու եղբայրները Արցախում եւ անդրադառնալու այն ամէնին, ինչ կատարուում է մեր Հայունիքի շուրջ։

Ցաջողութիւն եւ բարի ճանապարհ ենք մաղթում ձեզ սիրելի քոյրեր եւ եղբայրներ։

Մենք միշտ պատրաստ ենք հիւրընկալելու ձեզ Մայր Հայաստանում, մենք միշտ սպասում ենք բոլորիդ…





ՃԱՐՈՒԱԿԵՑՔ ԵՐԹԸ ԵՒՀ.Մ.Լ.Մ.Ի ՍԿԱՌՏԱԿԱՆ ԴԱՒԱՆԱՔԸ ԹՈՂ ԴԱՌՆԱՅ ԶԵՐ ՄՃՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑԸ

(ՀՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ ԵՂԲ. ՊՈՂՈՍ
ՄԱՀՊՈՒՊԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
ԲԱՆԱԿՈՒՄԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍԱԻՐ
ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)



Բարի գալուստ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 12-րդ բանակում,
Բարի գալուստ թիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բա-
նակավայր, որ վերջին մէկուկէս շաբաթը դարձաւ տունը
700 սկաուտներու: Կ'ուգեմ այս բանակումը նուիրել բոլոր
բացականերուն՝ անոնց, որոնք անընդհատ կը գործեն մեզի
հետ, եւ անոնց, որոնք հոգուով կը հսկեն մեզի:

Բանակումներու ընթացքին սովորաբար երկու անգամ կը
յուզուիմ՝ առաջին եւ վերջին օրերուն: Առաջին օրը, որովհետեւ
մեր առօրեայ կեանքերէն դուրս ելած կ'ըլլանք եւ կը ծանօթա-
նանք նորանոր պայծառ եւ խոստմնալից դէմքերու, իսկ վերջին
օրը, որովհետեւ չենք կրնար բաժնուիլ մեր քոյլեր-եղբայրներէն
եւ մեր կերտած յիշատակները ընդհատել այս տունէն ներս:

Սիրելի սկաուտներ, այս 10 օրերուն ընթացքին, խմբապե-
տական կազմը ականատեսը եղաւ ձեր նուիրումին եւ կատա-
րելագործութեան: Տեսանք ինչպէս յարգեցիք սկաուտական
ձեր դաւանանքը եւ լիուլի հաւատարիմ մնացիք Հ.Մ.Լ.Մ.ակա-
նի ձեր խոստումին: Բանակումի գործադիր մարմինն ու խրմ-
բապետական կազմը գործակցաբար եւ բժախնդորէն ծրագ-
րեցին այս բանակումը՝ ծառայելու համար մէկ նպատակի,
անցընելու անմոռանալի օրեր եւ շահելու նոր քոյլեր ու եղ-
բայրներ՝ աշխարհի տարբեր կողմերէ: Բանակումի ընթացքին,
աստիճանաբար կապուեցանք ձեր բոլորին, սիրեցինք ձեզի եւ
գործեցինք իբրեւ մէկ մարմին ու մէկ ընտանիք: Անխափի,
բոլորդ կը գնահատեմ ձեր անսակարկ աշխատանքին, անրա-
պառ եռանդին եւ անդրդուելի մասնակցութեան համար:

Սիրելի քոյլերս ու եղբայրներս, դուք այսօրուընէ կը նկատ-
ւիք փորձառու մասնակիցներ համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանա-
կումի: Այսօրուընէ նաեւ կը նկատուիք յանձնառու անհատ-
ներ՝ ձեր շրջաններուն մէջ տարածելու ձեր յիշատակներն ու
Հ.Մ.Լ.Մ.ի վեհանձն նպատակը:



Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել բանակումի մասնակից Հ.Մ.Լ.Մ.ի բոլոր չքջաններուն, որոնց անդամները բանակումին մթնոլորտը հարստացուցին իրենց զանազան փորձառութիւններով, մշակոյթներով եւ խանդավառութեամբ:

Շնորհակալութիւն բոլոր օժանդակներուն, որոնք հեռուէն կամ մեր կողքին նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնեցան յաջողցնելու այս բանակումը:

Վերջապէս, սրտագին շնորհակալութիւն Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի վարչութեան, որ ճիգ չխնայեց որեւէ ժամանակ մեր որեւէ կարիքին հասնելու: Դուք էիք, որ ընդառաջեցիք մեր բոլոր պէտքերուն եւ մեծապէս նպաստեցիք այս բանակումին յաջողութեան:

Կոչս դարձեալ կ'ուզեմ մեր հարազատ սկաուտներուն: Ինչպէս արդէն վարժ էք, մրցակցութիւնը խաղերու միջոցով անպակաս արժանիք մըն է սկաուտական կեանքին մէջ: Սակայն, կ'ուզեմ շեշտել թէ մրցակցութիւնը երկրորդական է: Բանակումի բոլոր խաղերուն եւ աշխատանքներուն հիմնական նպատակն էր ոգեւորել ձեզ եւ ձեր մէջ արժատացնել կապեր, որոնք հիմքը պիտի դառնան Հ.Մ.Լ.Մ.ի ապագայ գործունէութեան: Այս իրականութիւնէն վստահ եմ, որովհետեւ մենք ալ ձեզի նման եղած ենք անդամներ ու մասնակիցներ մեր առաջին համա-Հ.Մ.Լ.Մ.-ական բանակումին եւ քայլած ենք նոյն ճամբով: Կը հաստատեմ, որ այս բանակումին յաջողութիւնը հիմնականօրէն կը պարտինք խմբապետական կազմին եւ գործադիր մարմինի անխախտ կապերուն, իսկ մեր ամուր կապերն ալ կը պարտինք տարիներ շարունակ բանակումներու եւ Հ.Մ.Լ.Մ.-ական այլ գործունէութիւններու գործակցութեան եւ միասնական իրագործումներուն:

Արլութեան Ա. կարգս ստացած եմ եղբ. Ֆէտի Խաժակ Գաղանձեանէն, իսկ երէցական «Վկայեալ» կարգս՝ եղբ. Վաչէ

Նաճարեանէն եւ քոյր Թալին Օրտողեանէն: Այնուհետեւ, ճամպորիի փորձառութիւնս շահած եմ եղբ. Օչին Փիրումեանէն եւ եղբ. Մանուկ Քէօշկերեանէն: Իսկ եղբ. Կարպիս Գապասպալեանին կը պարտիմ «Արարատեան» կարգս ու խմբապետութիւնս: Վարչութեան անդամ ըլլալս եւ միութենականութիւնս եղած է շնորհիւ հանգուցեալ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին: Եւ վերջապէս, Հ.Մ.Լ.Մ.-ական ըլլալս կը պարտիմ եղբ. Հրաչ Միսեռեանին: Եղբայրներ Գարլոս Սէֆէրեան, Արմանտ Քիյինեան, Դաւիթ Յակոբեան եւ Տիրան Վահրատեան ինծի սորվեցուցիք ըլլալ լաւատես՝ բոլոր դէպէրու բարիքը տեսնելու ձեր կարողութեամբ: Դուք բոլորդ, եղբայրներ Մոսիկ Թոփուզեանի, Վահէ Թանաչեանի եւ Վիգէն Աւագեանի կողքին, դարձած էք օրինակելի տիպարները հարիւրաւոր սկաուտներու՝ ներառեալ մեզի, երկար տարիներու ընթացքին:

Կ'ուզեմ վստահեցնել ձեզի սիրելի սկաուտներ, թէ ձեր տարած աշխատանքները եւ հաստատած կապերը ապարդիւն չեն: Անոնք կը ներկայացնեն Հ.Մ.Լ.Մ.-ի նպատակին անմար ջահը, եւ այս պահէն իսկ ձեզի կը փոխանցենք այդ ջահը, որպէսզի ձեր կարգին շարունակէք երթը եւ զայն փոխանցէք յաջորդող սերունդներուն: Կը խորհինք, թէ պիտի դառնաք արժանի յանձնառուներ ձեզի տրուած այս իրաւունքին: Շարունակեցէք երթը ձեր անձնական երազները իրականացնելով, եւ թող Հ.Մ.Լ.Մ.-ի սկաուտական դաւանանքը դառնայ ձեր մշտական ուղեցոյցը:

Վերջին հարահանգս ձեզի, իբրեւ համա-Հ.Մ.Լ.Մ.-ական 12-րդ բանակումի ընդհանուր խմբապետ, խատօրէն արգիլուած է ձեր այս եռանդը կորսնցել. մի վախնաք մեծ երազելէ. Երազելը շատ լաւ բան է, սակայն պէտք է զգուշանալ անոնցմէ, որովհետեւ...երբեմն-երբեմն երազները կրնան իրականանալ:



ՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՏՈՒ ԿԱԶՄ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի պատասխանառու կազմը բաղկացաւ հետեւեալներէն.-

Եղբ. Պողոս Մահպուայեան (Ֆրանս)- Ընդհանուր խմբապետ

Քոյր Շարլին Կիօզալեան (Արեւմտեան Մ.Ն.)- Փոխ խմբապետուիի

Եղբ. Գէորգ Օհանեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.)- Փոխ խմբապետ

Գործադիր կազմի անդամները հանդիսացան.-

Եղբ. Արամ Գայսէրեան (Արեւելեան Մ.Ն.)- Ընդհանուր հերթապահ

Եղբ. Յովիկ Փամբալեան (Սուրիա)- Քարտուղար եւ տեղեկատուական արհեստագիտութիւն

Եղբ. Աւագ Կարապետեան (Քուէյք)- Մթերք եւ մթերանոց

Քոյր Թշամար Քէշիշեան (Լիբանան)- Սկաուտական յայտագիրներ

Եղբ. Գրիգոր Տուղարեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.)- Երթեւեկ եւ շրջապտոյտներ

Քոյր Մենար Պոյամեան (Միւնիխ)

Եղբ. Ակուսին Անալեան (Հարաւային Ամերիկա)


ՆՇԱՆԱԲԵԱՆ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ ԵՒ ՔԱՅԼԵՐԳ


Բանակումը ունեցաւ իր նշանաբանը («Խորխստ, խիզախ, միշտ պատրա՞ստ»), խորհրդանշանը (հեղինակ՝ Եղբ. Յովիկ Փամբալեան, Սուրիայէն) եւ քայլերգը (խօսք եւ երաժշտութիւն՝ Եղբ. Ակուսին Անալեանի, Հարաւային Ամերիկայէն: Գաշնաւորում՝ Եղբ. Յարութ Երեցեանի՝ Սոտերքալիա: Մեկնաբանութիւն՝ Եղբ. Համօ Երեցեանի, Սոտերքալիա):

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՊԵՏԵՐՈՒ ԱՌԱՋԱՑ ՀԱՆԴԻՓՈՒՄ

Բանակումէն մէկուկէս ամիս առաջ, Կիրակի, 4 Յունիս 2023-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէյրութի ժա-





մանակացոյցով), համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի խմբապետական կազմը առցանց հանդիպում մը ունեցաւ բանակումի մասնակից շրջաններու պատվիրակութիւններու պետերուն հետ: Հանդիպումին ներկայ գտնուեցած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղը. Պաչէ Նաճարեան, Կեդրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչներ՝ եղբայրներ Ֆետի Խաժակ Գազանձեան, Օշին Փիրումեան և քոյր Թալին Օրտողլեան: Բանակումի ընդհանուր խմբապետ եղը. Պօղոս Մահպուպեան եւ փոխ խմբապետներ քոյր Շարլին Կօօզալեան եւ եղբայր Գէորգ Օհանեան հանդիպումի մասնակիցներուն ներկայացուցիխն բանակումին ընդհանուր յայտագիրը եւ գործելաձեւը: Պատուիրակութիւններու պետերը, իրենց կարգին, կատարեցին լուսաբանական հարցումներ, որոնց պատասխանեց խմբապետական կազմը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՅԱԽԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ

ՈՂՋՈՅՆՆԵՐ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

ԲԱՆԱԿՈՒՄՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Բանակումին եօրներորդ օրը, Հինգշաբթի, 27 Յուլիսին, Լիզանին եերտսական գործողութեան 40-ամեակին նուիրուած յեղափոխական երեկոյին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի սկաուտները հաճելի անակնկալ մը իրամցուցիխն համա-Հ.Մ.Ը.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի մասնակիցներուն, երբ առցանց զանոնք ողջունեցին Հ.Մ.Ը.Մ.ական կանչով եւ յատուկ խօսքով:

45-ԱՄԵԱԿ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումը նշեց 45-ամեակը համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու: Արդարեւ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին բանակումը տեղի ունեցած է 1978-ին, Քալամոս, Յունաստան: Երկրորդ բանակումը կատարուած է երկու տարի ետք, 1980-ին, Քլամար, Ֆրանսա: Երրորդը՝ վեց տա-



Իի ետք, 1986-ին, Լոնտոն: Խսկ չորրորդ բանակումը՝ չորս տարի ետք, 1990-ին, Այա Մարինա, Յունաստան: Մինչեւ 1990 բանակումները կոչուած են համագաղութային բանակումներ: Հայաստանի վերանկախացումէն ետք անոնք ստացած են համա-Հ.Ա.-Ը.Մ.ական անոնք և չորս տարին անզան մը կատար ւած են Հայաստանի մէջ, առաջին երկութը՝ Քիւրականի (1994) և Աղաւնաձորի մէջ (1998), իսկ մնացեալ վեց բանակումները (2002, 2006, 2010, 2014, 2018, 2023)` միուրեան սեփական բանակավայրին մէջ, Քիւրական:

ԱՐԴԻ ԱՐՀԵՍՏԱՎԳԻՏՈՒԹԻՒՆ

Համա-Հ.Ա.-Ը.Մ.ական 12-րդ բանակումի մասնակցութեան արձանագրուելու համար, Կեդրոնական Վարչութեան տեղիկատուական արիեստագիտութեան յանձնախումբին կողմէ պատրաստուեցաւ յատուկ կայրէջ մը՝ [homenetmen.org/phjApp](https://phj.homenetmen.org/phjApp) հասցեով, ուր այցելելով մասնակիցները ամբողջացուցին իրենցմէ պահանջուած տուեալները, որոնք անհրաժեշտ սոուզումներէ ետք անցան միուրեան տեղեկութիւններու շտեմարանը՝ Database-ը:

Պատրաստուեցաւ բանակումին յատուկ երկլեզո՞մ՝ հայերէն-անգլերէն web Applicationով՝ <https://phj.homenetmen.org/hy/> հասցեով, նպատակ ունենալով մասնակիցներուն աղիթ տալ մօսէն հետեւելու բանակումի յայտագիրին եւ ճաշացուցակին: Application-ին մէջ կարելի էր բաժնեկցիլ ու ներբեռնել բանակումին վերաբերող նկարներ եւ տեսանիթեր:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՑԱՆՑԵՐ

Բանակումին ամբողջ ընթացքին, ծնողներ, հարազատներ եւ բարեկամներ կարողացան ընկերային ցանցերու շնորհի (Facebook, Instagram, Youtube, TikTok) հետեւիլ բանակումին լուրերուն եւ նկարներուն: Կատարուեցան նաև ուղղակի ափողումներ: Աշ-





Խատանքը ղեկավարեց Կեդրոնական Վարչութեան տեղեկատուական արհեստագիտութեան պատասխանառու եղբ. Շանք Տէմիրճեան:

ՆԿԱՐՆԵՐ, ՏԵՍԱԲԻԹԵՐ

Բանակումին պաշտօնական նկարները նկարեցին լուսանկարչներ Գրիգ Գրիգորեան, Տիգրան Խոկենտրեան և Կարէն Մորոսեան: Անոնք յանախ օգտագործեցին անօդաչու թռչող սարքեր՝ ընդհանուր համայնապատկերներ և բարձրութենէ նկարուած նկարներ նկարելու համար:

«Երկիր Մետիա» պատկերասփիւսի կայանը իր առօրեայ լրատուութեամբ, ամէնօրեայ տեսանիրերով անդրադարձաւ բանակումի աշխատանքներուն:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵՎՆՔ

Տանօրեայ բանակումի լեռացքին, գործադիր խմբապետական կազմը ամէն օր կատարեց ժողովներ և առօրեայ դրութեամբ հանդիպումներ ունեցաւ պատուիրակութիւններու պետերուն հետ: Հանդիպումներուն քննարկուեցան օրուան աշխատանքները և փոխանցուեցան յաջորդող օրուան յայտագիրն մանրամասնութիւնները:

ԲՈՒԺԱՐԱՅ

Բանակումին ամբողջ տեսողութեան բանակավայրին մէջ մնայուն ներկայութիւն եղան երկու քիշիկներ, բուժեղբայր մը և բուժքոյր մը, որոնք մօտէն հետեւեցան սկաուտներու առողջապահական հարցերուն և կատարեցին բժշկական անհրաժեշտ խնամք:

ՀԵՌԱՋԱՅՆ ԵՒ ՀԱՍԱՅԱՅ

Պատուիրակութիւններու անդամական թիւերուն համաձայն, My Team լնկերութիւնը քջջային հեռածայնի ձրի զիմետը (sim card) տրամադրեց բոլորին: Բանակավայրէն ներս My Team ունեցաւ իրեն յատուկ ամրէնը:


SCOUT SHOP

Բանակավայրի երկու ճաշարաններուն միջեւ գտնուող տարածութիւնը տրամադրեցաւ scout shop-ին, որ օրուան կարգ մը ժամերուն վաճառեց ուսելիքներ և յուշաթրւներ:

ԲԱԺՆՈՒԱԾ ԻՐԵՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի մասնակից սկաուտներուն բաժնուեցան երկու թի-շըրք, զիսարկ, փողկապ, սեղմիչ, պէճ, բանակումի NFC ապարանջան, պայուսակ, անուանաքարտ և ջրաման:

Բանակումի աւարտին իրաքանչիւր մասնակից ստացաւ մասնակցութեան հաստատագիր:



«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՄԻՈՐԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Աւարտելէ ետք «Արարատեան» կարգի տեսական եւ գործնական բաժինները, մասնակից խմբապետները, կիրակի, 22 Յուլիս 2023-ին, առիթը ունեցան

հանդիպումի մը, Բիւրականի «Ամբերդ» հիւրանոցի սրահին մէջ:

Վերջին հանգրուան հասած 34 խմբապետներէն 22-ը կարողացան մասնակցիլ այս հանդիպումին, ուր ներկայացուցին գործնական հանգրուանին իրենց կիրարկած ծրագիրներուն մանրամասնութիւնները: Մրագիրներուն շուրջ եղան աշխոյժ եւ շինիչ քննարկումներ: Տեղին է նշել, որ Հայաստանէն դուրս գտնուող վեց խմբապետներ հանդիպումին միացան առցանց եւ իրենց կարգին ներկայացուցին իրենց ծրագիրները:

Հանդիպումին ներկայ էին «Արարատեան» կարգի կազմակերպիչ յանձնախումբէն քոյր Նարէ Խլդաթեան (Հայաստան) եւ եղբայր Ակուսմին Անալեան (Հարաւային Ամերիկա), իսկ Լիբանանէն առցանց իր մասնակցութիւնը բերաւ քոյր Արտա Զէյթունեան: Ներկայ էին նաև Կեղրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչները՝ քոյր Թալին Օրտողեան եւ եղբ. Ֆէտի Խաժակ Գաղանճեան:

Միօրեայ այս հանդիպումը յաւելեալ առիթ մը ընծայեց խմբապետներուն մօտէն ծանօթանալու իրարու (նկատի





առած, որ դասընթացքին մեծ բաժինը կատարուած էր առցանց): Անոնք գնահատեցին գործադրուած բոլոր ծրագիրները, որոնք օգտաշատ եւ շահեկան կը նկատուին ո՛չ միայն կրտարկուած շղթանին, այլև՝ ուրիշներու համար:

Յայտնենք, որ կարգին մասնակիցները «Արարատեան» կարգի իրենց փողկապներն ու նշանակները ստացան համաձ.-Մ.Ը.Մ.-ական 12-րդ բանակումին փակման հանդիսութեան, 29 Յուլիսին, դառնարով միութեան սկաուտական բարձրագոյն կարգը ստացած չորրորդ սերունդը:



«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴԸ

Յարութ Տէր Ներսէսեան, Նորա Վերիլեան, Կարինէ Սարգիսեան, Նենսի Խաչատուրեան (Սուտերեկիա-Շուկտ), Մարտր Նարքաշեան, Անյշ Տէր Յակոբեան, Նիքոլ Անահիտ Աւագեան, Սոֆիա Զանիկեան, Արթին Սանկուէտովչէ Փափազեան (Հարաւային Ամերիկա), Աննա Աւագեան (Լոնտոն), Յակոբ Գասպարեան (Ալմելօ), Սեւակ Նազարեան, Նարեկ Հաննէեան, Գեորգ Օհաննեան (Հայաստան), ճնն Պանտէք, Լիսա Փանոսեան, Մանէ Շահպազեան, Նարեկ Կուշերեան, Ռ-ոնի Հայրումեան, Սարին Փանոսեան, Սերոր ճէճեւան, Շահան Արմաճեան, Վաչէ Հարամեան, Վահէ Օհաննեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Արազ Չերշեան, Կասիա Էժիտեան, Սիմոն Տէրտէրեան, Արար Խօշեան, Լորի Պիլարեան, Գառնի Քէնտիրմեան (Լիբանան), Յակոբ Ուրիշիկեան (Սուրիա), Ալիսիա Աղազարեան (Գանատա), Վիգէն Մինասեան (Յունաստան), Սեւան Պազարմեան (Աւստրալիա):

Վիգէն Մինասեան Աթ-Էնք

Եօր տարեկանը ամբողջացուցած, ծնողին ճեղքը բռնելով Ֆիքսի ակումբը մտայ: Կը յիշեմ շատ պատիկ-ներ կային, ծանօթ ու անձանօթ դէմքեր: Երեխաններ դեղին շապիկներով, եռագոյն փողկապ մը իրենց վիզին, կը վագէին, կը խաղային:

- Ո՞վ են ասոնք, հարցուցի ծնողին:
- Ասի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքն է, ասոնք գայլիկ-արծիկներ են, պատասխանեց հայր:

- Ես ալ կ'ուզեմ գայլիկ ըլլալ, ըսի հօրս, եւ այդ օրէն մինչեւ օրս, 32 տարիէ ի վեր, այս ընտանիքը պատուելով եւ յարգելով, եռագոյն փողկապը կը կրեմ վիզու:

Դաստիարակուեցայ ու կը դաստիարակուիմ, եւ ինչպէս կ'ըսէ մեր նշանաբանը՝ կը բարձրանամ ու կը բարձ-

ԾՆՈՐՀԱՎԱԼՈՒԹԻՒՆ

րացնեմ. վիհմակ, խումբ, փաղանգ, փոխ խմբապետ, խըմբապետ: Ամէն կարգէ գիտելիքներ ստանալով բարձրացայ Բ. կարգ. Ա. կարգ. «Վկայեալ» կարգ եւ ահա օրը հսաւ «Արարատեան» կարգին: Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետի մը դաստիարակութեան, գիտելիքներու բարձրագոյն կարգը:

Երկու տարուան աշխատանք եւոր արժանացայ «Արարատեան» կարգի փողկապին ու մետալին, զոր 29 Յուլիս 2023-ին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի աւարտին, պատիւը ունեցայ ստանալ Կեղրոնական Վարչութեան աստեապետ եղբայր Վաչէ Նաճարեանի կողմէ:

Այս տարի Յունաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակը կը նշուի: Ի՞նչ գեղեցիկ զուգադիպութին, որ այս տարի ստացայ «Արարատեան» կարգի վկայագիրս: Շնորհակալ եմ բոլոր անոնց, որոնք կողքին են եւ բոլոր անոնց, որոնք վստահեցան ինձի:



Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ Ի ՍՊԱՍ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Արցախեան ցաւալի իրադարձութիւններէն ետք, Արցախի բնակիչներուն բռնի տեղահանութեան առաջին իսկ ժամերէն, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ վարչութեան որոշումով եւ անդամներու աշխոյժ մասնակցութեամբ, Հ.Մ.Լ.Մ. Ծովեյաւ մեր հայրենակիցներու անմիջական պահանջներու՝ տաք հագուստի եւ մաքրութեան իրերու հաւաքման եւ տրամադրման գործին: Ակսաւ արցախցիներու մեծ



հոսք դէպի Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ գրասենեակ, ուր անոնք ստացան տաք հագուստ, անկողնային պարագաներ եւ մաքրութեան իրեր: Հաւաքուեցան շուրջ 450 ընտանիքներու տրեալներ, ինչ որ հետագային փոխանցուեցաւ Արցախի օժանդակութիւնը համակարգող յանձնախումբին:

Հայաստանի Հայ Օգնութեան Միութեան՝ ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան հետ, 29 Սեպտեմբերին, շուրջ 100 արկդ ապրանք տեղափոխեյաւ Գորիս, որ այդ օրերուն տեղահանւած հայրենակիցներու առաջին հանդրուանն էր:

Միաժամանակ աշխատանքներ սկսան Արցախի Մեկուսի շրջանէն տեղահանուած բոյրերու եւ եղբայրներու հետ կապեր հաստատելու, իրենց կարիքները ճշգելու եւ ըստ կարելի-ութեան օժանդակելու համար:

Աշխատանքը աւելի լայն թափ ստացաւ Հ.Մ.Լ.Մ.-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ֆողովին ընդունուած բանաձեւերու լոյսին տակ: Այս առիթով հիմնուած «Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախ հիմնադրամ»ի նպատակներէն մեկնելով, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Արցախի Մեկուսի շրջանի աստիճանաւորներու հետ աշխատանքային հանդիպում:

Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեանի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ վարչութեան եւ Արցախի Մեկուսի շրջանի վարչութեան միացեալ նիստ, ուր քննարկուեցան յառաջիկայի միացեալ աշխատանքները եւ ծրագիրները:

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ վարչութիւնը փոխանցեց, որ Արցախի Մեկուսի շրջանի վարչութեան կը տրամադրէ գրասենեկային կահաւորումով սենեակ մը լր կեդրոնին մէջ:

Իսկ 29 Հոկտեմբերին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ իմմբապետական Խորհուրդին նախաձեռնութեամբ, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրին մէջ տեղի ունեցաւ 150 հոգինոց միացեալ գործունէութիւն, որուն նպատակն էր Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Բ եւ Արցախի Մեկուսի շրջանի սկաուտներու միասնական աշխատանքը, մտերիմ մթնոլորտի մէջ, Արցախի սկաուտներուն համար ջերմ եւ հարազատ մթնոլորտի ապահովում, ինչ որ իրականացաւ «Հ.Մ.Լ.Մ.-ի Արցախ հիմնադրամ»ի միջոցներով:



Խմբագիր: Վիքեն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Ցոլեր Փանոսեան, Ռաֆֆի Միւլահեան, Միւզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Միլվա Ալավերտեան:

Վարչական կազմ: Արօ Մոսիկեան, Միլվա Սաղըրեան, Վարդուկ Ֆրոնզեան, Վարդան Քսանիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիլէնեան:

Էջալրում եւ ընդհանուր ձեւաւրում: Արօ Պալեան, Կողբի պատրաստութիւն: Y Concept International, Գրաշարութիւն: Շողիկ Պոյամեան, Տպագրութեան պատրաստութիւն: Photogravure Paklayan, Տպագրութիւն: Համազգայինի «Վահէ Ակրեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

Քաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասմի աշխարհի 26 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ նեղուած է՝ լիբանան 150,000 լ.ռ. Միջին Արևելեան եւ Եւրոպական երկիրներ 65 Տ. Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 Տ.: Լիբանանի մէջ թէրթին հատականադի սակն է 25,000 լ.ռ.: Յրում: «Մարզիկ»ի ցրումը լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թէրթը կարելի է սամալ նաեւ «Համազգային»ի գրախանութեն: Լիբանանի դուրս թէրթը կը սացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ. Կենդրունական Վարչութեան կողմէ - Հասցե: «Սեւան» շենք, թիւ 77 փողոց, թիւ 4 հասուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

